



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

U571 mla

Truppen - 8/2/1919

891.99

U-39









№ 5950  
ՌԱԲՐԱԿԱՆ ԱՄԷ

ՍԷՅԼԱՆ

Сейла́н Тошмо-  
фудонг.

ՀԱՅՐԱ

ՖԻՐԱՏ

(Տասնեւութերորդ դարի սկիզբներից մի անցը)

Անգլատաղած վշտի համար ողբալը,  
նոր վիշտ առաջացնելու ամենաու-  
ղիղ հանապարհն է:

Ջեֆալի


БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОЧЕДОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԱՐՄԷՆ» ԲԵԿ. 1904 թ.

Մաղաքեան փողոց № 15

(60)



91.99  
U-39



6 NOV 2011

ԳԽԿ

5950

891.99

4-39

Ս Է Յ Լ Ա Ն

# ՀԱՅԹԱ-ՅԻՐԱՏ

(Տասնհուժեքորդ զարի սկիզբներից մի անցը)

«Անյայտացած վշտի համար ողբալը,  
նոր վիշտ առաջացնելու ամենաու-  
ղիղ ճանապարհն է»  
Ջեֆապիտ

Արտատպում «Տարազից»

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ԹԻՖԼԻՍ 1904 թ.

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Մաղաթեան փողոց № 15  
(60)



Дозволено цензурою, С. Петербургъ, 26 Апрѣля 1904 года.



59570-66

## ՀԱՅԹԱՓԻՐԱՏ

Տասնեութերորդ դարի սկիզբներից մի անց

Ա.

Հայրա-Ֆիրաւ փառաւ

— Սարաֆ, դու ստիպուած ես ամենայե-  
տին իսլամի մօտն անգամ ստել, մինչև շո-  
ղոքորթութեան սահմանները մտնել, քանի որ՝  
քրիստոնեայ ես, բարեկամ, — հեգնական  
ժպիտով ասում էր Հայթա-Ֆիրասն՝ իր դէմ  
ձերադրած Յակոբ աղային, սևորակ բեխերն  
ոլորելով, — ես ինձ մի բոսլէ երեակայում եմ  
քո դիրքով, չեմ պահում, սարսափում եմ,  
դու միշտ մահը ծոցդ առած՝ ինձ նման  
բռնակալների դռներն ես շրջում, — սարաֆ  
Յակոբ, փոփ, — ասում է բղբալի Ձիան, — սա-  
րաֆ փոփ. գոռում է բարեկամս, ենիչերի  
Ապտուլլահ փաշան, — գեաւոր փոփ, — սպառ-  
նագին ձեռը սրի դաստապանին դրած՝ մորն-  
չում է Դէլի Իբրահիմ փաշան. — դու ստիպ-  
ուած ես, սարաֆ, այդ բոլոր քաղցած շնե-



րին կերակրել, ապա՝ մինչև իսկ դատողութիւնդ դադելով, սեին սպիտակ, սպիտակին սև ասել. եթէ չ'ասես, եթէ չըստես, եթէ չըդատես նրանց հայեցակէտով՝ մի ակնթարթում կըտարածուիս ռաներին տակ արիւննաքամ եղած, փոխանակ կարեկցութեան՝ միմիայն ծիծաղ շարժելով:

— Ձեմ ժխտում ձեր վսեմութեան ասածը, — պատասխանեց սարաֆն երկիւղած դէմքով, — սակայն՝ թող ձեր վսեմութիւնն բարեհաճի իր նւաստ ծառայի խոնարհագոյն կարծիքն առնել, կարգալ նրա, ձեր հայեացքին անարժան, սրտի խորերում դրոշմւած այն բարձր զգացումը, անկեղծ հաւատարմութիւնը, որ տարածւում է ն. ն. վսեմութիւն՝ Հայթա-Ֆիրատ — փաշայի գարշապարներին ներքոյ: Ձեր ծառան, էֆէնդիմ, անպայման հաւատարիմ է իր վսեմափայլ տիրոջ, իր մէջ չէ անուցանում սարսափախառն երկիւղը քաջարի պետին ներկայանալու ժամանակ:

— Սարաֆ, ժպտալով ընդհատեց Հայթա-Ֆիրատ, ձեռն ոսկեզօծ սրի պատեանից չըհեռացնելով, — թէ ռըչափ անկեղծ են քո զգացմունքներն ինձ նկատմամբ, — ապացուցւած են, — նոր փորձերի կարիք չեմ զգում... բայց՝

ես ուզում էի քեզ ծանօթացնել քո սրտի սարսափի հետ, որից դու խոյս կըտաս, ինչպէս խոյս կըտայ մահմեդական կիներ իր սիրած քաջի ուրուականից: Միթէ, Յակոբ, դու չես լսում քո ազգակիցներին հասած փառանքերը մանաւանդ նրանց եմ յիշում, որոնք միայն սուլթանին էին ծառայում կոյր հաւատարմութեամբ, միթէ մինչև այսօր չեն կոտորւում, կողոպտւում քեզ նման բարեմիտ մարդիկ մեզ պէս արիւնավառ փաշաների ձեռք, փաշաներ, որ սուլթաններն իրար ետեից կախելով ջէնցէք են ուղարկում: Է՛հ, Յակոբ, իրաւ՝ ես մահմեդական եմ... մեծ վէղիր եմ, տէրութեան խոշոր յենակետերից մինն եմ, սակայն՝ չըզիտեմ ծածկել իմ զայրոյթը մեր իսլամների մի շարք ժառանգական տգեղութիւնների դէմ. այս իսկ տեսակէտով՝ վեր արտադրած իմ մէջ անհամար քստմենիլի անցքեր՝ խօսում եմ... — Ի՞նչ ենք մենք, — հարց կըտամ ինքս ինձ, — ի՞նչ է օսմանեան կայսրութիւնը. — ազգերի վիժուկներով առողջացած, քաճառներ (բորենի) մի հզօր՝ մարդախանձ վոնմակ, — լսում եմ սրտիս խորքերից... Սուլթանը պաշտօն է ծախում մեծ քաֆթանների, նրանք էլ առանց խղճահարութեան, յօշոտում են կեն-



դանի մարդկանց, կողոպտում, սպանում. կլինն ու որդին խլում են անգորից՝ միայն այն պատճառով, որ դայիր-միսլիւմ (ոչ մահ-մեղական) են թշառականները... Ձեն մտածում՝ թէ նրանք են մեզ կերակրում իրանց վար ու ցանքով, նրանք են հագցնում մեզ իրանց ընտիր գործւածքներով, անկւածնե-րով, նրանք հայթայթում ամենակարեւորից մինչև ամենաչնչին, մեզ անհրաժեշտ իրերը: Գիտե՞ս, Յակոբ, ես կարգացած եմ մեր և ձեր ազգերի պատմութիւնները, սկսած Մահ-մէղի օրից մինչև ցայժմ՝ այսպէս է եղել մահմեդականը ձեզ հետ և պիտի լինի:

—Այդ հանգամանքները քննել, վսեմա-փայլ տէր, տրուած է հասարակ մահկա-նացունների, եթէ իմ հօր տէրս շօշափում է անլուծելի հարցեր, նորին վսեմութեան հար-ցասիրութիւնը գտնում եմ կորովի, փափուկ, զգայուն սրտի կարեկիր թռիչքների մէջ:

Հայթա—Ֆիրատ կարծես շիկնեցաւ այս ոսկեգօծ շողօրութիւնից, ագնիւ մարդու նման գովեստից խոյս տալ ուզելով՝ չիպուղը դատարկեց, կլապիտոն անկւած ապայի (վե-րարկու) քղանցները ժողովից ու շարունա-կեց:

—Անցնենք միւս կէտերին, սարսֆ. մեր

կայսրութեան ապագան մռայլամած է, չեն կարող մեր խալիֆներն ինքնակամ գործել, շրջապատողները դէպի չարն առաջնորդելով փնասում են հասարակաց շահերին: Իսկ մենք՝ Ննիչերի, Դէլի, Հայթա մեր ուզած ձևի կաց ու նիստով, անկարգութիւններով, եսերով փչացնում ենք ամեն տեսակ արգա-սաւոր ձեռնարկութիւններ, խողի նման ոչ միայն բերքն՝ այլև ծառի արմատներն ենք խրամատում, օրէնք, մարդկային խիղճ՝ ոտ-նատակ տւած, մեր բարձն ու անկողինն արիւնով ողողում... Մենք ժանտախտն ենք Ասիայի, եթէ մի հօր ձեռք չ'ուղղէ մեր անել ուղին, մենք պիտի մեզ հետ ոչնչա-ցնենք ենթակայ, ստորացած ազգերին... Ոտից ց'զլուխ շողախուած ենք աղմի մէջ, ուրիշի արիւն-քրտինքը լափել ժառանգական իրաւունք տրուած է մեզ. միւսնոյն հին սո-վորութիւններով էլ մեծացնում ենք մեր որդիներին, երբէք բարեփոխութիւն, արդա-րութիւն, անհատական իրաւունք մուտք չըպիտի գործեն մեր ապերջանիկ երկրում, ուր օրը նոր, չարիքը նոր է՝ բայց՝ ոչ նո-րութիւն, ուր արշալուստից առաջ զարթնում են բռնակալների կրքերը:

—Երևի մի բանի գաւաթ աւելի կըլա-



նել է մեր քաջ Հայթան, — մտածում էր սա-  
րաֆն՝ անթարթ փաշային նայելով, — այո,  
աչքերը, շարժումները, ձևերն յայտնում են  
այդ: Մաստիքան մարդասէր է շինել թիրախին:

Հայթա փաշան տաքացած էր, մի քա-  
նի ժամ խօսելով նկարագրեց, պատկերացուց  
Տաճկաստանն իր կառավարութեամբ, կեդե-  
քիչ զինւորականներով, մինչ դեռ սարաֆը  
մտածում էր նրա յայտնած մտքերի մասին,  
ինքն իրան հարց տալով, — կարո՞ղ է դուռա-  
նի որդին այսքան մաքուր տեսնել, — միթէ  
այս յանդուգն ախոյեանն, երկաթապատ աս-  
պարի տակ, մարդասէր սիրտ, ազնիւ զգա-  
ցումներ ունի: Չլինի՞ թէ սրա արեան մէջ  
խառն են քրիստոնէական արեան կաթիլներ,  
որ ազատ և անաչառ նշաւակում է բոլոր  
հակամարդկային անբարոյական գործերն ու  
կըքերը: Գուցէ այս վերջինը լինի... այո,  
նրա արտաքին երևոյթի վրայ անգամ կան  
հետքեր... Դր փաշան միայն մի կին առնելով  
է բաւականանում, այն էլ մի այնպիսի կին՝  
որ ամուլ է, որ եօթ տարւայ ընթացքում  
որդեճնութեան յոյս յայտնած չէ: Մեծա-  
զրաւական չէ և նրա անժխտելի հայասի-  
րութիւնը: Տասը տարին անցաւ, որ բնակ-  
ւում է կարնոյ մէջ, մինչև այսօր ոչ ոքին

ֆրասած, ոչ մի վայրագ եղեռի հեղինակ չէ  
եղած: Ահարկուն պատերազմի՝ հեզ գառն  
է մեզ համար, մեծ-վեզիր գոյով, սիրում է  
ինձ պէս, դեռ ևս ստոր աստիճան քրիստո-  
նեան տեսնիլ իր մօտ նստած, խօսիլ միայն  
խղնի մասին:

— Ո՛հ, — շարունակում էր սարաֆը, — մի  
մեծ գաղտնիք է ծածկուած արտաքուստ  
վայրագ, ներքուստ բարեբարոյ՝ Հայթա — Թի-  
րատի մէջ. այդ իր գեղեցիկ և մեղամաղձոտ  
զէմքն է հաստատում. մարդ առաջին ան-  
գամ տեսնելու ժամանակ, ուզում է նրա հետ  
հայերէն խօսել. սրանք ապացոյց չէ՞ն նրա  
ծագման, նրա ցեղական ժառանգականու-  
թեան մասին...

Երկու ծառաներ ներս բերին արծաթ մա-  
տուցարանով նախաճաշիկ, երկիւղած լուռ-  
թեամբ դրին նրբակերտ եռոտանու վրայ՝  
բազմոցի առաջ և խորին ակնածութեամբ  
դուրս ելան. Հայթան ոտքի ելնելով մի վա-  
նակնեայ սրահ բերեց ջինջ մաստիպալով  
(օղի) լի, մի բաժակ լեցուց, սարաֆին նա-  
յելով՝ մրմռաց:

— Յակոբ, իմ հէքիմն (բժիշկն) անցած  
օրն ասում էր, օղին զրգուում է ստամոքսի  
նեարգերը, փչացնում մարսողական հիւթերը,



այդ ես հաւատացած եմ փորձով, բայց ա-  
խորժում եմ ցաւալի խորհուրդներս սրա-  
նով ողողել, լրջութիւնը վանել, մի շարք  
բաների մասին չըմտածել, այսօր մոռանում  
եմ արբեցութեամբ, սակայն զարթելու ժա-  
մանակն աւելի ուժգին եմ յիշում... Էհ,  
բարեկամ, այս ձևով հինգ վեց տարի է մա-  
շում եմ կեանքիս օրերը: Արբեցութիւնն  
անբախտութեան վիժուկն է, նա իր ենթա-  
կային առաջնորդում է զէպի տղամալի վհեր:  
Արբեցողը նայում է ցաւին հեգնութեամբ,  
վսեմ գաղափարին՝ ծիծաղով: Նրա կեանքը,  
պատիւը խոյս կրտան անզգալի կերպով, բայց  
ինքը կարծում է ապրել ալքօհօլի, ունայնու-  
թեան, վաղանցուկ երագների մէջ: Ես այդ  
բոլորը գիտեմ, գիտեմ և կըգործեմ...

Ֆիրատ փաշան խօսքն ընդհատելով՝ ի  
մի ունայ խմեց և, — սարսփ, — շարունակեց  
լուրջ կերպով. — չէ կարող լինել մի բանա-  
գէտ մարդ, որ սրա հետեանքն ըմբռնելով  
հանդերձ, գործածէ ընդ միշտ, եթէ տեա-  
կան վշտերով, մեծամեծ հոգսերով պաշար-  
ուած չէ նա:

— Ներեցէք համարձակութեանս, — միջա-  
մտեց Յակոբ աղան. — գործածելն աւելի վնաս-  
սակար չէ, միթէ օղին կարող է վշտերը բուժել:

— Ո՛չ. նա վշտի դեղ չէ, այլ թմրե-  
ցուցիչ է:

— Միթէ վսեմաշուք տէրս ունի խորին  
վշտեր, թագուն անյայտ ցաւեր...

— Անվիշտ ո՛չ մի էակ չըկայ աշխարհում,  
ոչխարն անգամ վշտեր ունի, թէև նա միայն  
դարմանի պակասն ու գայլի երկիւղն է որո-  
ճում, ուր է մնում բնական մարդը. այո՛,  
Յակոբ, ես ունիմ շատ մեծամեծ վշտեր,  
վիշտ, որ մտած է ոսկրներին մէջ ու երբեք  
յայտնւելու չէ բարեկամների. նրանք կնքը-  
ուած են մահւան, մոռացութեան կնիքնե-  
րով. վիշտ, որ ծածկում է գոյութիւնս,  
վիշտ՝ որով սքօղւած է ընտանեկան շրջա-  
նակս: Ո՞ր միւնը թւեմ, սիրելի, առ, այս  
բաժակն էլ դուն առ, խմիր թշուառներին  
երջանկութիւն մաղթելով: Մի գարմանար,  
այո՛, փաշայական պերճ զգեստների տակ, գե-  
ղեցկութեան մէջ, հրամայողի սրտի խորքում  
ննջած են առիւծներ, թաղւած են արհաւ-  
րալից սև ուրաւականներ, որոնք նրա հան-  
գիտան են խռովում: Ափսոս, երբ անվիշտ  
մարդիկ խոյս կրտան լրջմտութեան շրջա-  
նից, երբ կըկամենան զառանցել էտէր գոր-  
ծածող դէրկիշի նման, վատնել կեանք, փող  
և ամեն ինչ:



— Ձերդ վսեմութեան բախտաւորութեան, էֆէնդիմ,—բարեմաղթեց սարաֆ Յակոբ. պարպելով բաժակը՝ փաշայի մօտ նստեցաւ նախաճաշելու, որովհետեւ Թիրատ խընդրած էր ազատ լինել իր մօտ:

Ծառաներն արծաթէ կոնք ու սափորով ներս եկան. մինը՝ ջուր մատուցանելու, միւսն անձեռոցիկ, նախ՝ տանուտէրն ապա՝ հիւրը լացնեցան, սկսեցին ուտել տապակած հաւից, թերահփ ֆէպլէպից և այլն կերակուրներից:

Թիրատ-փաշան ուտում էր ախորժակով և խօսում մերթ այս, մերթ այն հարցի վրայ, մինչև նախաճաշի վերջանալը: Մարաֆ Յակոբը պատեհ ժամանակի էր սպասում իր մտատանջութիւնը փարատելու, վասնորոյ՝ երկչոտ կերպով հարցրեց:

— Կարո՞ղ է ձեր ծառան այժմ լսել ձեր վսեմութեան հրամանը:

— Հա, լաւ յիշեցրիր. սարաֆ, ես քեզ կանչել էի...

— Այո, էֆէնդիմ, ՀԱՆՈՒՇ (տասնապետ) ադան եկաւ.

— Պիտի հարցնէի թէ ռքբան փող ունի՞մ այժմ քեզ մօտ...

— Ձեր վսեմափայլութիւնն այժմ ինձ մօտ ունի 30,000 ոսկի:

— Այդ փողերը միշտ մօտդ ես պահում, եթէ ոչ՝ տոկոսի կրտաս:

— Մօտս չեմ պահում, տուած եմ հայ վաճառականներին:

— Եթէ յանկարծ հարկաւորի՞...

— Իսկոյն կը վճարեմ:

— Ի՞նչպէս, քանի որ մօտդ չես պահում.

— Կէս ժամում կը ժողովեմ:

— Շատ լաւ, գիտեմ որ փողերս անկորուստ են քեզ մօտ, բայց՝ ուզեցի իմանալ՝ թէ ի՞նչ կ'անէիր՝ եթէ յանկարծ հարկաւորէր ինձ:

— Ո՛չ միայն ձեր վսեմութեան, այլև՝ քաղաքիս բոլոր փաշաների, պէյերի, աղաների փողերն ինձ մօտ են...

Այդ ես գիտեմ, սիրելի: Քեզ կանչել եմ նաև մի ուրիշ տոթիւ:

Թիրատ փաշար խօսքն ընդհատեց, գլուխը ձեռների մէջ առնելով կարծես ժրտածում էր, կամ կշռում իր ասելիք խօսքը:

— Քեզ կանչել եմ՝ Յակոբ, — մի անհանգիստ նայուածքով ասաց Հայթա — Թիրատ, — որ յայտնես ինձ՝ թէ ի՞նչ տեսակ պահասութիւններ, կարօտութիւն ունին քո ազգի աղքատները... քանի որ գիտես՝ փառք Աստուծուն, այս տարի սղութիւն է:



—Փաշան ողջ մնայ. — պատասխանեց մտատանջութիւնից թեթեացած սարափը գոհ դէմքով,—ձեր վսեմութիւնն արդէն գիտէ, որ հացը խիստ սուղ է, ալիւրի լիտրը կէս ոսկի է, անշուշտ աղքատներն անօթի են նրնջում... բայց՝ ձեր վսեմութեան պէս բարերարներ եթէ լինին...

—Ինձ մի գովիր,—միջամտեց Հայթա—  
Փիրատ յօնքը պոստելով,—և մարդ չըպիտի իմանայ իմ և քո մէջ անցած—դարձածը... լսում ես:

—Հնազանդ եմ էֆէնդիս...

—Առ այժմ,—ասաց փաշան ձայնը ցածափնելով, մի սև, մեծ քիսա սարափին յանձնելով,—ան այս, առանց իմ անունը տալու, ներկայացիր ձեր առաջնորդին, նրա խորհուրդով բաժանեցէք չքաւորներին: Այդ գումարն ինձ համար մի փարա չ'արժէ, հարամ փող է, Յակոբ. երէկ Զիա փաշայի տանը գումար (խումար) էին խաղում, ինձ շատ ստիպեցին, մի քանի անգամ վէզ գլորելով՝ բոլորը՝ շահեցայ. սակայն՝ ողջ գիշերը չըկարողացայ հանգստանալ, վճռեցի քո խելացի կարգադրութեամբ, ցրւել քո ազգի տնանկներին, որք՝ իբրև նեղւած ազգ, աւելի կարօտ են... վճռեցի և՛ յաւէտ չըխաղալ վէզը:

Սարափը զարմանքով ունկնդրեց, նա լսածին չէր հաւատում, մարդիկ կողոպտող, անխնայ սպանող ենիչերու մէջ մարդասիրութիւն... Հայթա—Փիրատ մարդասէր, հայասէր...: Այլայլած կերպով,—բարի,—շնջաց թիւն տակ՝ քսակը ծոցին մէջ տեղաւորելով,—ձեր վսեմութեան Աստուածահաճոյ հրամանը կըկատարւի ճշտիւ:

—Բայց մարդ պիտի չիմանայ, լսում ես, Յակոբ, իմ անունը չըտան:

Բ.

Հայրա—Փիրատի տունը

Էրզրում, որ աղաւաղութիւնն է Արծն-ըում, յոյները—Արծն,—որովհետև դժւար էր իր բուն անունով արտասանել և դեռ աւերուած չէր Կարնոյ Արծն քաղաքը, նրա շինութիւնից շատ ժամանակ յետոյ,—Կարնոյ բարեբեր դաշտի, հարաւ-արևելեան անկիւնում, Փալաքոֆան լեռանց ստորոտը շինուած էր յանուն Թէոդոս կայսեր Բիւզանդիոյ: Մեր պատմած ժամանակ, 1733 թ. դեռևս չըկային նրա մի քանի արւարձանները, որպիսիք են Նազիկ Զարը, Գէօլպաքը, Դէմիր-Այագ, Մահալա-Պաշի և այլն, այլ՝ բոլոր քաղաքը խիտ ազգաբնակչութեամբ



սեղմուած էր հնոյն Թէոդուպօլսոյ ստւար պարիսպներին մէջ: Եթէ արտաքոյ բերդին կային մի քանի փողոցներ, օրինակ՝ Կանա-նամ-փայ, Տանարի-քաղ, Մումնու-մանկայ. դրանք բրիտոնէից էին պատկանում: Դեռ ևս բերդում գտնուած ս. Ստեփանոսի մեծանիստ, կոփածոյ քարերով շինուած վանքն, ապա մայր եկեղեցին հայոց՝ Ուլի-նամի, ս. Յովսէփ, ս. Սարգիս փոքր մենաստանները մետրէսներ եղած չէին. թէև հայոց առաջնորդը նստում էր արտաքոյ քաղաքին՝ ըստ աւանդութեան, Սահակ Պարթևի կառուցած, օծած տաճարի մօտ, ուր ժողով կազմեց Հերակլ, ուր և հրաւիրւեցաւ Փառաժնակերտեցի եզրը....

Կարին, արևելքի լեցուն շտեմարանը, Մնատօլի մայրաքաղաքը, օսմանեան անսանձ, քմահաճ, անվեհեր իշխանութեան խրոխտ ու ու վայրագ փաշաների որրանը, հսկայի նման կծկուած էր էյէրլի-տաղի, Փալաթոքանի վերին խողոցում: Նրա նեղ, ծուռ ու մուռ, բառին ընդարձակ նշանակութեամբ՝ կեղտոտ փողոցների մակերևոյթը ծածկուած էր բոբոտ, զգւելի շների փոմակներով, որ ծուռօրէն ցուռներն ազինների տակ դրած, կիսախուփ աչքերի ծայրերով, անցորդները դի-

տելով, կարծես մրափում էին՝ չոր կլիմայի տապից ու խորշակից թուլացած կամ՝ մի քանին նրանցից, որպէս երևում էր, քաղցած, պաշարելով սպանդարանի, փոների դռները, կեղծ կռիւով իրանց վրայ էին հրաւիրում բարեպաշտ իսլամի բոլոր զթասիրութիւնը, իսկ աւելի ուշիմ, ճարպիկ մինը, որի տիպերից կան տակաւին Կարինում և Կ. Պօլսում, ծիծաղի և կարեկցութեան առարկայ էր դառած իր մուրացիկ անուկով: Ոտից ցլլուխ կանաչ, կամ սպիտակ հագնւած իմամին, վերարկու կրողներին դիմաւորելով, առաջին թաթերը նրա կրծքին դնելով, ողբազին կաղկանձիւնով, ողորմութիւն էր խնդրում: Ղուռանի ֆանատիկոս աշակերտը, ժպիտն իր մօրուաց սահմանները հալածելով՝

— Ի՞նչ կայ, հարցնում էր— էլի քաղցած ես:

Շունը մտերմաբար պոչը շարժելով, խօսողի ձեռները լիզելով, աչքերը պաշտպանին սիւեւած՝ շարունակում էր նոյն ձայնով աղերսել:

— Մահմատ աղան. — հրամայում էր բարեպաշտը, — հինգ օխտ հաց տուր այս անասունի ձագերին. — այս սակով արծաթ դրամը

99-04565





գնում էր շան բերանը, ուշիմ կենդանին իսկոյն թռչում էր հացերին մօտ, փողը գլորում Մահմատ աղայի ձեռին տակ, մեղմ ոռնալով, տուտը շարժելով պահանջում էր գոհացում առանց աչքը նրա շարժումներից հեռացնելու. սպասում է այժմ՝ ոչ առաջին երկշտուրթեամբ: Յանկարծ զարթնում են կարծես փողոցում տարածւած նրա հարազատները, անաղմուկ ժողովում կրպակի առաջ, անկուիւ ճաշում: Այսպէս շարունակում էր մուրացիկ շունը՝ մինչև որ կշտանային իր լակոսներն ու ինքը, ապա իր ընտանիքի անդամներին նման միւսնոյն անփութութեամբ տարածւում են ջելու: Երբեմն էլ, եթէ ողջ օրը սոված մնալ պատահէր, մուրացիկ մայրն սկսում էր խիստ ճարպիկ գողութիւններ: Ահա այսպէս են ապրում շնասէր թիւրքիոյ անհամար շները նաև այսօր:

Արեւը փուլած էր երկնից գազաթակէտին վրայ. խիստ չոր ջերմութիւնն այրում էր ամեն ինչ, չէին երևում բարեկեցիկ ժարդիկ. միայն արհեստաւոր, բանւոր, մշակ շտապում էին դէս ու դէն անձնական գործերը կատարելու: Այդ ջերմութեան, այդ փոշուն, այդ փողոցներից, հրապարակներից արտաբերող զարշահողութեան խառնուելով

և՛ խորովածի և՛ անուշահամ կերակուրների բոլորը՝ յօրանջել կտային քաղցածներին, որոնց մեծամասնութիւնը փայտ բերող բաբերդցի, թորթումցի թուրք այգեպաններ էին: Հրապարակներում կանգնելու տեղ չըկար, լի էին անհամար բարձւած ու դատարկ սայլերով:

Մանաւների (մրգավաճառ) կրպակները գեղեցկացել, հարստացել էին գեղատեսիլ, համեղաճաշակ մրգերով: Վաճառանոցներն աչք էին խողում: Այդ օրը կարինը տեսնողը պիտի լիշէր թիֆլիսը նոյնպիսի հարուստ շուկաներով, երկուսն էլ խիտ, բազմամարդ, հարուստ, կենդանի քաղաքներ, միայն շինութիւնների, քաղաքի, տարազների տարբերութեամբ: Կարծես մի մեծ մրջնոց լինէր, անդադար շարժում և գործ էր տիրում:

Մեր պատմած ժամանակ՝ երկու երիտասարդ թուրք ծառաներ, թեւերը մինչև արմունկները վերստիտած, մի մի սինի գաթա, բէօրէկ (կարկանդակ) գլիններին, զբաղւած, երևի, իրանց շատ հետաքրքիր խօսակցութեամբ, գնում էին դէպի Գիւլուճիգուլ: Նրանց ճանապարհին էր մեր վերև նկարագրած փորձւած մուրացիկ շան ընտանիքը, Մահմատ աղայի փոխն մօտ:



Ուշիւ շունը կարծես նշան տւեց իր գերդաստանի անդամներին, իսկոյն նրանք այս ու այն կողմից խռնւեցան, ծառաներին շրջապատելով մի անսպասելի կռիւ բարձրացրին, խմբովին հրմշտեցին անփոյթ երիտասարդներին: Նրանք գայթեցան, սլնիններն ընկան, շները մի մի բան խլելով լուռ ու մունջ խուսափեցան:

Վայ, անտէրներ,—միասին աղաղակեցին ծառաները կարծես զարթնելով խոր քնից, երբ տեսան որ ամեն շուն իր բաժինն առած հեռանում էր.—ճշտ, ճշտ... վայ անտէրներ, շան լակոտներ...—սրա նրա ետեւից վազելով:

Բազմութիւնը կանգնած ծիծաղում էր:

—Ծօ, Ահմատ, ծօ, փոին տակ մտան...

—Միայն երկու գաթայ աղատեցի... տարածները կերան...

—Ահա ես էլ մի բօրեկ... թիւռ, թիւռ...:

—Եղածն եղաւ...

Խեղճ ծառաներն այս ու այն կողմն ընկնելով մեծ ու փոքր շներն հալածելով հազիւ կարողացան մի քանի կտոր բան խլել, այն էլ կոտորած, կեղտոտած. նրանք իրար երես էին նայում մի տեսակ երկիւղալի ապշութեամբ:

—Ի՞նչ պատասխանեմ,—մրմռաց Ահմատ, խեղճ կերպով, յօնքերը կիտած,—Ի՞նչ ասեմ Հայթա—Փիրատ փաշային... կաշիս կըքերթէ, արիւնս կըթափէ... ճվ Ալլահ...

—Հապա ես՝ Ի՞նչ պատասխանեմ Ապտուլլահ փաշային, այս երեկոյ մեղ մօտ են հրաւիրւած քո տէրդ, Տամատ-Մուստաֆա, Պօշնաք-Ֆիտան փաշաները, Դէլի-Փոլատ և բոլոր ենիչերի պէյերն ու աղաները...

Ամբոխն սկսեց ծաղրը թողնել և կարեկցել նրանց. ծառաներն յուսահատ, դանդաղաքայլ հեռացան, իսկ աւագակ շներից ոչ մի հատ չէր երևում, պահուած էին անկիւններում, ոմանք էլ անփոյթ ննջում էին, քաջ գիտենալով, որ հարստահարւած ծառայք չէին կարող վրէժխնդիր լինել, օրէնքն ու կառավարութիւնն իրանց պաշտպան էին:

Մենք պիտի հետևինք Փիրատի ծառայ Ահմատին:

Տասնութերորդ դարում, Կարինը ներկայացնում էր ասիական մայրաքաղաքի մի բնորոշ տիպը: Նրա անմաքուր փողոցների շուրջը, մի տեսակ ոճով կառուցուած՝ մեծ ու փոքր շէնքեր էին բռնում: Արտաքին ըրարձր պարսպից ներս շինուած էին տները,



որոց առաջ անկարգ և անձաշակ կերպով անկուած էին մի քանի տասնեակ անբերու-  
ռիներ:

Հայթա-Ֆիրատի ընդարձակ պարտիզի  
խորքում, աչքի էր ընկնում զուտ մարմարի-  
օն ջրմուղը, որի մէջ նստած էր նոյն քա-  
րից հզօր առիւծի արձանը, որի ռնգերից, ա-  
կանջներից, աչքերից վիժում էին սառն ու  
վճիտ ջրեղէն թելեր, անհաւասար բարձրու-  
թեամբ իրար ընդհարում, խորտակում,  
գեղարւեստական ցայտումներով բեկբեկում,  
իբրեւ զանազան մեծութեան գոհարներ.—  
շամանթաղներ թողնելով օդի մէջ, — ուժա-  
սպառ թափւում արձանի վրայ, ծորում լայ-  
նարձակ աւազանն՝ ուր, հանդարտիկ հրրճ-  
ուանքով, խաղում էին մի շարք կարմրախայտ  
ձկներ: Երեւի նա սիրուն, երազային թռիչք-  
ներով, իր շուրջ հուրինների խորհուրդներին  
հետ էր խաղում, շողուն անգամանտների  
նման ցոյցոյում օդի մէջ, գլորւում մոռա-  
ցութեան աւազան...

Նրա շուրջը շինւած էին քանդակագործ  
քարեղէն տախտեր, ապակեայ վանդակա-  
պատերով, որոց վրայ տարածւում էին՝ թէև  
անպտուղ, տերևաշատ բարունակներ: Նրա  
աջ կողմում էր մեծ վեզիրի հոյակապ բա-

ղանիքը, իսկ ձախում սէրայը, որ երկյար-  
կանի լինելով միայն վերին մասն էր երևում  
զրսից:

Արտաքուստ գեղեցիկ չէր Հայթայի պա-  
լատը, մեծութեամբ միայն զանազանւում էր  
միւս շէնքերից, միևնոյն մանրիկ քարերով  
պատերը կրով ու աւազով զանգւած, մի-  
ևնոյն հողէ ծածկը հորիզոնական ձևով ու-  
նէր նա: Ուստի ներս ենք մտնում Ահմատի  
հետ, որ խորին տրտմութեամբ, մահապարտի  
զանգաղ քայլերով, ակամայ, գլուխը կախած  
գնում է:

Արտաքին սրահից յետոյ՝ գնում ենք  
բակը. երեք կողմերում երևում են տասնեակ  
սենեակների մուտքեր: Հէնց բակից սկսւած  
արևելեան շուայ, քմահաճ ճոխութիւն ենք  
տեսնում. նրա յատակն յօրինւած է երկնա-  
գոյն մարմար և պօրֆիր մուգալքով: Ընդու-  
նարանի դրան աջ ու ձախ կողմերում վա-  
զրի և առիւծի արձանների մօտ, զրւած են՝  
կապոյտ մահուդով սքօղւած, պահապանների,  
թիկնապահների տախտերն՝ ուր տարածւած  
են տասնեակ ենիչերիններ լուռ ու մունջ: Բո-  
լոր դռներն սքօղւած են ոսկեթել եզերքով  
կարսիւր թաւիչ վարագուրներով, որոնց ֆո-  
ների մէջ փայլում է ոսկեղօծ մահիկն Եւրո-



պիոյ՝ Հնդկաստանի աստղին տակ: Ընդունարանի դռնից մինչև դիմացի դահլիճը փռուած է Սորասանի մի ընտիր, նրբաճաշակ գորգ, որ իր ծաղիկներով մրցում է առաստաղի նկարներին հետ: Ընդունարանի չորս կողմերում դրած են բազմոցներ՝ մին միւսից զեղեցիկ գորգերով փռած, իսկ մէջտեղը՝ միակտուր ընտիր կապերտով ծածկւած: Նրան կից, փոքրիկ օթեակի մէջ, վառում էր պատից հանւած գեղաքանդակ օճաղը. նրա երկու կողմում շարւած էին հարիւրաւոր չիպուղներ, դալիճներ. իսկ կաղնէ սեղանի վրայ մի քանի տիւժին Քիննան (սուրճի գաւաթ), ոսկեղէն գառձեռ (ֆինճանի տակն են գնում, շինւած է սկիհաճկ) ոսկեգօծ մատուցարանով: Օճաղի մօտ անդադար երթեկեկելով դանլէնի (սուրճ եփող) Սէման աղան, թևերը վեր սոթտած մինչև արմունկները, հիւր գալու ժամանակ դրան արանքից, ակնապիշ սպասում էր իր տիրոջ հրամանին:

Թէև ընդունարան (միւսաֆիւրխանէ) կոչւած սենեակը բաւական ընդարձակ, խոշոր լուսամուտներով լուսաւորւած, պատերը մարգարտափայլ գածով կոկւած, քմահաճ նկարներով զարդարւած էր, սակայն նսեմա-

նում էր կարծես հարուստ կարասիներով, բեհէզ ծիրանի վարագուրների ալիքներով, որք կոհակ կոհակ իջած էին մինչև լուսամուտների կէսերը, որոց բաց մասերն էլ բռնած էին արծաթեղէն կոնքն ու սափորը, մեծազին պնակները, ոսկեկուռ բուրանոցները, օշարակների թասերն ու ծաղկամանները: Նրանցից շատերը շինւած էին թէհրանի արեւստագէտների ձեռքը՝ պարսիկ խաների համար՝ հիւրերին վարդի ջուր սըրսկելու, օշարակ և այլն մատուցանելու և աւար առնւած էին Հայթա—Ֆիրատ ախոյեանի ձեռք 1719 թ. Երևանի-Նեղհարզի կուլին, որ 300 դէլի, հայթա, ենիչերիներից բաղկացած մեկնազէն խմբով կոտորած էր 12,000 պարսիկներ, տիրած Արարատին, մինչև որ Նատիր—Շահ 1734 թ. արշաւելով նոյն գունակ ջարդով վեր ստացաւ Երեւանն իր սահմաններով: Ընդունարանի մէջտեղում դրած էր մի մեծ բիւզանդական, քանդակագործ, նկարւած պղնձէ բրգաձև կրական՝ վեց առիւծի արձանների վրայ յենւած, նրա մօտ մի մարդաչափ ոսկեգօծ աշտանակ՝ խոշոր ճարպէ կերոնով, կարծես իբրև մինարէ ցցւած լինէր Սյա-Սօֆիայի մզկիթը զարդարելու, որին նման իսկ էր շինւած:



Այցելուի աչքն զբռնում էր, ուստոս-  
տում էր մի գեղեցիկ առարկայից դէպի  
միւսը, կանգ առնում՝ ոսկեվառ աստղերով  
զարդարուն՝ երկնագոյն առաստաղի վրայ,  
բայց՝ երբ դէմը նայէր, տեսնէր անաւոր  
զարդը, Հայթա—Ֆիրատ, որ բազմած էր  
թաւամագ առիւծենու վրայ՝ վստահ և հա-  
մարձակ՝ ոտն երկարած, ի նկատի առնելով  
այդ արիւնհոտ դարի արիւնհոտ բռնակալ-  
ների վայրագ, անագորոյն արարքը, մարդ  
սարսռում էր բոլոր մարմնով: Ֆիրատ—  
փաշան միջակ անձն էր և լեցուն, չէր կա-  
րելի նրա արեառ դէմքին առանց համակրու-  
թեան նայել: Սկ' ալեխառն յօնքը՝ ծիծառի  
թևերի պէս, միանում էին թաւ արտեանուն-  
քին, որոց մէջ նշուլում էին սև սաթի պէս  
խոշոր, երևի արբեցութիւնից, ոչ այնքան  
մաքուր սպիտակուցով, կենդանի հայեացքով  
մի տեսակ մելամաղձոտ հրով՝ խորաթափանց  
աչքեր, հայկական՝ մի քիչ հակած քիթը,  
սլորած բեխերը, որ ծածկում էին նրա  
շրթների լուրջ ժպիտը, ածիւած այտերը,  
առիւծի բաշի պէս բալորած մօրուքը թրքա-  
կան ոճով կտրւած, կայտառ, կարմրախառն  
թշերի հետ կազմում էին նրա դէմքի գեղեց-  
կութիւնը: Ճակատն արդէն կորած էր ղալ-

փախի ոսկեթել անկած շրթունքերի, սպի-  
տակ Սուլէյմանի քէֆլիէի (ապարօշ) ներքոյ:  
Կարմիր ղալփախի մի քառորդ արշին դուրս  
մնացած մասն՝ իր գոհարազարդ փիւսկիւով՝  
իջել էր նրա թիկունքն ի վար: Վրան առած  
փաշայական խալաքի բացւածքից երևում  
էր նրա կանաչ բեհէզ պարեգօսը, մոխրա-  
գոյն թարապուլուղ գօտով սեղմւած, որի  
մէջ խրւած էին քաջին ոսկեկուռ դաշնակն  
ու ատրաճանակները: Դեղին կօշիկներ, որոց  
ծայրերը դարձած էին ոտների երեսով, ձե-  
ռին բռնած երկար կեռասենի չիպուղ, որի  
օղակներն ու շրթների տեղերն ոսկով ու ակ-  
ներով էին ընդելուզւած, միւս թևը բարձին  
դրած ու թիկն տւած միշտ տեսնուում էր  
խրոխտապանձ Հայթա—փաշան:

Ֆիրատ փաշայն ճանաչւած էր սուլթա-  
նից և վեզիրներից իբրև առիւծատիպ ա-  
խոյեան, չարքաշ, սակաւապէտ, հաւատա-  
րիմ զինուորական: Որովհետև նա բարկանա-  
լու ժամանակ սրնթաց էր խօսքից դէպի  
գործ՝ ինչպէս վարար Եփրատ գետը, նրա  
ծառայակիցներն՝ իրանից լսելով, մկրտել  
էին Քիրաս (Եփրատ) անունով, իսկ Հայքա  
խմբին մէջ լինելուն համար մինչև վերջը  
կոչւեցաւ նա Հայքա—Քիրաս: Ուստի նրա



բուն անունը մնացած էր մոռացութեան մէջ՝  
և ոչ ոքի էլ հետաքրքիր չէր լսելու:—Տերեն  
սուեր ունի,—ասում են թուրք իմաստա-  
սէրները,—մարդն էլ թշնամի, անսուեր ա-  
պակին՝ անմտին, աննամուսին, անզգա-  
մին կեանքին է նմանում: Եթէ կէս օրին  
մեծ է սուերն՝ զգոյշ, առարկան մեծագոյն  
է: Հայթա—Ֆիրատ իր հպարտ սուերով  
ծածկում էր օսմանեան ռազմական բանակը՝  
սկսած Եղեարդի անօրինակ յաղթութիւնից՝  
ուր և ստացած էր փաշայական քուղ (աս-  
տիճան) և տիտղոսներ, մեծացած անուրա-  
նալի գործերով: Նրա թշնամիներն էին ըսկա-  
ւած Զիա բդեշխից մինչև մի թուղով փա-  
շաների սուար շարքեր, որոց մեծ մասն  
Անատոլումն էր ապրում, բայց՝ երկնչում  
էին հերսին թշնամութեան նշան անգամ ցոյց  
տալուց: Իսկ ենիչերին, գէլին, Հալթան,  
ընդ որս շատ բարձրաստիճան փաշաներ՝  
պաշտում էին նրան: Ֆիրատ արդար դատա-  
ւոր էր, զրկածներին (անշուշտ իրանց հա-  
յեցակէտով) պաշտպան էր, նա ստացած  
աւարն հաւասարապէս բաժանում էր բոլո-  
րին, նա խիստ էր չար պաշտօնեաների հետ,  
նա յարգում էր իր խօսքը:

Եթէ հնար լինէր վէս Հայթայի սրտի

խորքը բանալ, պիտի գտնէինք սակայն ազ-  
նիւ զգացումների բոյրերով ողողուն մաքուր  
և լուսաւոր: Նուրբ, թափանցիկ իմացակա-  
նութիւն, աւելի խղճին անսացող, բայց՝ ոչ  
ամուր, անդեղե, անըկճելի կամք ունէր նա:  
Իբրև բնութեան զաւակ անկիրթ չէին նրա  
զգացումները, թէև չունէր մեծագոյն իդէալ-  
ներ. նրա սկզբունքները պարզ էին և ժո-  
ղովրդական իր դարին յատուկ. բայց և  
այնպէս աշխատում էր հաստատ պահել, գի-  
տէր նանաչել իրան, սիրում էր լսել իր  
ականջից խօսող մեղայեքի (հրեշտակ) ձայնը:  
Նրա շարժումների, խօսքի մէջ պարզ երևում  
էր կրթութեան հետքը, նրա դատողութիւն-  
ները միշտ յաղթանակած էին ընկերական և  
ռազմական շրջաններում: Սակայն՝ թէ ինչից  
էր առաջ եկած նրա տխրութիւնը, ինչ էին  
նրա ցաւերն՝ անշուշտ իրանից պիտի լսենք...  
Ինքը պիտի յայտնէ մեզ իր գաղանիքները...

Ոչ ոք չըզիտէր նրա ծագման մասին,  
նրա ծնողների, ծննդավայրի մասին. դա  
հանելուկ էր. միայն Հայթայի մտերիմ Քէօ-  
փրիւշու օղլու Ապտուլլահ փաշայի բերանից  
փախած մի խօսքը Դէլի—Փոլատի բերնին մէջ  
ստացաւ այլ ծաւալ. նա ասում էր մտերիմների  
շրջանում,—Ֆիրատը գեաւուրի որդի է:



Միևնոյն կասկածն ստացաւ նաև բարեմիտ սարաֆ Յակոբ աղան, երբ Ֆիրատից ստացաւ քսակով ոսկին՝ հայոց առաջնորդի միջոցաւ հայ աղքատներին բաժանելու:— Իւրաքանչիւր անհատի սրտին մօտ է իր ազգը,— մտածում էր նա,— Հայթա—Ֆիրատ ուրիշներին թողած մեզ է օգնում, ուրեմն՝ մեզանից է նա: Լայն ժարդասիրութիւնն անկեղծ ազգասիրութեան ոգին է, ոչ մի ժարդասէր զերծ չէ ազգը սիրելուց: Միթէ մարդասիրութիւնից դրդեցաւ Ֆիրատ, ոչ ապաքէն շատ թուրքեր քաղցած են և նախանձում են շների բախտին: Այո՛... բնական եղբայրասիրութեան ուրականն է այս առատաձեռնութեան շարժառիթը: Նա հայկական ծագումն ունի: Այո՛... ենիչէքին երբ է խորշում արիւն թափելուց, կողոպտելուց, ոչ ապաքէն զւարճութեան կարգիցն է և մի հարւածով հայի անմեղ գլուխը դէն շպրտել, թէ՛ որպէս թրպրտալով գլորւում, շրջում է դէս ու դէն, մարմինը մի վայրկեան կանգնած սասանում, ապա մորթուած հաւի նման ընկնում, ձեռները շարժում, թափիթափ տալով դետնին խփում, վերստին կանգնել փորձում, հակառակ կողմն շուռ գալով՝ շարունակում իր օրհասական, ողբալի պարը

վզից ու խռչափողից արեան առւակներ հոսեցնելով, նրանց հոսանքի մէջ խռխուում, հայհոյանքի, աղերսանքի ձևերի ելեէջերով հոնչում... Անցնում է մի րոպէ, կտրւած գլուխն էլ դադարում է անիւի պէս ճախր անելուց, գլորուելուց, անիմաստ աչերը սևեռած իմ առարկայի, ստէպ գազանս պանչին, հրաժարւում է կեանքից վերջին դառն պատրանքով... մարմինն էլ կծկւում, վերջին ուժով զարնում ձեռ և ոտ դետնին, մի հառաչի մէջ դադարում յաւէտ: Հայն իր այս օրինակ մահով զւարճացնում է ենիչէքուն: Բայց՝ Ֆիրատ տասնեակ տարիներ ապրած է մեզ հետ, մենք չենք տեսած նրան այդպիսի դիւային զւարճութիւնների մասնակից: Նա ոչ միայն հայ արիւն չէ թափում, այլև արգելք է լինում... Ուրեմն ստոյգ է Դէլիֆոլատի ասածը՝ գեաւուրսէն ազմա (քրիստոնէից սերւած):

Ահա այսպիսի կարծիքներ սնուցանում էին մի շարք մարդիկ Հայթային նկատմամբ՝ առանց յայտնել համարձակելու:

Ահմատ, որին կողոպտեցին փողոցական շները զաթաները թափելով, դողահար ներս մտաւ խոհարարի մօտ:

— Հա՛, զաթաներն ո՛ւր են, անասուն:



— Զաման աղան, մի հարցնիր...

— Ի՞նչ պատահեցաւ, անառակ շուն...

— Աստուլլահ փաշայի ծառային հետ կրգայինք, նա էլ մի սինի բէօրակ էր բերում, Մահմատ աղի փոխ մուրացիկ շան գերդաստունը խոնկեցաւ յանկարծ, կռիւ հանեցին, մեզ գլորեցին, ամեն մինը մի բան խլելով փախան...

— Հայ քոռանաս դո՛ւ,— գլխին զարնելով՝ չգիտէր բարկանար, եթէ ոչ ծիծաղէր.

— դառուն (զրոդ) տանի քեզ էլ, քո ընկերին էլ, հիմա ի՞նչ պատասխանեմ փաշային:

Ահմատ՝ գող կատուի պէս, անխօս կծկւեցաւ մի անկիւն, խոհարարը կատաղութեամբ մի քանի ապտակ նետեց յանցաւորին և պատրաստեցաւ Հայթային իմաց տալու, երբ դուռը բացեցաւ և էնիֆէ սպասուհին՝ երեսը քօղարկած ներս մտաւ:

— Ի՞նչ կայ, Զաման, ինչո՞ւ ես թաղում Ահմատին:

— Ի՞նչ պիտի լինի, այս անառակը սինով գաթան շներին է կերցրել, հիմա էլ անմեղ մարդու նման եկել է ներս:

Ահմատը եղելութիւնը պատմեց, էնիֆէ ձեռքը ձեռին խփելով կուշտ ծիծաղեցաւ:

— Լա՛ւ,— ասաց նա ի վերջոյ,— դուք

հանդարտ կացէ՛ք, ես ինքս լուր կըտամ, գուցէ էլ ծեծ չուտէ այս անշնորհ Ահմատը:

Գ.

Է ի ժ — Հ ա ն ր մ

Մինչդեռ ծառաների մէջ անցնում էին ծեծի, ծիծաղի, հայհոյանքի անցքերը, Ֆիրատ փաշան զւարճանում էր հարէմում:

Հարէմն աւելի ճոխ էր և զարդարուն. այնտեղ թագաւորում էր անգորր երջանկութեան հետ վերին աստիճանի ժաքութիւն, անարար տան տիկնոջ ժառանգի հետք:

Ֆիրատի հարէմն ուրիշ շայտակեաց փաշաների հարէմների հակապատկերն էր ներկայացնում: Այնտեղ չըկային խուսկ, շրթունքները կախ, թարշամած, զառամած դէմքերով լպիրշ արաբացի ներքինիներ, չըկային աղախինների խմբեր, չըկային մի շարք աիկիններ. այդ ոսկեձեղուն պալատի մի քանի սենեակների զարդն էր մի տիկին: Նրանց մէջ անցուդարձ էր անում և մի աղախին՝ էնիֆէն՝ էլիֆ-հանըմին ծառայելու: Կանանոցում չէր լսւում կաժաք ու կռիւ տիկինների մէջ, տիրոջն ուր գիշերելու մասին: Տիկին էլիֆ՝ միշտ ժպիտն երեսին, սպասում էր իր սիրական ամուսնի գալստեան,



բնաւ կասկած չունենալով նրա ջերմ, յա-  
րատեւ, քաղցր սիրոյ մասին:

Հայթա — Ֆիրատ փաշայ, ցերեկներն  
անգամ երբ գործ չէր ունենում, մտնում էր  
էլիֆի մօտ, սիրահար տատրակի պէս սիրա-  
բանում, մին միւսով զբաղւում, մին միւսի  
գեղեցկութեամբ հիանում էին: Որչափ քաղ-  
ցըր էր Հայթայի համար՝ երբ ամեն առա-  
ւօտ էլիֆն իր ձեռք լացակալ ջուր, օճառ  
բերում, անձամբ ջուրն ածում, ապա կա-  
նացի հոգածութեամբ շորերը հագցնում էր:

էլիֆ հանրմ բարձրահասակ, հրապուրելի  
մի կին էր: Նա հագնում էր երկնագոյն թաւ-  
շեայ բօպայի ձևով էնթերի, առաջին կապում  
կարմիր մախմուր գոգնոց՝ եզերքն ոսկեթել  
անկած, գլխին պատառած մի քանի մե-  
տաքսեայ թաշկինակներ, որոց ներքին շրթ-  
ներից, ժարգարտափայլ ճակատի հրապարա-  
կի ծայրը փայլում էին երկու կարգ ոսկէ  
դրամներ՝ խառն խոշոր մարգարիտներով:  
Վիզը զարդարւած էր ականակուռ կամրձակ-  
ներով՝ ծրարած մի խուրձ մարգարտով և մի  
մեծ ալմազով. ոչ մի մասն ազատ չէր մե-  
ծադին մատանիներից, դաստակները լայն,  
ոսկեկուռ գոհարազարդ ապարանջաններից:  
Նուրբ, թափանցիկ, ծաղկենկար վարդագեղ

քօղը գլխից մինչև ոտներն էր իջնում, որի  
տակից երևում էին գլուխն ակներով ընդե-  
լուզւած, մետաքսաթել, երեք քառորդ ար-  
շին երկարութեամբ փիւսկիւլը խառնւած  
տասնեակ գալարուն հարուստ թխաթոյր ծա-  
մերին, տարածւում մինչև տուտը:

Չուաձեկն մօտ՝ բոլորակ գէմքին վրայ  
հիանալի էին նրա խոշոր հրապուրով լի աչ-  
քերը, փայլուն յօնքն ու բարակ վարդագեղ  
շրթունքն՝ ուր թագաւորում էր ընդ միշտ  
մի սիրատարփիկ ժպիտ: Ֆիրատ կարծում  
էր թէ այդ ժպիտի տակ էր թաղւած  
գեղեցկութիւնը, որ կրկնապատկում էին նրա  
վեհ, շնորհալի կաց ու նիստը, համեստ շար-  
ժումները, առաքինութեամբ ողողուն մեղոյշ  
հայեացքը, գրաւիչ լեզուն, որ խօսելու ժա-  
մանակ խիստ քաղցր էր թրթռում:

Տիկին էլիֆ չունէր իր գիրքն ունե-  
ցող կնոջ խրոխտ, վէս, արհամարող բնաւո-  
րութիւնը. նա քաղցր էր ամենի հետ, նպա-  
սուհուն ընդունում էր իբր ընկերուհի, եր-  
ջանիկ գոլով թշւառների պաշտպան էր իր  
ամուսնին նման:

Հազւագիւտ է որ այր ու կին միասիրտ  
միակամ գործեն, սակայն՝ նրանք երջանիկ  
էին այդ կէտում. նման երկւորեակ քոյր ու



եղբօր, Ֆիրատի ասելիքն՝ էլիֆն էր ասում,  
տիկնոջ մտադրածն՝ ամուսինն իրագործում,  
մին միւսի յաջողութիւնը նախատեսում,  
մին միւսի տխրութիւնն իր անձի մէջն զգում:  
Տաճկական ընտանեկան կեանքի մէջ հազ-  
ւագիւտ է այսպիսի միաւորութիւն...

Բայց՝ եթէ կար նրանց երջանկութիւնը  
թունաւորող մի հանգամանք, առերևոյթապէս  
վերագրւում էր զաւակների չգոյութեան.  
բուն սիրով մեծացած ամուսնեքը զրկւած  
էին երկնատուր պարզեցի:

Սակայն երջանիկ էին սահում նրանց  
կեանքի օրերը:

Ահմատի գաթաները շներոց արած օրը՝  
Ֆիրատ նստած էր տիկնոջ առանձնասենեա-  
կում և հետաքրքիր լսում նրա պատմութիւն-  
ները, նրա անցեալը, երբ էնիֆէ սպասու-  
հին երկշոտութեամբ դրան արանքից գլու-  
խը ներս բերեց:

— Ի՞նչ կայ, էնիֆէ, հարցուց էլիֆ:

— Ոչինչ, տիկին, փորձանք է պատա-  
հել, Ահմատը...

— Ի՞նչ է եղել, — կտրեց Հայթա — Ֆի-  
րատ ոտքի ելնելով:

— Ոչինչ, էֆէնդիմ, Ահմատը գաթա-  
ները բերելու ժամանակ...

— Մի երկու հատ կերե՛լ է:

— Երանի ուտէր: Մահմատ աղայի խա-  
նութին առաջ շները նրան շրջապատել,  
իրար հետ գզել վար են գլորել, ապա բո-  
լոր գաթաները լափել են...

Այր ու կին իրար երես նայեցին ծիծա-  
ղելով:

— Բոլորն ա՛յդ է, — հարցուց Ֆիրատ:

— Այդ է, սակայն Ահմատը վախենում  
է...

— Ծեծելո՞ւց է վախենում...

— Անշուշտ...

— Լաւ, թո՛ղ հոգ չանէ, երևի անասուն-  
ները քաղցած են եղել. գնա՛, ասա այդ անա-  
ռակին, միւս անգամ անհոգութիւն չանէ:  
Եթէ խելքը գլխին պահէր՝ ի՞նչ անելու էին  
շները:

Էնիֆէն դուրս ելաւ, իսկ էլիֆ շարու-  
նակեց ընդհատւած պատմութիւնը, որից շատ  
էր ախորժում Ֆիրատ:

— Լաւ չեմ մտաբերում իմ ծննդավայր  
քաղաքի զիրքը՝ միայն երազի նման յանկարծ  
աչքիս առաջ կըգան շատ հին մտապատկերներ:  
Յիշում եմ մեր փողոցը, իմ ծնողները, իմ  
ընկերուհիները. իմ քոյրերը, որ ինձանից  
մեծ էին: Յիշում եմ՝ որ հայրս մեծ մարդ



էր, փառայ էր կամ փառայի պէս մի բան. իսկ մայրս նստած էր իբրեւ տիկին և հըրամայում բազմաթիւ ծառաների և աղախիններին: Հայրս ցերեկները դուրսն էր լինում, երեկոները տուն կըգար, կըգրկէր ինձ, կըհամբուրէր, իր ձեռք հաց կուտացնէր և կըքնեցնէր իր կրծքին վրայ: Հայրս բարի մարդ էր երևում: Բայց մայրս միշտ տրտում էր և լաց էր լինում առանձնութեան ժամանակ իմ եղբորս մասին, որ կորած էր. այս առթիւ ես կարծում էի աւելի հօրս սիրելի: Մայրս տանում էր ինձ եկեղեցի՝ երբ կարմիր ձու ներկելու ժամանակ կըլինէր, ես էլ իմ ձուաներով զւարճանում էի...

—Ս, հ,—ընդհատեց Ֆիրատ գունատւելով և զարմանալով.— ուրեմն՝ դու քրիստոնէի աղջիկ ես՝ էլիֆ ջան...

—Սյո, սիրելիս, ես քրիստոնէի աղջիկ եմ: Քեզ հետ կարգւելուց յիտոյ՝ մի քանի անգամ գլխի ցաւը պատրւակ բռնելով մտել եմ յոյնի, հայի, կաթոլիկի եկեղեցի:

—Սյո, այո, այդ ես գիտեմ, հայերից մեռն էիր ուզում, նրանք էլ իւր տալով խաբում էին քեզ:

—Մեռնն անշուշտ պատրւակ էր, ես

իմ տեսած եկեղեցին, իմ տեսած քահանայի տիպն. էի որոնում և գտայ:

—Եւ գտա՞ր,—հարցուց փաշան հետաքրքրութեամբ:

—Սյո, Ֆիրատ ջան... ես հայի աղջիկ եմ...

Հայթա—Ֆիրատ արտասուքն աչքերին մէջ խեղդելով, փարեցաւ էլիֆի պարանոցն և մրմուռաց սրտագին:

—Ո՛հ, դ՛ու, չքնաղ, էլիֆ, շարունակիր, շարունակիր... Հայունհի ես, իմ պաշտելի սիրական:

—Ես հայի աղջիկ եմ. քրիստոնէի զաւակ, բայց՝ ո՞ր երկրացի, քանի՞ տարեկան՝ երբ ինձ լէզզին տարաւ, այդ չըգիտեմ:

—Իսկ Հիմա՞,—ընդհատեց Ֆիրատ զւարթ կերպով,—բոլորովին ուղիղն ասա՛, սիրտդ ո՞րի կողմն է, քրիստոնեայի, թէ մահմեդականի:

—Հիմա,—զրականապէս պատասխանեց տիկինը,—հիմա ես մահմեդական եմ, ինձ այդ կրօնի մէջ ծնւած, սնւած եմ զգում, բայց ոչ իմ կրօնին դաւաճանած:

Կարծես մի սուեր սահեցաւ Ֆիրատի երեսով. այլայլութիւնն սքողել ջանալով՝ լըջութեամբ ասաց.— Շարունակիր, էլիֆ, շարունակիր:

—Շնորհներս հարուստ էին, կարծեմ ու-



նէինք շատ կալածներ, ոչ մի բան չէր պակասում, նրանք գոհ էին իրանց կեանքից, բայց՝ երբեմն յիշելով իրանց որդու կորուստը, տրտմում էին և արտասուում, ես էլ մասնակցում էի նրանց սուսաց գիտենալու թէ ինչո՞ւ կամ ո՞ւմ համար եմ լալիս։ Իմ եղբայրը կորել էր. նա գնացած էր խաղալու, մի քանի հասակակիցների հետ կորել, էլ չէր վերադարձել տուն, այժմ իմանում եմ՝ որ մարդորսները նրան բռնած, տարած էին իբր գերի։

— Դու չե՞ս յիշում եղբորդ անունը։

— Ո՛չ, ես դրանք չեմ յիշում, սիայն յիշուն եմ՝ որ եղբայրս կորած է եղել և նրա մասին միշտ խօսում էին ծնողքս։

— Լաւ, քո անցքը շարունակիր...

— Գարունը նոր էր բացւել, մենք հրըճւանքով զբօսնում էինք մի վարար և մեծ գետի եզերքին, որ անցնում էր մեր քաղաքի միջով։ Ես քաղում էի գեղատեսիլ ծաղիկներ, վնջեր կապում, հոտւըտելով զւարճանում։ Մէկ էլ յանկարծ զբօսնող կանայք աղամարդիկ իրար անցած, հրմշտելով, միմեանց ոտի տակ գլորելով՝ սկսեցին գէպի քաղաք վազել։

— «Լէզգի՛ն. — աղաղակում էին միաբե-

րան։ Սյգ միջոցին ես կորցրի ծնողներիս, լալով վազում էի բազմութեան ետեից։ Մէկ էլ տեսնիմ մեր դէմն ելան հարիւրաւոր սպառազէն մարդիկ. շրջապատեցին և ըսկըսեցին բռնել, կոտորել։ Ես բարձրաձայն լաց էի լինում. մի լէզգի գրկեց ինձ, ապտակելով լռեցրեց. ձիուն վրայ առնելով, տարաւ չըգիտեմ ուր։ Ո՛հ, Ֆիրատ, այդ սարսափելի օրերը գնան ու յետ չըգան... Ես չեմ յիշում որչափ ժամանակ լէզգու մօտ մնացի։ Մի օր նա ինձ գաւակն առած՝ ճանապարհ ելաւ, մի քանի օր յետոյ բերեց Կարին։ Նա ինձ վաճառեց մի ծերունի փաշայի, այնուհետեւ նրա ձեռի տակ մեծացայ։ Խալիլ փաշան, — այսպէս էր այս մեր տանը տէր, իմ բարերար և հայր ծերունու անունը, — ինձ դաստիարակեց, անձամբ սովորեցնելով ինչ որ գիտեմ։ Իբրեւ իր դուստրը նա լաւ էր պահում ինձ, վասնորոյ ես մոռացայ ծնողներիս յիշատակը, մոռացայ ամեն ինչ. քեզ պատմածից աւելի ոչինչ չեմ յիշում։

— Խալիլ-փաշան, — շարունակեց էլիֆ, — ծեր էր, մեզ նման զաւակ չունէր, նա մեռաւ ինձ թողնելով իր միակ սիրելի ամուսին Գիւլէր — հանրմի խնամքին։ Մայրաղբիւս էլ երկար չապրեցաւ իր ամուսնից յետոյ,



ինձ կտակելով իր ստացածքն և այս ապարանքը՝ մեռաւ։ Այնուհետեւ մեծացայ ես փարթաւ, ազատ կեանքով իբր զուտար և ժառանգ Սալիլ-փաշայի։ Մի օր ժան կըգայի թաւրիզ—զրան մօտերը, երբ երեք զինուորական փաշաներ մեր դէմն ելան։

— «Հանրմ,—ինձ մօտենալով ականջիս փսփոսաց սպասունին,—սրանք են այն երեք զօրագլուխները, որ չորս տարի առաջ Նրեանն առան, 300 մարդով 12,000 պարսիկ կոտորեցին, նրանց զիւղները գազանների կերակուր արին։

— Այդ մէք էին,—հարցուց Յիրատ։

— Այո, սիրելիս, մինը զու էիր, մինը ֆէօն—Չաւուշը...

— Մինն էլ Մահմուտ-փաշան...

— Այո։ Ես տեսայ քեզ, սիրահարւածի պէս չէի ուզում աչքից հեռացնել։ յիշում ես, երբ մօտերովս անցաք, զու խիստ կերպով սկսեցիր ինձ նայել, ես էլ՝ իբրեւ թէ պատահմամբ, քողը կիսովին բացի և դէմքս քեզ ցոյց տւի...

— Յիշում եմ՝ սէրելիս, այն օրից ըսկըւած սիրահարւեցայ քեզ վրայ, պատգամաւորներ ուղարկելով խնդրեցի ամուսնանալ։ զու էլ, չըմբռնեցիր և սիրայօժար յանձն առար։

— Ինչպէս յանձն չառնէի, Յիրատ ջան, —ասաց էլիֆ,—ամուսնի երեսը համբուրելով, —այնուհետեւ քունս կտրւեցաւ, զու աչքիս առաջն էիր, ես հարձուփորձ անելով իմացալ քո ու լինիլը, քո բնակարանը, գուցէ ես քեզ պատգամաւոր ուղարկէի՝ եթէ մի օր ուշանայիր ձեռս խնդրել...

— Տիկին, —ասաց սպասունին զուռը բանալով,—ճաշը պատրաստ է արդէն։

— Լաւ, այնտեղ սպասիր, հիմա տիրոջդ հետ կըգանք։

Սպասունին հեռացաւ, Յիրատ անվստահ կերպով,—էլիֆ,—ասաց նրա աչքերի խորքը նայելով,—արի ստոյգն ասա, իսպառ մոռացած ես քո քրիստոնէութիւնը, չես ցանկանում արդեօք նրանց հոգևոր արարողութիւններին մասնակցել։ Խնդրում եմ հաւատաս ինձ, չըպահես այդ սուրբ գաղտնիքը։ Ինձ համար միևնոյնն են՝ քրիստոնէութիւն և մահմեդականութիւն...

— Յիրատ ջան, —անկեղծ կերպով պատասխանեց էլիֆ,—ես արդէն ասացի, որ ոչ մի գաղափար չունիմ իմ հայրենի կրօնի մասին, եթէ մի մասնաւոր հաւատք ունեցած լինէի, չէի ներիլ ինձ դաւաճանելու։ Բայց եթէ մեռոնի պատրւակով ուզում էի գիտե-



նալ ծագմանս մասին, դա կապւած էր ծնող-  
ներիս գտնելու ցնորքին հետ:

— Քրիստոնէութիւնը վատ չէ...

— Եթէ վատ չէ, լաւ էլ...

— Լաւ, — հառաչելով հարցը փակեց Ֆի-  
րատ, հիմա ես հարցնեմ քեզ քո հայրենիքի  
մասին...

— Գնանք, Ֆիրատ ջան, — ասաց կիւնը  
ոտքի ելնելով, — ճաշենք, յետոյ շատ կը-  
խօսենք...

Հայթա — Ֆիրատ աղամայ ընդհատեց  
խօսքն ու ոտքի ելաւ: Սպասուհին արծա-  
թեայ կոնք ու սափորը ձեռին սպասուած էր  
դրան մօտ, այր ու կին լւացւեցան ու բազ-  
մեցան ոսկեղօծ բոլորակ սինու շուրջը, որի  
վրայ շարւած էին տաանեակ պնակներ՝ լի  
համեղաճաշակ կերակուրներով:

— Եթէ կիսախելագար Ահմատը գաթա-  
ները շներին կերցրած չլինէր, — դիտեց տի-  
կինը ժպտալով, — հիմա մեր ճաշը կատարեալ  
սեղանն անթերի կըլինէր:

— Հոգ չէ, էլիֆ ջան, շներն էլ սեղա-  
նով են ապրում:

Հայթա — Ֆիրատ չըմոռացաւ երկու մեծ  
բաժակ մաստիքայ խմել:

Դ.

Բղեխ Զիա փաշա

Կարնոյ և ողջ Անատօլի գինւորական-  
ների մէջ ամենից բարձր էր իր դիրքով ու  
պաշտօնով սէրաւէր (սպարապետ) Զիա փա-  
շան, մականւանեալն Շիմեակ (կայծակ):  
Երկու տարուց ի վեր նա բազմած էր բո-  
լոր Փոքր-Ասիայի Հայաստանի և Կիլիկիոյ  
բոլոր շխական աթոռին. իբրև փոխ-արքայի՝  
սնսահման իրաւունք էր տրւած նրան:  
Նրանցին յետոյ յայտնի էին Քէօփրուշու  
գաղէ Ապտուլլահ, Տամատ-Մուստաֆա՝ որ  
կայսեր փեսաներն էին: Սրանք երկու որոշ  
կուսակցութիւններ էին ներկայացնում, մի-  
նի գլուխն էր Զիա, միւսին Ապտուլլահ:  
Հայթա — Ֆիրատ պատկանում էր երկրորդ  
կուսակցութեան: Չըկարծէք՝ սիրելի ըն-  
թերցող, թէ այդ կուսակցութիւններն ու-  
նէին որոշ սկզբունքներ, տարբեր ուղղու-  
թիւններ կառավարութեան մասին. ոչ, դը-  
րանք գոյութիւն ունէին սիմիայն անձնա-  
կան շահու տեսակէտով: Ուստի Զիան իբրև  
պարագլուխ իր կուսակցութեան, միւս բա-  
նակին պատկանողներին հակառակ էր: Նա  
հակառակ էր աւելի Հայթա — Ֆիրատին, քա-



նի որ եռանդուն գործողն էր նա, բայց չէր կարող շօշափելի ապացոյց ձեռք բերելով տապալել: Խոհեմ, շրջահայեաց և լուրջ էր Հայթան, նաև յայտնի իբրև անվախ, խօսքից գործի, վիճից գէնքի դիմող մարդ, ուստի զգուշանում էր՝ ոչ միայն ինքն՝ այլև իր կուսակցութիւնը խաղալ այս տարօրինակ մարդու հետ. ոչ ոք չէր փափագում նրա հետ հաշիւ ունենալ, նրա կատաղութիւնը գրգռել: Աւելի ընտրում էին՝ ոչ թէ իբրև ասպետ յայտնի կուել. այլ յաղթահարել դաւաճանութեամբ, առանց իրանց դէմքը ցոյց տալու: «Տաճիկը սայլակով նապաստակ է որսում», այս ազգային առածով էր դեկավարում Զիա-Շիմշակ, սակայն ֆիրատ նախազգալով, նրա մասին մի վատ, անկերպարան բնագրական կասկած ունենալով, զգուշանում էր բացարձակ հակառակութիւնից: Գիտենալով, որ Զիան միշտ օգնում է իր հակառակորդներին, ամեն տեսակ շահաւէտ գործերի նրանց ուղարկում, փառք պատիւ նրանց շնայլում: Իսկ իրանց ոչինչ: Նա կասկածով վերաբերւելով փոխարքային, չէր վստահանում նրա յանձնած գործերն ի կատար ածել: Ուստի սկսւած էր փոխադարձ դաւադրութիւններ:

Ահա այսպիսի իսկական կուսակցութիւններ շարունակւելով մինչև մեր օրերը երիշերինների բարձումից շատ յետոյ, դարձան իբրև թէ երկու որոշ սկզբունքների վրայ հիմնւած կուսակցութիւններ, պահպանողական եւ ազատամիտ: Պահպանողականները՝ պատկանում են ներկայ մարդախանձ սուլթանական ուժերին, ազատամիտները՝ ներկայացուցիչ են Ազատամիտ-Թուրքիոյ: Պահպանողական՝ որովհետև իրանց որկորներն յազենում են փշրանքներով, ազատամիտ՝ որովհետև միշտ քաղցած են ջուր: Բայց՝ ի մօտոյ քննելով թուրքին այդ դիմաւորների տակ, գտնում ենք միևնոյն անկիրթ, միևնոյն անխիղճ, միևնոյն գազանաբարոյ խոստանը, որ այդ բռուկն Եւրոպայից գողացած՝ քողարկել են իրանց ինտրիգական պատկերները: Ազատամիտ կուսակցութեան ներկայացուցիչ, Եւրապայում կրթւած, որ աւելի ճիշտն է, հատուկապէս բաներ սովորած, Մուստաֆա-պէյը չէ տարբերում բոլորովին անուս, մէտրէսէներում ցեխոտւած Ալիից, որ էֆէնտի, փաշայ կոչւածով, դրօշակիրն է սուլթանի, միևնոյն ֆանատիկոս, տարբեր ֆանատիկայով. միևնոյն արիւնախանձ, միևնոյն իրեշաբարոյ էակներն ես տեսնում,



որոնք մէկ մէկից տարբերութեամբ են անձնական շահերով և եթէ կամ պօլիթիքական ձևերով: Եթէ երբեմն ազատականների ձայնն հասնում է եւրոպական թերթերին, դա ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ խրատուիլակ, խաբեբայութիւն՝ յանուն հին ռէժիմի ապալման, որովհետեւ ցանկանում են արտաքին աշխարհներից աջակցութիւն գտնելով՝ անցնել դեկի գլուխ, դառնալ աւելի շրջահայեացքունակախներ:

Նրանց ազատամիտները զուրկ են բարոյական բարձր, մարդասէր, կուտուրական սկզբունքներից, դաստիարակւած չեն բնաւ, այլ ուսած՝ ինչ որ կարող է պարունակել իր մէջ իրանց փչացած գրականութիւնը, ոչ թէ Սարակինոսների՝ որ սուերն էր յունական հանգեալ փիլիսոփայութեան: Նրանց աշխարհահայեցողութիւնը չէ տարածւում դուրանի կողերից հեռի:—Բացառութիւնն անշուշտ յարգւում է:—Ազատամիտ թիւրքերից շատերին հետ ի մօտոյ ծանօթանալով՝ չեմ գտած զարգացած մարդ. միակողմանի մասնագէտներ, լեզւաբաններ, բանաստեղծներ, թարգմանիչներ են աւելի՝ քան զիտնական, լայն զարգացման տէր անձինք: Նրանք հետևորդ լինելով ֆրանսական գրա-

կանութեան՝ միայն սիրային վէպեր են տեսնում, քաջածանօթ են Տիւմաներ, Ժիւլ—վէրներ և այլն, ստէպ արտասանում են յայտնի անուններ, Հիւլօ, Ռընան, Սանտօրֆ, Դարւին և այլն՝ որ անգիր են արած մատենագրութեան պատմութիւնից, Հիւլօն՝ Դրէպլերի, Վօլթրըսթօթը՝ Հայմանի հետ շփութելով, առանց որոշելու բանաստեղծն՝ իմաստասէրից, վիպասանն՝ հնախոյզից, առանց ըմբռնած լինելու նրանց ուղղութիւնները, գէթ տարրական կերպով: Այս կարգին են պատկանում մեծաւ մասամբ անկրօն թիւրքերը, բայց ինչո՞ւ են անկրօն, բացառութիւն է գիտական ֆակտերով զինւած, իր ուղղութեան մի շատագով գտնել, մի ներկուռանհատ, որ փաստօրէն անպացուցանէ, 'ի լոյս բերէ իր սկզբունքները: Որովհետեւ կարգացած են, Մեօթ. Տէյնա, Շիրաւս եղել են նրանց մէջ, որովհետեւ Գալիլայում իրանց ընկերներն անկրօնութիւն են քարոզում, իրանք էլ անկրօն են: Ահա նրանց առաջին և վերջին փաստը, միակ գրամագլուխը:—Մահմէտը խաբեբայ է,—ասում են,—նա առ աչօք տեսիլներ էր մատնւում, ցնորքների մէջ ձիւրէյլլը (Գաբրիէլ) տեսնում, նրա դուրանը քրիստոնէական, հրէական, հեթանոսական կրօնների



և իր դարի բժշկականութեան մրուրն է։ Նրա մէջ չըկան գերագոյն յայտնութիւններ Աստուածանիցնկատելու չափ ևայլն։ — Ուրեմն իմ յարգելի ընթերցողը կարող է հակիրճ ասեալ մի քանի խօսքովս ճանաչել այդ երկու կուսակցութիւններին։ Մինը բոլորովին տգէտ, մոլեռանդ, միւս թերեւ անկրօն։ մինը կեղեքում է յանուն կրօնի, հարստահարում յանուն դուրանի։ Միւսը սխալ կատարէ նոյն բանն աւելի լրջութեամբ յանուն որկորի և ազգայնութեան։ Մինը բնագոյնով շարժող գայլ, միւսը գիտակցութեամբ որսացող աղւէս։ Մինը սանձահարում է երբեմն կրօնի սանձով, միւսը լայն ճարակ գտնում անդուսպ կրքերի։ Այս, կարելի էր նոր սերնդից, ազատամիտներից շատ բան սպասել՝ եթէ հիմնական դաստիարակութիւն ունենային՝ իսպառ գերծ դուրանի ֆէլմենքից։ Ահա սրանք են Տաճկաստանի այս աւուր ներկայացուցիչները և սիւնոյնն էին ենիչեւերիների ժամանակ...

Զիա փաշայ, որն աչքի առաջ բերելու համար բաւական է մի բանի խօսք, նստած էր իր սլաշտօնական դահլիճում. ծալապատիկ կծկւած օճաղի գլխին, պատաստւած կանաչ, կլապիտոն անկւած վերարկուով։

Նստած տեղից երևում էր ոչ այնքան բարձրահասակ, ոսկրոտ, ջղային, հազիւ յիսուն տարեկան մարդ լինելը։ Գլխի հաստ պատասանն իր թէրաստների տակ էր ծածկուած նրա դաժան, կմախքային դէմքը՝ գայլի աչքերի պէս պաղ, անարկու, բոլորակ, երփներանգ աչքերը։ Նրա կշտին նստած էր նոյնպէս մի մռայլ խառնածին՝ երենոսի նման կիսափայլ, սև դէմքով։ Նրա գլխի դուռը մաշկերը, կարճ բեխերն ու մօրուքն սպիտակին կըտային, հաստ շրթներին, սև, կարկեհանի պէս փայլուն աչքերին, երենեայ դէմքին նսեմութիւն տարածելով։ Դա Պօշնակ-Համտի փաշան էր։ Մօքքայի ընտիր սուրճը՝ ոսկեղէն զառֆերով դրած էր նրանց առաջ, երկար չիպուղներից բարձրանում էին ծխային ալիքներ, զանազան քմահաճ ձևի ամպիկներ յօրինում նրանց գլխին վերև։

— Համտի, — սուրճը շրթունքին տանելով՝ հուսկ ուրեմն լուծիւնն ընդհատեց Զիա — փաշա, — ուղղակի գրգռել դրանց թշնամութիւնն՝ անխոհեմութիւն է։ Ապառուլւան և իւրայինք մեծ ազդեցութիւն ունին պալատում, կարող են վեղ յաղթահարել, կարող են իսպառ ջնջել...



—Անշուշտ այդպէս է,—հաստատեց Պօշ-  
նաք— Համտի:

—Կարծեմ նրանք էլ հանգիստ չեն մը-  
նում...

—Անտարակոյս հանգիստ չեն, երբ ու-  
զում ես իմանալ մէկի լաւ՝ կամ վատ յա-  
րաբերութիւնը քեզ հետ, քննիր սրտիդ խոր-  
քը: Ինչ որ դուն ուզում ես ինձ անել,  
նոյնը կըխորհիմ ես: Նրանք զգում են, մենք  
էլ զօրացնում ենք կասկածը նրանց մէջ:

—Ես էլ այդպէս եմ հասկանում, Համ-  
տի. քանի դեռ ուշ չէ, պէտք է միմիւր մէջ  
գործել, ջախջախել Ապտուլլահի ոյժերը:

—Հապա, ինչպէս, —լայն շրթունքը  
բացանելով, սուրջը շօշափելով, հարցուց  
խառնածիւնը:

—Դաւադրութեամբ...

—Ինչպէս կարող ենք դաւել, քանի որ  
զինւորական ոյժը նրանց կողմն է, միայն  
Մուխիյէով (քաղաքական պաշտօնեայ) ինչ  
կարող ենք անել... դու չըզիտեմ ենիչե-  
րին:

—Լսիր, բարեկամ, Տամատ-Մուստա-  
ֆան էլ ամբաստանւած է, մնում է Հայթա—  
Յիրատի բախտն անորոշ:

—Հէնց դա է ամենամեծ թշնամին. դա

է իր խմբի խելացին, դա՛ որ ենիչերին կա-  
րող է շարժել:

—Այո, ես էլ հեշտութեամբ պիտի տա-  
պալեմ:

—Հեշտութեամբ.—հարց տւեց և պա-  
տասխանեց Համտի գաւաթը մի կողմ դնե-  
լով, քթից, բերնից ծխային հեղեղներ ժայթ-  
քելով՝ աչքերն անթարթ դաւակցին սևեռած,  
—Ի՞նչ, հեշտ, դու զառանցում ես՝ Զիւ.  
Ես ասացի արդէն՝ նա բանակի հոգին է,  
կարող է քեզ էլ, ինձ էլ մի ակնարկով կա-  
խել տալ պատահած հացագործ խոտորջրցու\*)  
ձեռք:

—Այդ այդպէս է,—ժպտելով ընդհատեց  
Զիւ, նա կարող է յաղթահարել մեզ՝ եթէ  
ուղղակի գործենք, բայց ինչ կարող է ա-  
նել այն պարզամիտ, վեհանձն առիւծը, երբ  
մենք առանց երևելու՝ իր ձեռքն իրան կա-  
խել տանք:

—Քեզ չեմ հասկանում, բարեկամ...

—Կարող ես չըհասկանալ. Պօշնաք, բայց

\*) Խոտորջրցիք Հայ-կաթոլիկներ են Կարնոյ  
այդ անուն գաւառում և պարապում են հացագոր-  
ծութեամբ. կախելու իրաւունքն հին ժամանակից  
երևի հացագործերինն է, որ նրանք էին կատա-  
քում, թէև ակամայ, դահճի տգեղ պաշտօնը: Ս.



երբ միաքս բացատրեմ, դու իսկոյն սէլա-  
ւէթ (երկրպագութիւն) պիտի բերես... Ես  
Համոյի, նրան պիտի խեղդեմ դուրանի նւի-  
րական թոկով:

— Դժձձձձ շատ հետաքրքիր ես խօսուում:

— Ծանօթ ես Թիրատի ընտանեկան  
կեանքին:

— Ո՛չ այնքան...

— Լաւ, Թիրատ սիրահար է իր միակ  
կնոջ, Էլիֆին, որից ամենեւին զաւակ չէ լի-  
նում. այդ իսկ պատճառաւ նա հարբում է  
միշտ: Ի՛նչ կասէիր՝ եթէ մի լաւ ընթերիք  
սարքէի, լաւ խմացնէի, յետոյ մեր արծա-  
թասէր ծուռ-բերան դադին կաշառելով, նրա  
վրայ արձակէի, հրաժարեցնէի շառթով  
(ուխտ), որ միւս անգամ խմելուն պէս՝  
լուծւի ամուսնութիւնը... Մի քանի օր յե-  
տոյ կրկին արբեցնէի, ես ինքս խլէի գեղա-  
նուշ Էլիֆը...

— Հրաշալի, — մրմռաց խառնածինը մի  
գարշելի ժպիտով, — Թշնամին հնարագէտ է  
շինում մարդուս:

— Այո՛, հրաշալի միտք...

— Արդեօք գործն այդպէս կը գնայ, Էլիֆ  
կամուսնանայ քեզ հետ:

— Թէն դա հարց է, բայց՝ դադուն հետ

այնպէս կը կարգադրենք՝ որ անշուշտ իմ ու-  
ղածին պէս լինի հետևանքը: Հապա՛, Համոյի:  
Թշնամուն թոյլ կողմից կը զարնեն. Հայթա-  
յի թոյլ կողմն արբեցութիւնն է:

— Բայց՝ Զիւն, դժւարին և վտանգաւոր  
միջոց է:

— Դժւարին է՝ բայց՝ ո՛չ վտանգաւոր:  
Ղուրանի շէրիէթով (օրէնք), շառթով երբ  
բաժանւած է լինում կինը, պէտք է ան-  
պատճառ նիւլուլա (խայտառակ) լինի մի օր  
օտար տղամարդու հետ ամուսնական նիփա-  
նով (ապահարզան) և ռաթով: Ես այնպէս  
կը կարգադրեմ գործը՝ որ Էլիֆն ինձ մնայ,  
Թիրատ ուզէ չ'ուզէ, իր աչքով տեսնէ նրա  
իմ կիներէ շարքը մտնելը... Էլիֆ կատա-  
րեալ հուրի է, բանքեր (կաւատ, մոցիքուլ)  
կիներն ասում են խիստ սիրունն է...

— Ղուրանի այդ տրամադրութիւնն հրա-  
շալի է, ժպտաց խառնածինը, — ուզած կինդ  
ձեռք կը բերես: Բայց՝ Զիւն, եթէ քո ասա-  
ծին պէս շարունակւի գործը, իրօք որ հրա-  
շալի դաւադրութիւն կը լինի: Կրօնի տոռաջ  
լուռ են լեզունները...

— Գիտե՛ս, այնուհետեւ ինչ կը լինի: Էլի-  
ֆը մի քանի օր պահելուց յետոյ՝ կը յանձ-  
նեմ տիրոջը, Հայթան իմ ստրուկը կը դառն-



նայ, որովհետեւ էլիֆ ինձանից յետ պիտի ուզէ, նախքան իմ բարեհաճութիւնը, յետ պիտի ուզէ բիւր աղաչանքով: Ես էլ, մինչեւ չըստորացնեմ նրան, մինչեւ մեր համախօսականին ստորագրել չըտամ, չեմ յանձնիլ էլիֆը... անհ իմ դաւի յատակագիծը...

— Գէշ չէ, բայց մի քիչ Հայթա—Ֆիրատի նման գաղանները հետ այդպէս խաղալը վտանգաւոր չէ, վտանգաւոր չէ շոյել առիւծի բաշերն ի նշան գզլանքի...

— Է՛հ, Համտի, նա ի՞նչ կարող է անել ղուրանի սրբութեան դէմ: Շէրիէթի թերթերն ինձ բերդ ու պարիսպ կը ձևանան, նրա առաջ կը փշրւին բոլորի գէնքերն ու ծնկները... Ի հարկէ, ես համառօտակի պատմում եմ անելիքիս մասին, երբ սկսեմ, քեզ պէս բոլոր բարեկամներս կը փութան գործի, իմ հրահանգով, առանց խռովութեան, անադմուկ մեր ստրուկների շարքը կը մտնի հօր Հայթան:

— Լաւ է ուշ, քան շտապով, — ասում է առածը: Ֆիրատի նմաններին հետը չը պէտք է թեթեօրէն գործ սկսել, այլ լուրջ մտածելով մի քանի անգամ չափելով, կշռելով...

— Անհոգ կ'աց, Համտի, այդ մասին ամիսներով եմ մտածել, բոլոր յատակագիծը

մանրամասն պատրաստել: — Նրանք գուցէ դեռ երկար շարունակէին իրանց խորհրդակցութիւնները, եթէ Ֆէրսէ չաուուին (սենեկապետ) ներս չը գար, երկրպագելով բղբշին, մեղմ կերպով չասէր.

— Նորին վսեմութիւն՝ Հայթա—Ֆիրատ փաշա, սպասում է ձեր վսեմութեան ներկայանալու:

Դաւակիցներն իրար երես նայեցին ժպտալով:

— Ներս հրաւիրէ, — հրամայեց Զիա, երբ սենեկապետն հեռացաւ, իր մտերմին դառնալով շնչաց, — շունը յիշիր, պոչը հետը, — ասում է առածը, — նրա մասին էլիք խօսում, նա մեզ մօտ է եղել, չէ, Համտի, դա բարի նշան է: Մանաւանդ այսօր իմ բարի օրն է՝ ասում էր աստղագէտս:

Հայթա—Ֆիրատ խրոխտ կերպով ներս մտաւ, ձեռը սրի երախակալին դրած, սովորական պարզ բարեւ տալով՝ բազմեցաւ բղբշի դէմ. վերջինս իր ծառաներին ձայնեց:

— Ազամէթ, Ալի...

— Ներկայ ենք, էֆէնտիմ, — լսեցաւ դրան ետևից:

Ազամէթը մի երկար չիպուղ ձեռին



ներս մտաւ, և քիչ յետոյ Ալին սուրճ բերերեց վսեմափայլ մեծ հիւրին:

— Որպէս է ձեր վսեմութեան պատւական անողջութիւնը. — հարցուց Զիա փաղաքուշ ձայնով, — լաւ են մեր որդիքը, քաջութի ենիչերիք, ախոյեան հայթաներդ, խիզախ դէլիները...

— Օրհնում են վեհափառ սուլթանի կեանքը, — պատասխանեց Ֆիրատ լուրջ կերպով, — բայց՝ նեղացած են ձեր վսեմութիւնից, այսօր չեն ուզում քային (բաժին) բաժանալ:

— Թային չեն ստանում, — աղաղակեց Զիա գունատելով և ակնապիշ դառնալով Պօշնակին, մինչ նա՝ իրանից ոչ նւազ ահաբեկ, շանթահարի հայեացքով, դարձած էր Հայթային:

— «Ենիչերին թային չէ ընդունում», — նախադասութիւնն ընթացաւ կայծակի արագութեամբ սարայի բոլոր քունջ ու պուճաղներում, սարսափ ազդելով բոլորին:

Ենիչերին թային մերժելու ժամանակ իր արեան ծարաւի լինելն էր յայտնում. այդ ծարաւն յագեցնում էր սուլթանների, վեզիրների, սպարապետների, բզեշխների արիւնով: Դա ենիչերու ապստամբութեան

նշանն էր, այդ պատճառաւ մահան արհաւիրքը սառն հոգմի պէս ողորեց Զիայի հոգին: Մագերը փշաքաղեցին, իմացականութեան խորքին մէջ պատկերացաւ յանկարծ իր քստմնելի մահը:

— Բայց՝ ինչո՞ւ, — մրմնջեց դարհուրած, դողալով, մի ժամ առաջ անարկու բղեշխը, — պատճառն ի՞նչ է թային մերժելու:

— Ռոճիկ են պահանջում:

Այս պատասխանն յուսադրեց նրան. կորով ստանալով ուղղեցաւ, շեշտակի Ֆիրատի աչքին մէջ նայելով:

— Միայն այդ է, — հարցուց:

— Ո՛չ, մի այլ պայման ևս ունին ձեր վսեմափայլութեան մասին:

— Ի՞նչ... ի՞նչ են ուզում. — զրեթէ անզգայացած աղաղակեց եղկելի կերպով. — արեան ծարաւն են, Աստած իմ:

— Հանդարտեցէք, վսեմաշուք տէր, ձեր արիւնը պիտ խնայեմ ես. ես դեմ եմ ձեզ կախելու գաղափարին, բոլոր ենիչերիք յարգում, սիրում են ինձ, նրանք չեն կարող իմ որոշումներից շեղել: Հանդարտեցէք, ես ձեր կեանքին երաշխաւոր եմ. երաշխաւոր եմ ձեր պատին ու գոյքին:

Կնճոռոտած էր Զիայի կմախքային դէմ-



քը, ուր երևում էին զարհուրանք, սոսկում  
և մի տեսակ թալկութիւն, իսկ խառնածինն  
իր խոշոր աչքերի ձերմակուցքն էր փայլե-  
ցնում, երկիւղից բեբերը թերթերունքների  
տակ ծածկում:

Հայթա—Ֆիրատ խորագննին նայած-  
քով՝ փոփոխակի դիտում էր դաւադիրների  
գունատութիւնն և.—անիրաւներ.—ասում  
մտովի,—որչափ վախենում են, մահն աչքի  
առաջ բերելով...

—Փաշա էֆէնտի,—ձայնը բարձրացուց  
Ֆիրատ,—պատասխանեցէք ինձ, ի՞նչ պիտի  
սպէք զօրքին...

—Բայց Ֆիրատ,—ինքզինքն ամփոփե-  
լով հարցուց Զիա,—ի՞նչ են կամենում ենի-  
չերիք, ի՞նչ պայման ունին ինձ հետ:

—Նրանք պահանջում են ձեր վսեմու-  
թեան բղեշխութիւնից հրաժարելը, պահան-  
ջում են հինգ ամսական: Ուտելու փող չու-  
նիմ, ասում է Նազիմ-պէյ,—սիրականս շորեր  
չունի,—խառնելում է Մէհտի-պէյ,—մենք  
ինքներս ի՞նչ ունինք,—ձայնակցում են միւս-  
ները.—գնանք, բնաջինջ անենք Զիան: Այ-  
սօր չեն թողել խոհարարներին կերակուր  
պատրաստելու,—սարայում կըճաշենք.—ա-  
սում են բոլորը,—Զիա փաշան հաց և սի-

րուն կիների ջուր ունի: Հիմա արդէն այս-  
տեղ կըլինէին, եթէ չիմանայի, շուտով ո՞ր-  
վու՞ (զօրանոց) գնալով չ'արգելէի նրանց,  
չ'երդէի կամքերը կատարելու:

—Ամսականները թող տըլի,—շշնջաց  
Զիա—բայց՝ հրաժարել ախար ի՞նչ պատ-  
ճառաւ, ես նրանց ի՞նչ եմ արել, ինձանից  
ի՞նչ վատութիւն են տեսել առանց Վ. սուլ-  
թանի հաճութեան...

—Վսեմափայլ տէր,—ընդհատեց Ֆի-  
րատ,—նրանք պահանջում են ամսական-  
ներ, ասում էք՝ թող այդ տըլի...

—Այո, վսեմափայլ տէր, թող տըլի...

—Բարի, այսօր կըվերջացնէք այդ հար-  
ցը, կըգրէք ձեր հրաժարականն՝ այսօր իսկ  
կըյանձնէք գործերը ձեր մուալիմին (օգ-  
նական), ես կըհամոզեմ նրանց սպասել մին-  
չև Վեհ. սուլթանի բարձրագոյն կարգադրու-  
թեան գալը...

Ֆիրատի վերջին խօսքերը ոգևորեցին  
Զիային, նա նոր յոյս ստացաւ, գոհութեամբ  
աչքը Հայթայից չըհեռացնելով,—Վսեմա-  
փայլ տէր՝ ասաց—շնորհակալ եմ, գիտեմ՝  
որ ձեր խօսքն անկեղծ է և յարգելի, ու-  
րեմն, այսօր իսկ կըգրեմ հրաժարական, կը-  
յայտնեմ Վ. սուլթանին...



—Արդէն յայտնւած է, էֆէնտիմ,—  
կանխեց Ֆիրատ,—չորս կամ հինգ աւուր  
սուրհանդակն այստեղ կըլինի, կըբերէ բարձ-  
րագոյն Ֆէրմէն (հրովարտակ), դուք ձեր  
հրաժարականը պիտի գրէք, ինձ յանձնէք,  
իսկ պաշտօնն այսօր և եթ տալու էք ձեր  
մուտքին:

—Ուրեմն արդէն գրւած էր...

—Գրւած էր՝ ոչ միայն մեծամեծներից,  
ձեզ ենթակայ կուսակալներից, այլև՝ բոլոր  
ազգերից...

—Տէր իմ,—հերկայացաւ Ֆէրտէ չա-  
ւուշ բղեշխին,—մի խումբ ենիչերի պէյեր  
եկած են սարայ...

—Ի՞նչ են ուզում,—մըմռաց Ձիա դո-  
զահար:

—Ասում են՝ «մենք անհամբեր սպա-  
սում ենք վսեմափայլ Ֆիրատ փաշայի բա-  
նակցութեան վախճանին. ուրեմն՝ գնա, իմաց  
տուր, որ տէրդ, վսեմափայլ Ձիա փաշան՝  
կարճ կապի»...

—Լաւ,—միշամտեց Ֆիրատ բարկու-  
թեամբ,—դու էլ կարճ կապիր, անպիտան,  
եթէ ոչ հիմա վայրահաչ լեզուդ վզակոթիցդ  
կըհանեմ... շատ բան կըլսես, անասուն, պէտք  
է քիչ խօսես: Գնա, բարեւ արա պէյերին,

ազաներին՝ թող չըձանձրանան, ես հիմա  
կըգամ, ամեն ինչ կարգադրւած կըլինի:

Սենեկապետն ակնածութեամբ համբու-  
րեց Հայթայի քղանցն և զգուշութեամբ հե-  
ռացաւ:

Նոյն բոպէին բղեշխը քէզփիւէ (հրաման)  
գրեց սարափ Յակոբի հասցէին պէտք եղած  
գուժարն յանձնելու Ֆիրատ փաշային, գրեց  
հրաժարական և աթոռն յանձնեցաւ փո-  
խանորդին:

## Ե.

Դաւադրութիւն

Ֆիրատի հեռանալուց յետոյ՝ Ձիա փա-  
շա հանգստացաւ, սակայն՝ գիտենալով որ  
մի քանի օր յետոյ անպատճառ պիտի տա-  
պալի, քանի որ ինքն հրաժարական էր տւած  
և արդէն գործն յանձնւած փոխանորդին,  
զըզուեցաւ ատելութիւնը դէպի Հայթան,  
որին շատ իրաւունք ունէր հեղինակ և պա-  
րագլուխ կարծելու ենիչերիական «ահաւոր  
շարժման»:

Ուստի որոշեց իր ծրագիրն իրադրծել  
անյապաղ՝ նախ քան բղեշխութիւնից իսպառ  
աապալւիլը: Այն օրն իսկ տեսնեցաւ ճոխ  
խրախճանի պատրաստութիւն, հրաւիրեցան



բոլոր յայտնի փաշաները, պէյերը, աղաները, նշանաւոր զինւորականներն ու իւլէմները (զիտնական):

Մի սիրուն լուսնկայ երեկոյ էր: Փաշի Քէօջքի ընդարձակ պարտիզում փռեցան գորգեր, կապերաներ, գրեցան բարձեր և աթոռներ: Մի տեղ եփուում էր սուրճը, մի տեղ խոհարարն իր հարիւրաւոր կերակուրները պատրաստում, միւս կողմում շէրպէրնիս (օշարակ շինող) գոյնգոյն օշարակներ լեցնում, չիպուղճին երկաթէ թելով մաքրում, սրբում մի խուրձ չիպուղներ, մինն էլ նըստած լեցնում էր Պաֆրայի (Սամսունի վիճակում գիւղաքաղաք) ամենաընտիր ծխախոտով:

Ահա հետզհետէ հաւաքւում են վսեմափայլ հիւրերը, Ազամէտ ներկայացնում է չիպուղը և նրա պարագաները, Ալի ունելիքով կրակ, մի ուրիշն էլ սուրճը ձեռքին մօտենում իսկոյն: Ապա շէրպէթճին կրգայ, ոսկեթասերով կրմատուցանէ անուշահոտ ըմպելիներ, մի քանի անգամ շրջելով, կրկին և կրկին պատւելով հիւրերին: Մի շարք փաշաներ՝ Զիայի խմբից բիշ հեռու, մի խուլ անկիւն քաշւած, փոխանակ օշարակի խմում էին մի այլ հեղուկ. մաստիքա, կարծես զգու-

շանում հրապարակաւ խմելուց, երեւի անախորժ էր դա այդտեղ բազմած մեծամասնութեան:

Հանդիսականների մէջ աչքի էին ընկնում մի խումբ կանաչ ապարօշով, ոտից մինչև գլուխ սպիտակ հագւած, կարմիր կօշիկներով,—որ մի ժամանակ Հոռմի կայսրներին և Տիգլաթնի թագաւորներին էր յատուկ,—երկար եսէմէն չիպուղները ձեռներին ծալապատիկ նստոտած իմամներ, շէյխեր, մուֆտի և մեծ-ղատի, որոց ձեռքն է ընդ միշտ զուրանն իր բոլոր անհասկանալի էջերով, այլթներով ու ֆէալէմներով:

Ձեր երևում նրանց դէմքերի վրայ ժպիտ, ծանր, սառն, Պիկմալիօնի պէս կասկածոտ լըջութիւն միայն, որ աւելի ծիծաղելի քան պատկառելի էր, օտար դիտողի հայեացքում: Նրանց խօսակցութեան արտաքինը ծանր, բառերը շեշտելով էին արտաբերւում, թէև չնչին և յիմարական լինիր նիւթը: Նրանցից անւանի և մեծազիրներն ախորժում էին միմիայն զուրանից, Զէնկ-քիթէպից, պիւնպիւր կէճէլերից (հագար և մի գիշերներից) և այլն արաբական վէպերից՝ կամ ըուսուլահ-Մուհամմէդի կեանքից խօսել, ախորժակով պատմել, իբր իրողութիւն ստո-



րողել, ինչ որ Ապուլէքը, Սէնճանի և այլք աւանդած էին իրանց մատենագրութիւններում, թէ և այդ աւանդութիւնները ազեղ և զգուշի բարեկիրթ մարդոց, գլխովին անբարոյական, բայց՝ հիմունք լինելով իսլամական գէնին՝ չէին պատկառում ծանրաբարոյ իւլէմէները հրճանքով պատմել։ — Օրինակ այս հատւածը Մուհամմէզ րուսուլլահի կեանքից։ — Ութսուն հազարից բաղկացած բանակում յայտնւում է րուսուլլահն, ամեն մարդու ցանկացած սեռով երևում... և այլն։ Անշուշտ խորշում ենք մեր ընթերցողի լսելիքը զգուշացնել այդ հատւածը լիովին դնելով, միայն հետևանքն ենք յայտնում։

«Մուհամմէզ անառակելով իր զօրքն ուղարկում է պատերազմ, գեաւուրների աշխարհներ, սրով արիւնով քարոզել յորդորում իր ցնորքների, թալկութեան ժամանակ երևակայած հազրէթի (սուրբ) Ալլահի գէնը»։ Միթէ՞ ներելի է Ալլահին անբարոյականութեամբ շագաթւած երեւել, և այնպէս պահանջել իր հարազատ հետևորդներից, որոց համար պատրաստած է ջէննէթ, իւրաքանչիւր անհատին քառասնական հուրի ու փէրի (ոգի), Ագամանդէ պալաաներ, մարդարտայեռ դարպաաներ, վարդի բոյրով օթոցներ, ծիածանից պարեգօտ, արշալուսից ճեր-

մակեղէն, աստղերով ընդերուզւած՝ բիւրազան շամանթաղից գօտիկներ և այլն, խոտանալով ինչ որ մեզ պէս մահկանացուների երևակայութիւնից, հասողութիւնից դուրս, հեռի և շատ հեռի, միայն իսլամին հասկանալի, հաղելի է կանգնած մահմեդական եթերքում։ Դեռ սրանք, ազնիւ ընթերցող, մահմեդականին հոգեկան բերկրանք ազատող էջերից են, որոնցով կըսլանայ նրա հոգին դէպի ջէննէթ։ Գրիչ չէ՞ զօրում, խորշում է տողել նրանց այն հատւածներից, որոնցով մանկութիւնից շագաթւում է իսլամի հոգին, յայտնի անառակներ, արիւնխուտ զազաններ ձուլելով նրանց, մարդկային ընդածին մտաւոր և զգացողական հանգամանքները ջնջում հոգու խորքից, խիղճն իր խայթոցներով մահացնում, դուրանի այէթներն ունակութեամբ կամք ձևացրած, նրա գարշելի սկզբունքներով դեկավարւում։

Այսպիսի յաւիտենական միատեսակ քարոզներ կրկնւում էին և խնճոյքների ժամանակ. հասարակական, կուլտուրական հարցերի տեղ բռնած էին միտախրական անհասկանալի զրքեր, լիտի, անամօտ աւանդութիւններ։ Հէնց այս ժամանակ հարցը ս. Մարգարէի մասին էր, պատմում էր նրա



կեանքից ծուռ-բերան դատին յափշտակութեամբ:

— Լոյս է մեր դէնը, — ասում էր նա, — վայ նրանց՝ որ չեն տեսնում իրանց հոգու երջանկութիւնը, նրանք ուրացողներ պիտի նկատուեն էնէր մէնէրի (դատաստանի օր) անեղ օրը, ուրացողների կարգին պիտի դասուեն բոլոր գեաւուրները, կռապաշտներն և ս. Մարգարէն չ'ընդունողները:

— Ուրացող, — լսեց այս բառը Ֆիրատ արբեցողների մէջ նստած, խմելու ժամանակ և ասաց իւրովի, — ուրացող, այդ ես եմ... Դուք ինչ ուզում էք քարոզեցէք, դրանք խորթ են իմ գլխի համար: Այո, ես եմ ուրացող՝ որ ապրումեմ ձեզ հետ... Ծն, մաստիքան, օղի պէտք է ինձ՝ որ թմրին իմ զգայութիւնները, թմրի խիղճն իւր մշտամրմունջ բողոքներով, թմրի հոգին իւր նախկին սրբազան դրոշմներով, որ հալ վարդապետն է կնքել ս. Աւետարանին էջերով, ինձ Սիմէօն հայր սուրբի նման մարդն է կրթել: Ա՛խ... ես խմանում եմ ձեր քարոզի լկտի սրտութիւնը, իւլէմներ, բայց՝ ընկած եմ... ընկած եմ, բիւր աւանդ ինձ, իմ անմխիթար ազգն էլ չունի յենակէտ, չունի կայան, եթէ ոչ, իմ սուրը՝ կը պատասխանէր ձեզ, իմ սուրն,

անյագ կը խմէր ձեր գարշելի արիւնից, մեր դաշտերին վրայ կը փռէի ձեզ արաբական աստղերից շատ հեռի... ու շատ հեռի:

Լուսինը դժգոյն լուսով գծագրում էր Ֆիրատի մելամաղձոտ և գեղեցիկ դէմքը: Մտածմունքի ժամանակ, նրա խոշոր, արծւի աչքերից գլորւեցան և մօրուքի անտառում կորան երկու կաթիլ արտասուքներ, մի մի խոնաւ ծիր թողնելով այտերին վրայ:

— Ֆիրատ, — զարմանքով դիտեց Տամատ Մուստաֆա. — դու լաց եղար սիրելիս, և ինչո՞ւ, այս նորութիւն է: Ի՞նչ եղաւ քեզ, չըլինի՞ թէ մեր ծուռ-բերան դատու ջէնէթը քեզ հրապուրեց, օ՛ն, քաջին արտասուքն անվայել է, եթէ ջէնէթում այդքան հուրին է ժան է, բա՛, ինքն ինչո՞ւ ժամանակ է անցկացնում, ինքն իրան չի սպանում ու զնում:

— Մուստաֆա — պատասխանեց Հայթան հառաչելով. — նրա նկարագրած Զէնէթն իրան պէս ցնորամիտների տեղն է, ես դրա վրայ չէի մտածում... Մտքիցս մի շարք տխուր բաներ անցան... Երբեք այստեղից, մի քիչ հեռու գնանք, թող մեզ չը համեն իմաստների խօսքերը, նրանք սարսափեցնում են ինձ... Դադափարները զուգորդւած էին Ֆիրատի



մէջ, ինչպէս իր ասածից կերևայ, քրիստոնէութեան ոգին հեռացնում էր նրան:

— Հեռանանք — միահամուռ վճռեց արբեցող խումբը:

Լուսինը խաղում էր ծառերի հետ, տերևների արանքներից կարծես արծաթի մանր ու խոշոր կտորներ փուռում էին այգուն մէջ: Սրբեցողներն ընտրեցին մի անատուեր տեղ, ուր ազատ թրպրաում էր լուսատուն կաթնաթոյր ծովակի մէջ...

Այս բոլորը չէին վրիպում Զիայի աչքից, նա բնական գտաւ նրանց հեռանալը. իսկոյն իր մօտ նստած մեծ դատուն դառնալով, ժպտագին փսփսաց նրա ականջին:

— Լօթիններն հեռանում են՝ ա. հայր, դիտեն որ իրանց այս արաբքը հաճելի չէ:

— Է՛հ, դրանք իսլամներ չեն, անառակներ են, միայն պաշտօնական օրեր գնում են մզկիթ այնուհետև չես տեսնում աղօթելիս:

— Նկատեցէք խնդրեմ. այդ չորսն էլ, Քէօփրուլու օղլին, Տամատը, Ֆիրատը, Սլի — Զէքին քրիստոնէի որդիք են:

— Գիտեմ՝ նրանք հետևում են իրանց կաթին հետ սրտերը մտած օրէնքին, — հաստատեց մեծ-դատին ծուռ բերանը բանալով:

— Վայելում է իսլամին:

— Զի՛ վայելում, բայց կանեն: Մենք անկարող ենք այդ սէգ առիւծներին զսպել, իսկոյն աշխարհն իրար կանցնեն: Նա քանիցս զրեցի Շէյխ-իւլ-իսլամին, պատասխանեցաւ քաղցրութեամբ յորդորել, կամ իսպառ աչք գոցել. զգուշանալ բռնութիւնից:

— Թէև բոլոր ենիչերիքն իսլամ չեն, սակայն՝ իսլամական կրօնը սովորելով քեզանից և ինձանից լաւ իսլամ են այսօր: Նրանք կարելի է մինչև անգամ չըզիտեն իրանց յունական, հայկական ծագման մասին, ջերմ հետևորդ են Բուսուլլահին: Ինչպէս ասացի՝ նրանց ծայրայեղ ազատ կաց ու նիստը պէտք է իրանց կեանքի պայմանների և ծնողների մէջ որոնել: Ժառանգական մի շարք սովորութիւնները, կանցնեն իրանց, ապագային որդիքը կը ձուլին մեր գաղափարով: Ուրեմն՝ չըպէտք է հետամուտ լինել բռնութեամբ:

— Շատ բարի, — մըմռաց Զիա՝ իսլամական մի ժպիտ ծածկելով էր փշաղած, խորշոմած դէմքի ակօսներում — կարելի է ուրեմն առանց բռնութեան սրանց յետ կանցնել կորստաբեր ուղղութիւնից, կարելի է դուրանի խօսքերով սանձահարել:



— Ես չեմ ըմբռնում ձեր վսեմութեան միտքը.

— Շատ բացայայտ եմ խօսում, ս, հայր, կարելի է այս երեկոյ իսկ՝ արգելել սրանց իրանց յօժարութեամբ: Ձեր սրբութիւնը կը ներկայանայ նրանց մէջ, յանուն օրինաց, համոզիչ խօսքերով ճառք անել կըտայ, վերջացաւ: Երկրորդ օրը կըյիշեն նրանք իրանց ուխտը, կըթողնեն արբեցութիւնը, որ գեաւուրներին է յատուկ, կըդառնան բարեպաշտ իսլամներ...

— Լաւ էք ասում, — ժպտալով պատասխանեց մեծ իւլէմէն, — միթէ՞ նրանք յանձն կ'առնեն, կըմտնեն շառթի, հարց է դա:

— Արբեցողն առատաձեռն, առատասիրտ է լինում, նա չէ խնայում իր կեանքը՝ եթէ խնդրողը լինի ձեր սրբութեան պէս մեծարոյ, պատկառելի անձ նրա աչքում...

— Մոռանում ես ուրեմն այն առածը, որ ասում է. — արբեցողի յանցանքը չի քննւում, նրանից բացակայում է ուժեղ կամք, բացակայում են դատողութիւն, կըթութիւն, նա միայն ընտանեկան դաստիարակութեան ցնցոտիներով է փայլում ոգելից ըմպելիքով ողողուն: Ուրեմն ի՞նչ արժէք ունի կամ պիտի ունենայ արբեցողի շառթը:

— Շառթը կարելի է եղծել:

— Ո՛չ բնաւ:

— Եթէ ձեր սրբութիւնը կամենայ, իսպառ կարող է ջնջել զազիր ախտն այդ ազնիւ փաշաներից, կարող է շառթ անել տալ, քանի որ ամեն տեսակ շառթ միւսնոյն է և կնքել տալ իրանց խօսքը, յետոյ լրջութեան ժամանակ իմաց տալ, այնուհետեւ նրանք չեն կարող օրէնքից դուրս գալ:

— Ես չեմ կարող համոզւիլ:

Խառնածին Պօշնաք — փաշան հայեացքով հետեւում էր իր դաւակցին, Զիա ոտքի ելնելով, մեծ դատուն տարաւ մի անկիւն, մի մեծ քսակ դնելով ափին մէջ՝ շշնջաց.

— Ձեր սրբութեան թող յայտնի լինի՝ որ այդ չորսին էլ սրտով եմ սիրում, բայց՝ աւելի ֆիրատին, որի ամուսինն այդ քսակը ձեր սուրբ անունով ինձ ուղարկելով, խնդրել է շառթ կնքել տալ, որպէս զի ինքն ազատւի նրա վայրագութիւններից:

— Եթէ՞ ոչ, Զիա, այս աւուր շարժման պտուղն է այս քսակը:

— Ինչ ուզում էք՝ համարեցէք...

Մեծ-իւլէմէն անմիջապէս քսակն անայտացուց և ազահ աչքերը Զիային սեւեռած՝ մըմուաց հազիւ լսելի ձայնով.



— Դուն ապահով եղիր... վերջանում է գործը, բայց՝ ահա ելի վրէժխնդրութիւն է սա՝ Զիւն:

Հատին իր քայլերն ուղղեց դէպի արբեցողները, Զիւն մի քանի բոսէ տրճանաջած դիտեց նրա երթան՝ ապա գոհունակ դէմքով վերադարձաւ դէպի իր խումբը: Սառնածինը նրա ճանապարհին վրայ ցցւած էր, դաւակցին ձեռք բռնելով:

— Ինչպէ՞ս, — մրմուռաց քթին ծայրով:

— Լռութիւն, Համտի՛, գործն յաջող է՝ շատ... այդ պատճառաւ հրամայած եմ ընթրիքն ուշ տալ... քալէ՛, մենք խմբին մէջ պէտք է լինենք...

Պայծառացած էր Զիւայի դէմքը. նա զսնկում էր հոգեկան ուրախ տրամադրութեան մէջ...

Մեր նախածանօթ լօթի փաշաները բազմած խմում էին և պատմում սիրային արկածներ, միայն Հայթա — Ֆիրատ պաշարւած մի անորոշ տխրութեամբ գուցէ նախազգացմամբ՝ Հանրի թագաւորի պէս տխուր անցքեր գուշակելով, կամ ինչպէս տեսանք մի անգամ, գուցէ ուժգնապէս վերականգնած էր խիղճն իր խայթոցներով, այդ իսկ առթիւ, թէև արբած, չէր ուզում բերան բա-

նալ, մասնակցել ընկերների զարճախօսութեան, կարծես զգուշ էր սիրային վէպերից, ցանկանում ինքն իր մտածմունքի մէջ ընկղմել, վշտերի դէպերն ողողել ակթօհօլով, ինքնամոռացութեան, անզգայութեան կարօտելով:

— Ֆիրատ, սիրելի՛ Ֆիրատ, դիտեց Ապտուլահ փաշա, — դու շատ տխուր ես, ի՞նչ ունիս:

— Սիրելիդ իմ, կան ժամեր՝ որ մարդ ցանկանում է չըլլնել:

— Դու քիչ առաջ արտասուցիր՝ Ֆիրատ, — մէջ մտաւ Մուստաֆա, — իսկ հիմա մեղամաղձով դէմքդ շղարած՝ չես խօսում, լուռ, տխուր վերցնում ես բաժակը, խմում ես մի մի ունակ, թէև արբած. որպէս աչքերդ են յայտնում իրանց ֆոսֆորային փայլով, բայց՝ չես զարճանում, երթալով նսեմանում ես...

— Սա ինձ զարճացնում է այսօր, Մուստաֆա, ո՛չ, անգոր է, փոթորկած եմ ես, տխրած եմ առանց պատճառը գիտենալու. չըղիտեմ ինչ կենդանի օրինակով պատկերացնեմ հոգիս...

— Սօսիր, խօսիր և տխրութիւնն ինքնին կըջքանայ. տրտմութեան միակ դեղը, բա-



ընկած, մտերիմ խօսքն է, սրտի բանալն է:

— Դու տեսնել ես Կ. Պոլսոյ ծովը...

— Ինչպէս չէ... ան, ես Սև—Ծովի ափին եմ բուսած:

— Լաւ. երբ օրը լինում է ջինջ ու պայծառ, հովերը լռած, ննջած անկուշտ ծովն իր արենախում փապարի մէջ, ծածկւած բիւրեղեայ վերարկուով, նրա հայելու նման՝ լուսավառ մակերևոյթի վրայ, ուստոստում են միայն արևի ոսկեփայլ ճառագայթներն ալեծածան շողշողալով պանում ափէ ափ: Յանկարծ զարթնում է նա: Երբ հնչում է թեթև հողմն՝ այլայլում է ջինջ հայելին, փոքրիկ ալեակներ վէտ ի վէտ ոտքի ելած, սարսուռի պէս սահում են յառաջ, անվերջ յառաջ մինչև յափն յառաջ: Հետզհետէ սաստկանում է քամին, փետուրների պէս հողմալար ամպերն երևում են իսկոյն, թխաթոյր կախում են նրա վրայ: Ծովն ալեկոծւում է, փրփրակուտակ ալիք ծայրատում, իրար ջարդում, փշրում, բորենիների վոհմակների պէս գոռնչելով դէպի ափերն են խուճապում, վերստին մրմուռով մոլեգին՝ անդրադառնում դէպի ծով, լեռնանում, իջնում, ափերն և ապառաժներն են կրծում: Ծովն ինքն իր մէջ է խեղդում տարերբի

կատաղութիւնը, ինքն իրան հեծեծում, մռնչում: Ո՛հ... Մուստաֆա, սա է մարդուն հոգուն քիչ նմանող: Այժմ ալեկոծւած է հողիս, ուզում է իր ափերը պատառել, անհրնարին բարկութեամբ դուրս ժայթքել: Թէ ի՞նչն է ալեկոծել նրան, թէ սրտեղից է հնչում այս ժանտաբոյր հողմը, սև վշտի յորձանքը, չեմ կարող որոշակի ասել, միայն ես ինձ գտնում եմ յուզւած, ալեկոծ, իմ մէջ ոտքի ելած խուռներամ, անկերպարան ալիքներ, որք իրանց լեռնանման անդնդահոծ դէզերով կամենում են ընկղմել ինձ... Իսկ ես ուզում եմ կուել ու մեռնել, բայց՝ չըզիտեմ ում դէմ, ում հետ, թէև այդ կուլը լինի անհաւասար... գոյութեանս պատճառի՞ն, եթէ ոչ իմ դժխեմ ճակատագրին դէմ... Օ՛հ անդր, բարեկամներ, — վերցնելով օդու բաժակը, — պարպում եմ այս անիծած մաստիքան այն օրհնած ծառի կենաց, որի կոտորուած, գօսացած, չորացած ոստերն ու արմատները՝ դեռ գարնան յոյսով, սպասում են թօթափել սառցեղէն վերմակը, սպասում են ամառան գեփիւռների հետ օրօրելու, օդասիւթ թռչունների բնակարան լինելու... — Տո՛ւր՝ երկինք, քո անկած գառամեալ ծառին կեանք և արև, տո՛ւր նրան գարնան և երգեցիկ



Թռչունների գուսան խմբեր, նրա կոտորած-  
լած, օտարացած ոստերն յայնժամ ուրա-  
խութեամբ կրվառեն նետուած հնոցներում,  
ուրախութեամբ կազմալուծուած ածիւն կը-  
գանան, աղբիւրի պէս կը պարարտացնեն  
արգաւանդ գաշտերն օտարին...

— Ֆիրատ ջան, մենք էլ ենք խմուած այդ  
հին ծառի կենացը:

Արեւոյնների դէմքերը մոայլ պատեց.  
խմեցին՝ գուցէ մասամբ հասկանալով Ֆի-  
րատի ալլաբանութեան սիրտը:

Նրանք այսպէս շարունակուած էին:

Լուռ Ֆիրատն այժմ փոխուած էր, այդ  
փոքրիկ ճառն արձակեց նրա լեզուի կնիքները.  
հեղինակէ չքացաւ կարծես տխրութիւնն իր  
մոայլութեամբ, բայց՝ խօսակցութեան նիւթն  
էր ոչ թէ սիրաբանութիւն, այլ խիղճ և ազ-  
նութիւն, կամ այսպէս ասած իրար չը-  
վատահելով՝ քրքրուած էին քրիստոնէական  
կրօնի մակերևոյթը, խղի, ազնուութեան,  
բարոյականութեան դիմակներով ծածկուած:

— Տղայք, իմ մէջ տնկական եմ գտնուած  
մի բան, մի վեհ, սուրբ սկզբունք, ասաց  
Ֆիրատ մի գաւաթ էլ պարպելով, — ինչ որ  
ուզում ես ուրիշները քեզ չանեն, դու մի  
անիր ուրիշին: Մենք իսլամներս չենք հե-

տեում այդ ուղիղ սկզբունքին և ինչո՞ւ հե-  
տեինք, մեր ինչին են պէտք ազնուքիւն,  
խիղճ, չէ՞ որ մեր մարգարէն պատւիրում է  
ծայրայեղ զթութիւն, որ մենք այդ ազնիւ  
զգացումը տարածում ենք շների վրայ, բայց  
անխնայ կոտորում ոչ մահմեդականին...

— Ես այդ լսել եմ, — ընդհատեց Ապ-  
տուլլահ, — լսել եմ իմ փոքր ժամանակ իմ  
դաստիարակից, որ մի յոյն կրօնաւոր էր:

— Դու յունական ծագում ունիս:

— Չեմ ժխտում, ես մակեդոնացիներից  
եմ:

— Ես էլ քեզ պէս առնաւորս (մակե-  
դոնացի) եմ, — երկչոտ կերպով ասաց Տա-  
մատ-Մուստաֆա, — բայց ոչինչ չեմ յիշում  
իմ ծնողներից:

— Ես յոյնի որդի եմ, — ետ չոմաց Ալի-  
Ջէքի, — իսկ դո՞ւ Ֆիրատ:

— Ե՛ս, բարեկամ, ոչինչ չեմ յիշում, ես  
ինձ իսլամ եմ գտել, — ստեց նա:

— Տղայք, միջամտեց Մուստաֆան, —  
նայեցէք, ծուռ-բերան մոլլան, կամ մեծ-լա-  
տին մեր կողմը կը գայ:

Թէև լուսինը ծածկուած էր թափանցիկ  
ամպի շղարշի տակ, սակայն լուսաւորում  
էր այդին, միայն խիտ ծառերի սուերներն



աւելի նսեմացած, մի տեսակ գորշ մթու-  
թիւն էին տարածում, որոց մէջ սեպի պէս  
ցցւած էր երևում մեծ-դատին, որ մօտենա-  
լու ժամանակ ճանաչեց Տաժատ-Մուստա-  
ֆան:

Դեռ ևս նրանք պատրաստւած չէին  
մեծադիր հիւրն ընդունելու, երբ նա առաջ  
գալով, ժպտալով՝

— Սէլամն ակէփում, — ասաց:

Ձ.

Շ ա ո ք

— Փաշաները շփոթեցան, միմեանց երե-  
սին նայեցին հարցական հայեացքով, ընդե-  
ւիցէ ոտքի ելնելով, ասացին ժխտական.

— Բույուրուն (համեցէք), էֆէնդիմ բու-  
յուրուն:

Մեծ-դատին բազմեցաւ Հայթա-Ֆիրատի  
կշտին՝ միենոյն խորախորհուրդ, կեղծաւոր  
ժպիտն երեսին, աշխատելով իր թաւ բերխի  
պրակով ծածկել մի կողմ հակւած բերնին  
խոռոչը:

Սովորական սէլամ-ֆէլամից (հարց ու  
բարև) յետոյ,

— էֆէնդիմ, — ասաց Քոփրուլու օղլու  
Ապտուլլահ փաշան, անբաղաճաճարի չերևե-

լու նկատումով, — ինչո՞վ կարող են ձեր սըր-  
բութեան ծառաները պատուել ձեզ, գիտենք՝  
որ մաստիքա...

— Ես ոչինչ պատիւ չեմ ցանկանում,  
ընդմիջեց ղուրանի որդին լուրջ կերպով, —  
ձեր վսեմութեանց երեսները տեսնելն իսկ  
շատ է ինձ: Դուք ձեր ուրախութեան նա-  
յեցէք, սիրելիք...

— Ազամէթ, Ազամէթ, — որոտալու պէս  
ձայնեց Մուստաֆա դէպի սպասաւորի կող-  
մը դարձած, — սուրճ, չիպո՛ւղ, օշարակներ  
բերէք. մեծ-դատի էֆէնդին մեզ մօտ է:

— Այս րոպէին, տէր իմ, — լուեցաւ հե-  
ռաւոր ծառերի տակից:

— Մի՞ գուցէ իմ ներկայութեամբ խանդա-  
րեմ ձեր վսեմութեանց քաղցր զւարճութիւն-  
ները, — վրայ աւեց զուշիկ բերան սուրբ մարդը  
մի գոհունակ տրամադրութեամբ, — գիտեմ՝  
սիրելիներ, որ դուք խմում էք մաստիքա...

— Դուրանը — գէտիմը, — պատասխանեց  
Ֆիրատ, — դէմ է կարմիր գինուն, որովհետեւ  
քրիստոնեաներն ընդունում են Իսաայի (Քրի-  
ստոս) արեան փոխանակ, մաստիքան զրա-  
նւած է Զաֆէր բժշկի ժամանակ. նա ինքն  
էր արքայ — օղին պատրաստող, ուրեմն սրա  
համար չէ արգելքը...



—Ո՛հ, դուքանը բոլորովին արգելում է ողելից ըմպելիքների գործածութիւնը, որոնք մայր են ամենայն չարեաց...

Սուրճ, չիպուղ, օշարակ մատուցեցաւ մեծ-դատուն:

Փաշաները թէև խմում էին մաստիքա՝ ոչ առաջին եռանդով, իւլէմէի ներկայութիւնը կարծես թունաւորեց նրանց ուրախութիւնը, կարծես երկնչում էին առաջին ոգևորութեամբ արբենալ, վիճել իրանց սիրելի խնդիրների վրայ: Ղատին այդ լաւ էր գգում, սակայն ամենևին իր տեղից շարժւել չէր ուզում: Փաշաներն արբած էին բառին իսկ նշանակութեամբ, նրանց խօսքերն անխմաստ, շարժումները կոմիքական էին: Մի քանի րոպէ գսպւելուց յետոյ, վերսկսեցին խմել, խօսել առանց իրար հասկանալու: Ղատին գոհութեամբ էր նայում, կարծես նա ցանկանում էր նրանց այդպէս տեսնել:

Հայթա—Ֆիրատ, որովհետև նստած էր Ղատու կշտին, ստիպւած էր նրա չոր ու ցամաք հարցերին պատասխանել, թէև աւամայ, ուշադրութիւնը կենդրոնացնել նրա վրայ: Իսկ եզուխտաբարոյ դուրանի պաշտօնեան՝ գոհ էր իր գործած տպաւորութիւնից, աշխատում էր գրաւել Ֆիրատի միտ-

քը, խմել տալ և հետզհետէ մերձենալ իր նպատակակէտին, որի առթիւ ստացած էր մի մեծ քսակ ոսկի Զիայից նրա վրէժը լուծելու, թունաւորելու Հայթայի կեանքը: Ինքը շատ լաւ գիտէր, որ գործիք է դառնում Զիայի ձեռքում, քանի որ ստացած էր մի քսակ. եթէ Ֆիրատ որդին լինէր, պիտի մասնէր:

—Ձեր սիրելի ընկերները՝ փաշա էֆէնտի,—խօսքն ուղղեց նա Ֆիրատին,—բոլորովին խելակորոյս են եղած:

—Մաստիքան ընտիրն է,—պատասխանեց Ֆիրատ լակոնական ոճով՝ կարճ կապել ուղելով Ղատու խօսակցութիւնը:

—Բայց՝ ձեր վսեմութիւն շատ լուրջ է:

—Պէտք է լուրջ մնալ:

—Ձեր շարժումները նման չեն արբածի...—ստեց սուրբ մարդը:

—Արբած եմ,—խոյս տալ ջանաց Հայթան մի խօսքով:

—Ընդհակառակը,—վրայ տւեց դատին՝ ծռած շրթունքին վրայ մի հեգնական ժպիտ ակեկոծելով—դուք ամենևին արբած չէք... և ուզում եմ, որ երկու գաւաթ իմ ներկայութեամբ խմէք, որպէս զի հաւասարիք ձեր վսեմաշուք ընկերներին:



Հայթա—Ֆիրատ արդէն պատրաստուում էր խմելու. դատու յորդորը գուր չանցաւ: Նա վերուց բաժակը և բարեմաղթութիւններ անելով խմեց: Այսպէս կրկնեցաւ մի քանի անգամ: Ապտուլահ, Մուստաֆա արդէն ննջած էին, Ալի-Ջէքի նոյնպէս պատրաստուում էր գլորելու, սակայն՝ Հայթան դեռ խմում էր և ճամարտակում պատահած նիւթերի վրայ, արդէն իսպառ անձնատուր եղած ոգելից ըմպելուն:

Շէյխն սպասում էր միւսների քնելուն. երբ նրանք ընկղմեցան միացին, մեղմ և քաղցր կերպով ասաց խօսակցին.

— Սիրելի, կըբարեհաճի՞ք ինձ հետ ման գալ պարտիզում, որպէս զի՝ թուլանայ օդուն ազդեցութիւնը: Տեսնում էք, որքան գեղեցիկ երեկոյ է, կապոյտ ջինջ երկնականաւորն ողողած է լուսնի կաթնաթոյր լուսով, մարգարէի ուղին \*) նորից մասնաւոր փայլով՝ հսկայական կամարի պէս ծրարում է սաբերի գազաթներին և խիստ հեռին կորչում հորիզոնի ծոցերին մէջ: Տես, լրացած լուսնակը խաղում է, նազում երկնամէտ բար-

\*) Յարգազողի ուղին, որի վրայով (°) շրջել է Մուհեմէտ...

դինների, սօսիների սուերախիտ սաղարթներում: Լուռ է հողմը, լուռ են այերբ, լուռ է բնութիւնը, լուռ է բաղաճն աղմկաշատ և ծածկւած արծաթահիւս քօղերով: Մենք ենք գիշերւայ զարդը, մենք ենք լսում երգ ու նւազ, սաղի տգողոցը, ջութակի սուլոցը, փնի (սանթուր) մետաղային դօղանջը ձուլւած ի միասին՝ յօրինում են ներգաշնակ սիրերգական մեղեդիների հրաշալի ելեջներ և ծածանում ննջած մթնոլորտում...

— Արդարեւ՝ ընդհատեց Հայթան ոտքի ելնելով, գուցէ ազդւած բնութեան դիւթիչ կերպարանքից, — մի քիչ շրջենք: Հրաշալի երեկոյ է: Ահա սկսում է փչել մեղմ, հովասուն զեփիւռը Պինգէօլի (Բիւրակունք), քորելով Այարլի տաղի պշուցած գազաթն՝ իր հետ է բերում խօսնակի տխրանոյշ երգերը, կոծկոծելով անցնում է այս սիրուն պարտիզի ծառերին միջով, մանուկ ալիքներ սօսափելով կարծես իրար վրայ են ընկնում: Պարտէզն իր մէջ հեծեծում...

— Երբ աշխարհն այսչափ սիրուն է, — նիւթն յեղաշրջեց ծուռ բերան ալլահաբանը, — հապա որչափ սիրուն, գմայլելի է յօրինողին մշակած այգին. ջէննէթն՝ ուր փայլում է անանց արփին, ուր շողշողում են



բիւրաւոր մէլայէքներէ թեւեր իբր ադամանդ շողարձակ, ուր հնչում է թռչունների գայլայլիկներից հիւսւած քնարի ձայնն՝ ուժգնապէս խառնելով սրտազովիկ հովերին, ուր օդի մէջ ալեկոծւում է հոգեղէն խօսնակի տարփալի «Լահ-իլ-ուլ-Ալլահ»... նաժազի նախերգը, հրաւերը... Ահ, սիրելիդ իմ, մարդ պէտք է աշխատի օր առաջ թողնել այս ցաւերի տունը, երազեղէն կեանքը, բնակւի եագութ, գումրութ, ադամանդակներից կոփւած, յօրինւած ճաճանչաւետ դարպասներում, ճեմէ ջէննէթի անգիշեր պարտիզում, մէն մի ծաղիկ, մէն մի վարդ հոտոտելու ժամանակ՝ շրջապատւի անշամանթաղ, չնաշխարհիկ հուրիներով, սիրէ՝ սիրւի, գգւէ՝ գգւանք ընդունի, համբուրէ՝ համբուրւի տարփատենչ յաւերժանքների հետ երկար, անսահման, անմահ կեանքով մինչև յաւիտեան, որտեղից խոյս են տրւած արտմութիւն, արտասուք, ուր թագաւորում է անվերջ սէր, անվերջ սիրերգութիւն, շնորհիւ Րուսուլլահ — Մուհէմմէտի...

Հայթան լուռ էր, չէր պատասխանում, գլուխը քարշ ձգած գնում էր մեքենապէս դէնպետի ուղած կողմը։ Ինչպէս ինքն ա-

սում էր՝ օդիով ողողւած մի մեքենայ էր նա, չէր հասկանում, չէր ըմբռնում։ Թուլացած կամք, նիրհած գգայութիւններ, թմրած իմացականութիւն, կամ անգործ հասողութիւն գլորում էին մարմնեղէն անիւն ի ձեռքն գգայարանքների ունակութեան։ Հոգին կարծես սլացած էր մարմնից դուրս, չըկար ոչ մի արգելք, ոչ մի դժւարին, ոչ մի անհրնարին գործ, չըկար և կեանք, երազուն էակ՝ թուլացած գգայարանքներով, թոյլ վերլմբռնումով, ննջած յիշողութեամբ։ Իբր շղթայակապ ստւերներ՝ խոյս տալով կորչում էին բոլոր մտապատկերք, ներկայ և անցեալ, սլանում, խուսափում, կորչում անծայրածիր խորքերում, ինչպէս մի պատառ ամպիկ խլում, քշում է հորիզոնից հեռի և հեռի որոտագոչ ուժգին քամին։ Փիրատ չէր ըմբռնում դէնպետի խօսքի միտքը, լեզուն միայն՝ նմանողութեան թելադրութեամբ, դուրս էր բերում նման գաղափարների բեկորներ, այդ անբանացած ողորմելուն ներկայացնում մառդ։ Ո՛հ, որչափ դիւրին էր, — եթէ հոգեբան լինէր դէնպետը, — կորզել նրանից մեծ և ժահառիթ գաղտնիքներ, բարեբախտաբար երազող Մահմէդի որդին միայն իր նպատակին էր դիմում, վասնորոյ Փի-



րատ երբեմն համակերպում, երբեմն նըմանում էր նրան:

— Սիրելի Ֆիրատ, — ասում էր Շէյխ-դատի փորձիչը, — ես թէև հաւանում եմ քո վարքութեանը, քաղցր բնաւորութիւնը, սակայն՝ ցաւում եմ, որ քեզ պէս բարեբարոյ, ազնասիրտ մարդն ընկած է արեւոյթեան ցեխի մէջ... չէ՞ կարելի արդեօք դրա օձիքը բաց թողնել:

— Իրաւի... ցեխ է, գլորւում եմ... — ձայնը բարձրացնելով — էյ, Ազամէթ, մաստիքս բեր... որչափ ենք խմել...

— Դու չես լսում ինձ...

— Ի՞նչ էիր խօսում...

— Ձեռք կարող, ասում եմ, արեւոյթութիւնը թողնել...

— Եթէ ուզենամ... կարող եմ... էյ, Ազամէթ...

— Հրամայեցէք՝ էֆէնտիմ, — խորամանկ ժպիտը դէմքին՝ պատասխանեց Ազամէթը նրա առաջ ցցելով, — ահաւասիկ օղի, գիտեմ՝ որ ձեր վսեմութիւն այս առթիւ էր կանչում:

Արդէն լցած էր գաւաթը, Ֆիրատ օրօրւելով կանգնեցաւ, կէսը թափելով խմեց,

երկրորդեց, ապա՝ իւլէմէին դառնալով, ասաց անկապ կերպով.

— Ձեր սրբութիւն կըտեսնէ... էյ... գինով եմ... շատ խմեցինք, ո՛չ, ծառերն էլ են արբած, օրօրւում են, համբուրում են լուսնի կարմրագեղ սկաւառակը...

— Հապա՞... Ֆիրատ ջան, չէ՞ս կարող թողնել արեւոյթութիւնը, — վերսկսեց իր ակունն զուրանի աշակերտը, — քեզ ափսոս է, ափսոս է կրօնիդ, ի՞նչ է այդ անիծած օղին:

— Գէշ է գէշ... բայց՝ խմում եմ...

— Լաւ՝ երբ իմանում ես վատ լինիլն՝ էլ ինչո՞ւ ես խմում:

— Խմում եմ... — Այսպէս գնանք, թող քամին երեսիս փչէ:

— Գնանք, սիրելիս, բայց՝ ինձ չես պատասխանում:

— Չըզիտեմ... ի՞նչ ես հարցնում:

— Հարցնում եմ՝ չէ՞ս կարող օղին մերժել:

— Եթէ ուզենամ... կըմերժեմ...

— Լաւ, պէտք է մերժես...

— Մերժեմ... արդէն խմած եմ...

— Այսօր խոստացիր, վաղը մերժիր... չի վայելում քեզ, Ֆիրատ, քո ազնւութեան, քո քաջութեան, քո մեծ աստիճանին, քո պատւին...



— Լաւ, բայց ի՞նչ անեմ... դու ե՞րբ ես տեսել բարի, առաքինի ենիչերի... Հէ՛ ո՞ր ես նրանց փաշան եմ...

— Հապա ասում էիր՝ եթէ ուզենամ կթողնեմ...

— Այո, կրթողնեմ...

— Ուրեմն՝ թո՛ղ՝ սիրելիդ իմ Ֆիրատ, թող ասում եմ քեզ, յանուն մեծ-մարդաբէին լինի...

— Լաւ, այսօր խմենք... վաղը մտածենք...

— Այսօր խմիր, բայց խոստացիր վաղը չ'արբենալ:

— Լաւ

— Սօսք կըտամ. հիմա հաւատամ:

— Ի՞նչ...

— Սօսք կըտամ, ասում եմ...

— Այո, այո, խօսք կըտամ...

Ղատուն դէմքը փայլեցաւ անսահման ուրախութեամբ, Հայթա-Ֆիրատի թեւ մըտնելով տարաւ դէպի իւլէմէների խումբը, ուր և բազմած էին Զիա և այլ փաշաները:

— Վերջապէս, — յաղթական ժպիտը դէմքին, հպարտ կերպով ասաց դատին, առանց իր բերնին ծռութիւնը ծածկել ջանալու, — դեւերի ձեռքից ազատեցի մի բարեպաշտ, քաջ, առաքինի մարդու հոգի և այժմ ձեր

ներկայութեամբ նւիրում եմ ս. Մարգարէին:

Բազմականք երկիւղածութեամբ սէլաւէք բերին դուրանից մի մի հատած մըրմուռով, երեսները շփելով: Հայթան ապուշ հայեացքով, առանց հասկանալու նայում էր նրանց. գուցէ իրազեկ լինելով խոյս տար ծռադակից, եթէ խորամանկ դատին չըկանխէր նրան ասելով.

— Դուք ինձ խօսք տւիք, վսեմափայլ տէր, այնպէս չէ՞, հարցուց նա յոգնակի խօսելով. — քանի որ ներելի չէ մէնլիաում (ժողով) մտերմի հետ իսկ եղակի խօսել, — խոստացաք վաղը չըխմել...

— Այո, այո, — շշնշեց Ֆիրատ դեռ ևս չըհասկացած:

— Հիմա էլ բազմականների առաջ կըրկնում էք ձեր վսեմութեան մեծարժէք խօսքը...

— Է՛յ Ազամէթ, ո՞ւր է այն սրիկան, մաստիքա բեր...

— Բազմութիւնը վկայ լինի՞ ձեր խօսքին, — հաստատեց ծռու բերան դատին, զսպել ջանալով ուրախութիւնն և քովտի Զիային նայելով, — սրանք վկայ լինի՞ն...

— Է՛յ, Ազամէթ, մաստիքա բեր ասում եմ, անառակ...



Ազամէթ ժպտալով ներկայացուց մի բաժակ, Թիրատ ձեռն առնելով սկսեց բարեմաղթութիւն և խմեց ասելով, գրեթէ չըհասկանալու չափ և ցած ձայնով.

— Աստուած բարին չարի չըմատնէ...

— Ամբին—մըմռացին բազմականք:

— Ասացէք, բարեկամ,—նորից հարցրեց դատին, խոստացաք ինձ միւս անգամ չըխմել, շնորհակալ եմ, ուրեմն վկայ լինի՞ն այս յարգելի բազմակեանքներ:

— Է՛հ, դատի, թող քո ուզածին պէս լինի.

— Երեքից մինչեւ ինն շառք \*) լինի...

— Շառթ...

— Ուրեմն գրենք և կնքենք:

Թիրատ անշուշտ ամենաթույլ գիտակցութեամբ կնքեց շառքնամէն (երգման թերթ) առանց իսկապէս գիտնալու թէ ինչ

\*) Երեքից մինչեւ իննը (իւշտէն տօքթուգէ) սովորական երգման բանաձևն արտասանելուն ասում են շառք. ինչևիցէ ծանր, կամ չնչին բանի համար շառթ անողն՝ եթէ զրժէ, լուծուում են ամուսնական կապերը, վերջանում է ընտանեկան կեանքի քաղցրութիւնն և ստէպ լինում այնպէս, որպէս պիտի տեսնէ ընթերցողս վէպիկիւս ընթացքում, կամ աւելի սոսկալի եղեոներ զիմում: Ս.

է անում: Զիա անհուն ուրախութեամբ նայեց իր դաւակից Պօշնաք—փաշային: Սառնածինը հաստ շրթունքի ձորակից ցոյց տւեց սպիտակ ատամների շարքերը, կծկեց այտերի կաշին, սև բիբերը վառեց ոգևորութեամբ: Դա նրա ժպիտն էր:

— Տղայք,—ասաց Զիա սպասաւորներին դառնալով,—խօս քաղցած մնալու չենք... հաց բերէք:

— Ես ի՞նչ կնքեցի, ուշաբերելով հարցուց Թիրատ:

— Շառթ արիւր, որ բնաւ չըխմես...

— Վայ...

## Է.

Շառքի հետեւանք

Թիրատի ապարանքում խորին անդորութիւն էր տիրում. ննջած էին դռնապան, թիկնապահ, սպասաւոր, սպասողհի. մի խօսքով տասնեակ ծառաներ, բոլոր պալատը թաղւած սև խաւարով և անդորրութեամբ, միայն Հայթայի ննջարանն էր լուսաւորւած գիշերային կանթեղով: Ղութնի, մետաքսահիւս հայէպեան անկողնում ննջած էին այր ու կին. նրանց մեղմ, ներդաշնակ շնչառութեան շշուշը խառնելով հինա-



ւորց անիւաւոր ժամացոյց թիբ, թաք-թրա-  
քին խռովում էին տիրող լուսթիւնը:

Տիկին էլիֆ կծկւած էր վերձակով, հա-  
զիւ նրա չքնադագեղ դէմքի մի մասն էր  
երևում, այն էլ կիսաքող թուխ մազերի  
ալեակներով: Փիրատ փաշա ընկած էր քա-  
մակին, կրծքից վեր բոլորովին բաց, ջլա-  
պինդ, մսուտ բազուկներն հորանի տարա-  
ծած, քնած էր խաղաղ և անփոյթ կերպով:

Ժամացոյցը տասն երկու զարկեց, Հայ-  
թան զարթեցաւ: Աչքերը տրորեց, վեր ելաւ,  
դէպի պահարանն ուղղւեցաւ. երբ շիշը տե-  
սաւ, յանկարծ օձից խայթւածի պէս մի  
քայլ յետ ընկրկեցաւ ու կանգնեց մտածելով:

Նրա մէջ յանկարծ զարթած էր յիշո-  
ղութիւնը, կայծակի արագութեամբ իմացա-  
կան հորիզոնում փռւած մտապատկերների  
միախմբումը. նա տեսնում էր սկզբից մին-  
չև ի վերջ կառարւած անձքերի պատ-  
կերը:

Նախնական մտատիպարներն աւելի  
թարմ, պարզ և որոշ էր տեսնում, միւս-  
ներն հետզհետէ տժգոյն, նսեմ, հեռաւոր  
առարկայի, ուրականի, կամ մեծ մասամբ  
մոռացւած երազի պէս էր յիշում...

Նա որոշակի տեսնում է, աչքով հետե-

ւում է հէնց իր անձին Փաշին—Քէօշքը  
գնալու ժամանակ, տեսնում է այգում շար-  
ւած բոլոր մեծամեծներին, Զիային, դատուն,  
սուրճ, չիպուղ ընդունելուց յետոյ՝ չորս ան-  
բաժան բախտակից ընկերները քաշւում են  
քիչ հեռու, խմում են լրացած լուսնին նա-  
յելով... Այժմ երթալով խաւարում է պատ-  
կերների շարքը, ծխի սիւնի նման տարա-  
ծւում է և կորչում հեռաւոր այերքում...  
Իրանց մէջ է տեսնում ծուռ-բերան դատին...  
Նա խմեցնում է... նրա հետ շրջում են այ-  
գում. մի ինչ որ շառթ է առաջարկում,—  
իր հաւանութեամբ եթէ ոչ խաբեբայու-  
թեամբ,—կնքում է... յետոյ վիճում է այդ  
մասին... ընկերքը գալով ուզում են դատուն  
կտրտել... Զիան փախչում է... հանդէսը վեր-  
ջանում է... Ապտուլահ, Մուստաֆա իրան  
տունն են բերում...

Այս բոլորն աննկարագրելի արագու-  
թեամբ յիշելով՝ յետ կանգնեցաւ պահարա-  
նից:

— Ես ի՞նչ արի, Աստւած իմ,— շշնջաց  
նա,— շառթ, հէնց օդու մասին... առանց  
նրան ես մեռնում եմ, նաև իմ ընկերները  
չեն ներում... բայց՝ ի՞նչ է շառթը, խօժ ես  
մահմեդական չեմ... ո՛հ... ո՛հ, ո՛հ, ամեն յոյս



կորած է, եթէ ես դրժեմ ուխտին, դաւա-  
ճանեմ կօշիկի պէս հազած կրօնիս՝ ամեն  
ինչ կըկորցնեմ, այո՛... ամեն ինչ, այն ժա-  
մանակ ինձ չեն պաշտպանիլ և արենախում  
ենիչերիք, եթէ էլիֆ ների, իսկ՝ եթէ չընե-  
րէ, ամուսնալուծութիւն... ես ի՞նչ եմ գոր-  
ծել՝ Աստուծ իմ... բայց՝ ինչո՞ւ մինչև այ-  
սօր ինձ չէին առաջարկում շառի՝ այժմ  
Զիւայի խնձոյքին, նրա տապալւած օրը...  
Սպասիր, հասկացայ, ահ... անառակ, անա-  
ռակ Զիւայ, այո՛, այո՛, այդ քո գործն էր, այն  
ծուռ-բերան բեաֆթառին խօսում էր նա...  
թիկնապահս առաջ կաշառւած էր մի մեծ  
քսակով, բայց՝ ինք չըգիտէր թէ ինչո՞ւ, եթէ  
ոչ պիտի զգուշացնէր ինձ... նա թեւադրեց  
և ես բռնեցայ, յաջող որսորդութիւն, Զիւայ  
էլ ի՞նչ եմ սպասում պահարանին առաջ,  
փակեմ, հեռանամ... ո՛չ, սպասիր,— դէպի  
կնոջը կողմը նայելով,— լաւ է, նա ննջում  
է, նա չէ լսում:— Գուցէ վերջին անգամն  
եմ խմում քեզ, մաստիքս, վերջին մնաս-  
բարովն ասեմ: Կամ այսուհետև քեզ միայն  
ծածուկ պիտի տեսնեմ... քիչ խմեմ...

Ֆիրատի ձեռները դողդողում էին,  
ահով նայեց իր կնոջ կողմն և ի մի ումպ

պարպեց: Աղմուկով անկողին մտաւ, որից  
իսկոյն զարթեցաւ էլիֆ:

— Ա՛հ, զարթած ես, Ֆիրատ ջան,—  
շնչեց նա տարփազին փարելով ամուսնին  
պարանոցը, — այդ որչափ էիր արբած...  
գլուխդ իսկի խելքի կտոր չէր մնացել, ինձ  
չէիր ճանաչում, հայհոյում, գոռում էիր.  
«էլիֆս ո՞ւր է,— ո՞վ է այս անառակ կինը,—  
ասում էիր ինձ,— դուրս խուկեցէք, եթէ ոչ  
հիմա մնացու կովի նման մասմաս կըջարդեմ  
սրան:— Ես եմ, Ֆիրատ ջան,— պատասխա-  
նեցի քեզ փարելով,— քո էլիֆն եմ, դու  
ինձ չէս ճանաչում, չէս ճանաչում քո ա-  
մուսնին:— Ա՛հ, էլիֆ ջան,— մըմռացիր սայ-  
թաքելով,— դու ես եղել, ձայնդ իմ էլիֆինն  
է... Որքան դժւարութեամբ մերկացուցի քեզ,  
աղաչեցի, լացի որ թոյլ տւիր... ուզում էիր  
սառայ գնալ, Զիւան սպանել... յետոյ մի բան  
պատմեցիր, յիշում ես:

— Ո՛չ, չեմ յիշում, ի՞նչ պատմեցի,  
հոգեակա...

— Պատմեցիր— հառաչելով ասաց տիկի-  
նը,— զատուն մօտ Շառք անելդ... ասացիր  
քեզ խաբած են...

— Շառք... այո՛, յիշում եմ, ստոյգ է:

— Ստոյգ է, — գունատելով, տխու-



թեամբ հարցուց էլիֆ, լսածին չըհաւատա-  
լով, շիտկեցաւ անկողնին մէջ, — խելագար-  
ւած էիր, սիրելիս, փորդ դե՞ էր մտել, քեզ  
հիմ ասաց այդպիսի յիմարութիւն անել...

— Իրաւունք ունիս, հոգիս, ես էլ հէնց  
դրա մասին եմ մտածում: Այն գարշելի ծուռ  
բերան դատին շառթ անել տւեց, որ էլ ա-  
րաղ չըխմեմ. ես՝ էլիֆ ջան, ես տխմար  
անասունս շառթնամէն կնքեցի... վերջա-  
ցաւ...

— Ուրեմն հիմա...

— Այդ դու գիտես...

— Ինչպէս թէ ես գիտեմ, դաւել են  
քեզ, պարզամիտ քաջս, դու այսուհետեւ էլ  
չես կարող խմել, եթէ խմես... հի Աստուած  
իմ, Ֆիրատ, կըլուծւի մեր ամուսնութիւնը...  
ես հիւլ-ուլա լինեմ, ես առանց քեզ մի ըռպէ  
ապրեմ կամ մի օր, մի ժամ, մի ըռպէ օտարի  
գրկի մէջ մնամ... Բնաւ, հի, ինձ սպանիր՝  
Ֆիրատ, կամ շառթդ պահիր... այնպէս չէ՞  
շառթդ պիտի կատարես և չըթողնես որ քո սի-  
րելի էլիֆը խայտառակի, կամ՝ յուսահա-  
տութիւնից ինքն իրան սպանէ:

— Էլիֆ ջան, այդ նիւթի վրայ ես քե-  
զանից շատ եմ մտածում. սարսափում եմ...  
դու ինձանից բաժանւիս, խայտառակիս,

սի... ես պիտի աշխատեմ տեղի չըտալ: Եթէ՝  
հակառակ դէպքում, պատահեցաւ խմել, որով-  
հետեւ պիտի բաժանւինք, խայտառակինք,  
գերընտրում եմ մեր մահը...

— Անշուշտ, հոգեակդ իմ, ես ուրախու-  
թեամբ կըմեռնիմ քո գրկի մէջ, ինձ խողխո-  
ղող աջդ կըհամբուրեմ, քանի թէ կ'ապրեմ  
խայտառակած... այո՛, համամիտ եմ քեզ:

— Բայց՝ էլիֆ, եթէ ուզենանք, կարող  
ենք առաջւան պէս երջանիկ ապրել, ազատ  
և հաստատուն յոյսով ապրել:

— Ապա, միջոց ցոյց տուր...

— Դու քրիստոնէի աղջիկ ես:

— Ճշմարիտ՝ հայ-քրիստոնէի աղջիկ եմ:

— Ի՞նչ կ'ասէիր՝ էլիֆ ջան, եթէ քեզ  
տանէի քրիստոնէական աշխարհ, երկուսս էլ  
քրիստոնեայ լինէինք, պսակւէինք, աներկիւղ  
ապրէինք մինչև ի մահ: Քրիստոնեայ լինինք,  
էլիֆ, որի սկզբունքներն ու վարդապետու-  
թիւններն ազատ են մեծացնում հետևորդ-  
ներին, ուր չըկայ բռնութիւն խղճի: Նա  
սուրբ է և գերծ ամեն տեսակ լարծուն կեղ-  
տոտութիւնից, նա չունի այնպիսի օրէնքներ,  
որպիսին ռաութն է: Եթէ ինձ լսես՝ մենք  
ունինք ահագին գումար, նոյն պէս երկուսի  
մեծագին զարդեր: Գաղտնի, դրանցից դիւ-



բատարը կառնենք, մնացածները կըծախենք, կ'երթանք Կ. Պոլիս, Մէկքէ ուխտ երթալու պատրւակով, այնտեղից կանցնենք Փրանսիա, Իտալիա, մի խօսքով ուր որ կամենանք...

—Այդ անկարելի է, — սառն կերպով պատասխանեց տիկինը, — իրօք, ես քրիստոնէի դուստր եմ, բայց քո ասածն անհնարին է, մենք կրբոնւենք, ծուղակը կ'ընկնենք, այն ժամանակ աւելի վատ կ'ըլինի...

—Լաւ, — հառաչելով իսկոյն նիւթը փոխեց Ֆիրատ, — միթէ՞ չենք կարող այստեղ իսկ ապրել, օրինակ՝ եթէ կամքս խմել ուզէ, միայն քո ներկայութեամբ խմեմ...

—Ի՞նչ ես ասում՝ Ֆիրատ, և դա անկարելի է, չէ՞ որ քո շառթին կրդաւաճանես, մեր օրինաւոր ամուսնութիւնը կ'ոչնչանայ, ո՛չ... դու մի ճանապարհ միայն ունիս, պէտք է անխախտ կատարես շառթդ, բնաւ չըլմես օղին: Ես առաւօտեան իսկ ժողովել կ'ըտամ շիշերն ու գաւաթները, կ'ըթափեմ մաստիքան և ամեն ինչ կ'ըվերջանայ: Ես մազի չափ չեմ կարող օրէնքից շեղուել...

—Էլիֆ ջան, եկ ինձ լսի՛ր, թո՛ղ որ տանը մէջ, խիստ ծածուկ օրէնք մի գաւաթ խմեմ... եթէ գուրսը չ'ասենք՝ ո՞վ պիտի գիտենայ:

—Աստուած գիտէ, — ասաց Էլիֆ խրոխտ

կերպով մատը դէպի ձեղունը բարձրացնելով, — դու շառթը նրա հետ ես արել, ո՛չ թէ Զիայի հետ գրագ դրել, որ ես կարողանամ ներել, կամ սիրոյդ պատճառաւ մասնաւոր խղճի խայթով տառապել: Դու ուզում ես Աստծո՞ւն խաբել, վա՛յ ինձ, դա աններելի մեղք է, Ֆիրատ, ո՛չ, ո՛չ, ինձ սպանիր, կամ այդ հայհոյիչ յոյսերը մոռացիր: Ես նւիրւած եմ կրօնին, հոգիս մարգարէին, սիրտս ու մարմինս միայն քեզ է պատկանում... եթէ կարողանայի շառթը դրժել, յօժարակամ յանձն կ'առնէի քո առաջարկութիւնն իրագործել, քեզ հետ հեռանալ մեր երկրից:

Ֆիրատ նախատեսած էր արդէն, գիտէ՛ր՝ որ հնար չկայ, սակայն փորձում էր մի ելք գտնելու յոյսով: Մինչև ի լոյս աշխատեցաւ համոզել, անդրդւելի մնաց Էլիֆը, պնդելով իր հաստատուն կամքի համեմատ, աղերսեց վերջ դնել արբեցութեան:

—Խօսմ'մօրդ կաթը չէ, հոգիս, — ասում էր ամուսնին համբուրելով, — միթէ օղին ինձանից շատ ես սիրում, թո՛ղ գոնէ մեր սիրոյն համար, ենթադրի՛ր՝ թէ ամենևին խմած չեմ կեանքիդ մէջ:

Էլիֆ հանրմ առաւօտն ելնելուն պէս, սրւակներ, վանակնեայ ընտիր բաժակներ



ժողովեց փաշայի սենեակներին, իր ձեռք  
գոցեց մառանի պահարանում: Ֆիրատ աշ-  
քով հետևում էր նրան՝ համակած խորին  
տրամուլթեամբ:

Նրա սրտի խորքում սահում էին ան-  
կերպարան մութ ամպեր: Մի քանի տարուց  
ի վեր նա լսում էր նրա խորքից իր անձի  
դէմ մի տեսակ բողբոջ, իր խիղճն իրան ան-  
ւանում էր ուրացող, վասնորոյ ընկած էր  
վարկն իր աչքումն իսկ: Նա չէր ակորթում  
լսել մահմեդական իմամի խօսքն և աղօթքը,  
զգուծ, խորշում, խուսափում էր հեռի, այժմ  
բռնած էր իր ատելի կրօնի ուռկանում,  
կտրած էր շառթ, որին թէև ոչ մի արժեք  
չէր ընծայում, սակայն իր սիրւած, պաշ-  
տած կինը, էլիֆը, միայն կրօնական խըն-  
դրում տարբերւում էր իրանից: Հայթա—  
Ֆիրատ որոնում էր միջին ուղի, ինքը չէր  
կարող թողնել օղին, ամուսինը: Մի քանի  
օր նա զգուշացաւ խմելուց, տխրութիւնը  
պատեց նրան, երևում էր դիտողին կռաւի  
բարկացող, մի տեսակ անտաշ էակ, որով-  
հետև՝ կարծես ուզում էր իր կրած գրկան-  
քի վրէժն առնել պատահած խօսակցից: Նա  
չունէր հաստատուն կամք, նա չունէր այժմ  
որոշ ուղղութիւն, գործում էր պատահաբար:

Ինք զինքն էր անարգում և պատճառն ուրիշ-  
ների վերադրում: Ինչ անէր, նրա շրթունքը  
սովորած էին ամեն առաւօտ շօշափել ալ-  
քօհօլի բաժակ, հիմա չըխմէր, այն էլ իր բնաւ  
չըյարգած, զգուշի, ինչպէս ինքն ասում էր,  
կօշիկի պէս հագած կրօնի շառթով... Բայց՝  
ինչ անէր, եթէ չըպահէր շառթը, նրա կինը  
պիտի հեռանար, պիտի ծագէր մի խոր և  
անբոյժ խայտառակութիւն: Ինք լաւ գիտէր  
այդ ամենը, գիտէր՝ որ շառթը դրժե-  
լուն պէս՝ էլիֆն իր կինը չէր... Ան-  
վեհաւում մտնելով, կամ պիտի մեռնէր յու-  
սահատութիւնից, կամ՝ ինք զինք դատա-  
պարտէր այրիութեան: Գիտէր՝ որ էլիֆի  
պէս հպարտ կինը չէր յանձն առնի հիւլ-ուլա,  
չէր ների ինքն իր անձին, իր տարփագին  
սիրած ամուսնի ներկայութեամբ՝ թող թէ  
կատարեալ, այլ անգոր, անսեղ մի էակի հետ  
մտնել անկողին իրրև կին, տարփանքի հա-  
ճոյքը լսեցնել իր ֆիրատին, ոչ, այդ բոլորն  
անկարելի էին: Այսպէս մտածելով Հայթան  
ինքն իրան էր նզովում, ինքն իրան նւաս-  
տացնում:

— Դու ինչո՞ւ անսացիր այն ծուռ բե-  
րան շանը խօսքերին, այ եռակի յիմար, քեզ  
ո՞վ ասաց շառթ անել, ձեռովդ քանդել երջան-



կութեան՝ հիմունքը... ես խմած էի... լուրջ մարդը ներկայ չէր, նրա ուրաւականին ծաղրեցին Զիւն ու դատին... ո՞ն վրէժ, անկողնա վրէժ... ես երկուսին էլ կախել պիտի տամ, ու չէ, վաղը կամ միւս օրն Ապտուլլահ կը բազմի բղեշխական գահը, ես հէնց այդ օրն այն վատերին պիտի կախեմ: Ի՞նչ է նշանակում արբած, խելակորոյս մարդուն խաբել, վատաբար դաւել, շառթ անել տալ մի այնպիսի բանի համար, որից անկարող է ենթական խուսափել, հեռանալ, ազատուել:

Կարծես ուռած էր Հայթայի գլուխը, խաւարած էին աչքերը. նա չէր կամենում և իր սիրելի ընկերների հետ տեսնուել, խօսել, կամ իր անհրաժեշտ պարտականութիւնները կատարել: Խոր արամութեամբ լցւած, աննպատակ շրջում էր քաղաքում, այդպիսով կարծում էր իր սրտի մէջ վառւած դժողքը մարել...

Անցքից երեք օր յետոյ, առանց թիկնապահների ուղեկցութեան՝ գնում էր շուկան ի վար, մերթ կանգնում շքեղ զարդարւած կրպակների առաջ, մերթ գնում գլուխը քարշ ձգած, առանց աջ ու ահեակ նայելու:

Յանկարծ ինք գինք գտաւ քաղաքից դուրս, հայոց փոքրիկ տաճարի և առաջնոր-

դարանի առաջ. Հայթան անվստահ քայլով յառաջացաւ, մի քանի րոպէ անգիտակ հայեացքով իբրեւ թէ դիտեց պարթև հայրապետի տաճարն, ապա առանց իր կամքին, առանց գիտնալու թէ ինչո՞ւ, դիմեց առաջնորդարան: Արդէն հայք նրան տեսնելով՝ պատրաստւած էին ընդունելու: Հիասթափւեցաւ Հայթան, երբ բախում պատահեցաւ ծերունի արքեպիսկոպոսին և քահանաների բազմութեան, որ մուտքի աջ ու ձախ կողմերում կանգնած էին երկիւղով:

— Բույուրուն՝ էֆէնտիւ, — իսկոյն կանգնեց սրբազանը, — բարով եկաք՝ հազար բարով, համեցէք ձեր ծառայի բնակարանը, թէև ճոխ չէ, զարդարուն չէ նա ձեր վսեմութեան ոսկեձեղուն ապարանին պէս, սակայն՝ ձեր նւաստ ծառայի գոհ ընդունելութիւնը կը յուսամ՝ որ այդ թերութիւնը պիտի լցնէ:

Յիւրատ նախ՝ կարծես զարմացաւ, մի վայրկեան արձանացաւ սեմին վրայ՝ մոլար աչքերն արքեպիսկոպոսին սեւռած, յետոյ նրա կարճ ճառիցն սթափւելով.

— Գնանք, — շնչաց դողդոջուն ձայնով, — ես ցանկանում էի ձեր սրբութեան տեսնել, ձեր ս. օրհնութիւնն ստանալ, աւելի ոչինչ:



Մի անսահման ուրախութիւն փայլեց շրջապատող քահանաների երեսներին: Այդ աստիճանի յարգալիւր պատասխան արիւնախում Հայթաների մեծ փաշայից, մինչև նրանք սպասում էին հայհոյանքի տարափին և բռնութեան:

—Հրամայեցէք, էֆէնտիմ,—ասաց առաջնորդը՝ ոչ նւազ գոհունակ դէմքով,—բարեհաճեցէք զոնէ մի սուրճ ընդունել:

—Սրդէն միայն սուրճ...—մըմուաց Ֆիրատ—փաշա:

Ճոխ չէր խոնարհ, նւաստացած Հայոց, պատրիարքից յետոյ՝ գահերէց արքեպիսկոպոսի բնակարանը. նա մի հասարակ, ամուրի մարդու մենարան էր քան թէ առաջնորդարան, ամեն առարկայի վրայ զրւած էր մաքրութեան և պարզութեան զրոշմ:

Սուրճ մատուցւեցաւ մեծ հիւրին, չիպուղը լցւեցաւ դուլի-դուլախ (գառն աւկանջ) Պաֆրայի ծխախոտով, նա ուրիշ ենիչերու պէս դիւ-փիւրէսի (ատամի վարձք) չըպահանջեց մեծարանքն ընդունելիս:

—Ես ցանկանում էի ձեր սրբազնութեան հետ առանձին մնալ,—ասաց Ֆիրատ յարգանքից յետոյ,—եթէ կարելի է խելճէք (առանձին) մնանք, մի շատ կարևոր գործ ունիմ...

Սրբազանը նրա ուժ լինելը չըզիտնալով՝ կասկածեցաւ, կարծեց թէ քաղաքավարի կերպով կողոպտելու է եկած անսանձ ենիչերին: Իսկոյն պաշտօնեաներն հեռացան, մնաց Հայթան ծերունի հոգևորականի հետ:

—Ձեր վսեմութեան ծառայ եմ,—ասաց սրբազանը մի անհանգիստ ժպիտով և դողդոջուն ձայնով,—պատրաստ եմ:

—Նախ՝ սրբազան հայր,—շնչաց Հայթան՝ ծերունու նիհար, ոսկրուտ ձեռն ակնածութեամբ համբուրելով, մի խօսիք ինձ հետ իբրև հօր ենիչերիների մեծ փաշայի, խնդրեմ ընդունէք իբրև ձեր սրբազնութեան գայլերի ճանկն ընկած մի գառն, որ չէ մոռացած իր հոգևոր հօրն ու տիրոջը...

—Ստուգի՛ւ... ի՞նչ եմ լսում,—զարմացած ընդհատեց նա:

—Ես մատաղ քո Աստծուն, սրբազան, քո խաչին, ես խոստովանում եմ, եթէ թոյլ կըտաս՝ կըխօսեմ հայոց լեզուով...

—Խօսիր, որդեակ իմ,—որդեակ բառը դուրս թռաւ այրելով սրբազանի շրթունքը: —Խօսիր ես քեզ լսում եմ... դժւ, հայ:

—Այո, Աւետարանին երկրպագու հայ եմ...

—Փնոք քեզ տէր, որ գործում ես այս-



պիտի հրաշքներ... բայց՝ ի՞նչպէս այժմ թուրք  
և մեծ վեզիր էք:

— Եթէ կըլսէք իմ փոքր պատմութիւ-  
նը, — կակագելով հայերէն խօսեցաւ Հայթան,  
— բայց՝ մի՞ գուցէ խլեմ ձեր սրբագնութեան  
թանգ ըողէներն... արգելք լինիմ ձեր գոր-  
ծին...

— Ո՛չ, իմ կորած գառնուկ, քո գիւտն  
ինձ թանգ է մինչև իսկ իմ կեանքից, խօ-  
սիւր, որդեակ իմ, հայ լեզուով՝ որ այնքան  
սիրուն հնչեց աղանջիս, ես պատրաստ եմ  
բեզ լսել, ո՛հ, իրօք, հզօր ենիչերին հայոր-  
դի... չեմ կարող հաւատալ... այս կատա-  
րեալ հրաշք է...

Ը.

Ֆիրաթի անցեալը

— Կ. Պոլսում, — հառաչելով սկսեց Ֆի-  
րատ — փաշա, — Պէշիկթաշ արուարձանում,  
ապրում էր մի համեստ, օրական աշխա-  
տանքով ապրող՝ տղէտ, բայց՝ առաքինի մի  
ընտանիք երեք հոգուց բաղկացած, այր, կին  
և մի արու զաւակ:

Սարգիս — ախպարը, — այսպէս էր նրա  
անունը, — ձեռքի վրայ մանրավաճառութիւն  
էր անում. նրա կին Սառան ասղնեգործու-

թեամբ պարապում, իսկ նրանց միակ որդին,  
Զօրան, — այսպէս էր տառն և չորսամեայ  
պատանեկին անունը, — քարոզիչ վարդապե-  
տին ժօտ կարդալ, գրել, թւել և նկարել էր  
սովորում:

— Վարդապետին անունն ի՞նչ էր, —  
ընդհատեց սրբազանն աշխուժիւ:

— Իմ ազնիւ վարդապետ-վարժապետը,  
որի մասին խօսում եմ, կոչւում էր Մա-  
նաս օղլի Սիմէօն վարդապետ:

— Ա՛հ... շարունակիր, — մրմնջաց սրբա-  
զանը հետաքրքրութիւնը լարած, — այդ պատ-  
մութեան մի մասն ինձ կարծում եմ ծա-  
նօթ պիտի լինի... ճանաչում եմ... գիտեմ  
նրան...

— Զօրան, — շարունակեց Ֆիրատ լիա-  
շուրթ ծխելով, — շատ էր սիրում իր բարի  
վարժապետին, նրա աւետարանական վարքն  
ու բարքը, նրա գլթած, ջերմ, ազնիւ սիր-  
տը յափշտակած էին պատանու անաղօտ  
սէրն ու խորին յարգանքը, նա հիանում էր,  
նա պաշտում էր տիպար վարդապետին...

— Իսկ վարդապետը, — հարցրեց սրբա-  
զանը լուրջ կերպով:

— Զօրան նկատում էր նոյն աստիճան  
սուրբ սէր և իր վարդապետի մէջ... ստէպ



ստէպ պատահում էր՝ դասերից յետոյ, երբ Զօրան սովորած էր լինում շատ լաւ, վարդապետը մանկան գլուխն իր կրծքին սեղմելով, — որդեակ իմ, — ասում էր նրա ձերմակ, գեղանի ձակատն համբուրելով, — դու իմ հոգւոյս բեկորն ես, դու ինձպէս մարդ պիտի լինիս...

— Ստուգիւ, — ընդհատեց առաջնորդն աւելի ուշադիր նայելով խօսակցին, — Զօրան շատ ազնիւ մարդ պիտի լինէր, նա մեր ազգի նշանաւոր որդիներից մինը պիտի դառնար: Նրա մէջ արդէն փայլում էր բոցափայլ առաքինութիւն:

— Դուք ճանաչում էք, սրբազան, տեսած էք Զօրան:

— Սիմէօն վարդապետն իմ... հոգեհարազատն է, շարունակիր:

— Զօրան սովորում էր մեծ եռանդով, նա գրում էր շատ լաւ, կարդում էր վարդապետի չափ, մատներն վրայ լուծում Շիրակացու թւաբանական հարցերից, գիտէր շարադասել, իր տեսածն ստուգիւ պատկերացնել: Սովորած էր Աւետարանի մեկնութիւն, Ծործորեցի — կապուտակն — Օհան — Պլուզի, Ներսէս, Սարգիս Շնորհալիների և այլ մեկնիչների գրութեամբ, նա կարդացած

էր, անգիր էր արած շատ թարգմանական և ազգային գրքեր, լիովին գիտէր իր թշուազդի պատմութիւնը... այդ բոլորը լեցուցել էր մանուկ գլխի միջ Սիմէօն հայր սուրբը...

— Ճշմարիտ է, որդեակ, այդպէս է, — ևս քան զևս հետաքրքիր, համրիչի խոշոր հատիկները գլորելով՝ ստորոգեց սրբազանը, — Զօրան յայտնի մարդ պիտի դառնար... բայց՝ ցանկալի էր ինձ գիտենալ՝ թէ ի՞նչ եղաւ Զօրան:

— Յափշտակում էք ինձ, վսեմափայլ տէր...

— Ես խնդրեցի ինձ հետ պարզ վարւել, ես ձեր ծառան եմ՝ սրբազան, ինձ մի տեսնէք փաշայական զգեստով ենիչերի...

— Լաւ, որդի, խօսիր, ես քեզ եմ լսում...

— Զօրան իր հօրէնական տան միակ զարդն էր. շնորհալի պատանին՝ զեռ մանուկ հասակում, ուզում էր տնտեսական ծանր լծի մի մասն էլ ինքն առնել, քիչ հանգրտացնել ծնողներին, վարձատրել նրանց, իր ստացած բարիքի փոխարէն խորհին երախտագիտութեամբ և գործով, պատահած ժամանակ տիրացուի պաշտօն կատարելով, իր շահած ղուռուհները հօրն էր յանձնում, իր քրտինքով հատուցանում հօրն արած բա-



բութիւնների տոկոսը: Աւագ, սրբազան, դժխեմ բախան այլապէս էր կարգադրած: Ամարան մի ջինջ և գեղեցիկ օր, երբ Զօրան դասերից ազատած, գրքերը թեկն տակ տուն էր գնում, ներկայացաւ մի ծերունի հայ մարդ, որին լաւ էր ճանաչում պատանին... Է՛հ, նգովեալ լինեն այդպիսի հայերը... Զօրան, —ասաց նա, —արեւին ճ հետ Իւսկիւտար գնանք, մի յայտնի հարուստ չորպանի է վախճանած, դու հրաւիրւած ես՝ նրա թաղման ժամանակ պիտի երգես քո սքանչելի ձայնով «Զարհուրեալ» երկնային շարականը: — «Բայց, գրքերս մօտս են՝ էմի (հօրեղբայր), պատասխանեց Զօրան անութի գրքերը ցոյց տալով, —նախ սրանք տուն տանեմ, յետոյ գնանք... —Ո՛հ, ժամանակ չկայ... այս ըոպէին պէտք է գաս, նաւակը մեզ կըսպասէ: Գրքերդ ես կըթողնեմ հանգուցեալի տանը. թաղումն աւարտելուց յետոյ՝ կ'առնես գրքերդ, գուցէ մի երկու էլ ոսկի, կըգաս տունդ:

—Ա՛հ, ասաց սրբազանն, —ես այդ անցքը չըզիտէի...

—Պարզամիտ Զօրան հաւատում է նենգաժէտ ծերին, —շարունակեց Ֆիրատ յուզւած ձայնով, —գնաց նրա հետ մակոյկ նըս-

տաւ: —Զօրան — յանկարծ նաւահանդատում երեւում է հայրն ու ձայնում, —այդ ճւղ ես գնում... — Իւսկիւտարում ննջեցեալ կայ, հայրիկ, պատասխանում է պատանին, մինչ մակոյկը պատառելով ալիքն հապճեպով յառաջ էր սլանում: Ա՛հ, երանի՜ Իւսկիւտար գնար. Ղըզ—ղալէի (աղջկայ բերդ) մօտերից խուսափում է մակոյկն և յառաջանում դէպի Ղառթալ: Լաց է լինում Զօրան, դէպի Կ. Պոլիս նայելով գոռում է, փորձում է ինքզինք ալիքներին յանձնել, չանսալով նրա լաց ու կոծին, կապում, նետում են նաւին խելը, դիւատիպ հայ ծերն սպառնում էր մօրթոտել, եթէ նա չէր լուր:

—Ո՛հ, խեղճ Զօրան, —մըմռաց առաջնորդն արտասուքը ծածկել ջանալով, —ես այդ չըզիտէի:

—Զօրան ընկնում է առնաւուն Միթհատ փաշայի ձեռն, արդէն վաղուց ծրագրւած միջոցաւ, տարւում փաշայի հարէմին հետ Միտիլլի կղզին, մնում նրա մօտ իբրեւ մանկուհի... Ո՛հ, այո՛, մանկուհի... վեց տարի, անկարող իր պատին ու գոյութիւնը պահպանելու, կամ մեռնելու մինչև իր առնութիւն ստանալը: Զօրան այդ ժամանակ, ինչպէս բոլոր մանկուհիները, հագած էր մե-



տաքսեղէն, ոսկեծոպ զգեստներ՝ կլապիտօ-  
նից յօրինւած անձաշակ, քմահաճ նկարնե-  
րով: Ընդ միշտ նրան հետեւում էին չորս  
սպառազէն թիկնապահներ, նա չէր կարողա-  
նում որեւիցէ քրիստոնէի հետ խօսել, իսկոյն  
մատնւելով, Միթհատից գանակոծւում, լրլը-  
ւում էր արդէն սահմանաժից աւելի: Քսան  
տարեկան լինելուց յետոյ, Զօրան մտնում  
է զինուորական ծառայութեան «Հայրա»  
կոչւած զօրագնդում: Նա ծառայում է սուլ-  
թանին նախ՝ իբրեւ օկէֆէր (զինուոր), ապա՝  
իր քաջութեամբ ստանում աստիճան և տիտ-  
ղոսներ. սրանից տաան և չորս տարի առաջ  
ուղարկւում Անատօլ, Երեանի կուում 300  
ժարգով տաան երկու հազար պարսիկներ  
ուղարկւում ջէննէթ, իր երկու քաջ ընկեր-  
ներին հետ ստանում է փաշայութեան աս-  
տիճան: Չըմոռանանք ասել, որ Զօրան նոյն  
կուին մէջ աննկատելի կերպով սպանում  
է Միթհատին, որ կարծւում է թշնամուց  
զարկւած: Զօրան հետզհետէ յառաջագիմե-  
լով՝ բարձրանում է Դէլի, Հայթա. ենիչերի  
հեծելազօր և հետեակ բանակի հրամանա-  
տարութեան մեծ աստիճանին, Հայրա—Քի-  
րաւս անուանով:

—Հայթա—Ֆիրատը Զօրան է, —աղա-

ղակեց սրբազանն ընդոստ ոտքի ելնելով, —  
Հայթայի անունն եմ լսել...

—Հայթա — Ֆիրատն ես եմ, սրբազան...

—Դժ, դու Զօրան ես... ո՛հ, որդեակ  
իմ, սիրասունս, դու Զօրան ես և Հայթա—  
Ֆիրատը...

—Այո, սրբազան, ես Զօրան եմ, թուր-  
քերն ինձ ճանաչում են Հայթա — Ֆիրատ  
փաշա անունով, բայց՝ ձեր սրբագնութեան  
մօտ այժմ Զօրան եմ...

Մի անգիմազրելի զգացում մղեց ծե-  
րունուն, նա տարածեց իր գոզգոջուն բա-  
զուկները, սեղմեց խրոխտ փաշայի գլուխն  
իր ժաշւած կրծքին, համբուրեց ճակատը.

—Ի՛մա Զօրա, —արտասուքով ողորում  
էր ասելով, —իմ սիրական որդիս, այժմ գոհ  
կըմեռնիմ, Յակոբի նման տեսայ որդիս...  
տեսայ քեզ:

Ֆիրատ չէր հասկանում սրբազանին  
բուռն սիրով վերաբերւելու շարժառիթը. նա  
այդ վերազրում էր քրիստոնէական լայն  
եղբայրսիրութեան սկզբունքին:

—Դժ, Զօրա ջան, դժ՝ որդեակ իմ,  
այդ դժ ես, —ասում էր առաջնորդն ան-  
զադար զգւելով իր նիհար կրծքին վրայ:

—Այո, ես եմ՝ սրբազան հայր իմ...



— Ուրեմն ի՞նչպէս չէի ճանաչում քեզ...  
 ծերութիւնը կուրացրել է ինձ, ազգիս ան-  
 ագորոյն վիճակն ու բախտը մաշել են ինձ,  
 —ասում էր անկեղծ հովիւն արտասուելով՝  
 իր նոր գտած գառին համբուրելով, — դու  
 իմ Զօրան ես, սիրելի աշակերտս:

Զօրան՝ կամ Ֆիրատ, որպէս պիտի  
 անւանւի մինչև վերջը, յանկարծ յետ ըն-  
 կրկեցաւ ծերունու գրկից, ակնապիշ, լուռ  
 ապշութեամբ զննեց մի ըսպէ, ապա ինքն  
 ևս արտասուելով ընկաւ նրա գրկին մէջ, ծե-  
 րին ձեռները թրջելով, — իմ հայր սուրբն ես,  
 — մընջաց, — Սիմէօն հայր սուրբն ես դու...  
 ներէ, ներէ սրբանունդ վարժապետս, իմ  
 աչքերն օտարացած են միշտ դարշելի դէմ-  
 քեր տեսնելով, եթէ ոչ՝ ևս քեզ, հայր իմ,  
 առաջին տեսնելուս պիտի ճանաչէի, գիրկդ  
 ընկնէի, լալով պատմէի քսան տարուց ի վեր  
 կրած ցաւերս ու զրկանքներս, պիտի պատ-  
 մէի ամեն ինչ... բայց՝ հայր, ծերութիւնն  
 այլափոխել է քեզ, իսկ ինձ օտարացուցել  
 է վատ կեանքը: Դու չես գտնում քո սիրա-  
 սուն մաքուր, ազնիւ աշակերտին, այլ տղ-  
 մերով, յոռի կրքերով վատթարացած նրա  
 ուրուականը... Զօրայի մէջ չեն մնացած քո  
 ցանած բարի սերմերը, նա չունի մեծ բա-

րոյական անցեալ, փչացած, քայքայւած է  
 արգէն քո կառուցած շէնքը, նրա բարոյական  
 աւերակն ես տեսնում փաշայական ոսկե-  
 վառ զարդերով ծածկւած... նա անարժան  
 է՝ սրբազան, մինչև անգամ քո աջն համբու-  
 րելու, քեզ իր վարժապետ կոչելու... Զօրան  
 հաստատամիտ չըլինելով՝ ապրում է անցեա-  
 լի աղի, լեղի յիշատակների տակ կորացած,  
 խօլ սուերներով պաշարւած, մինչ նա, եթէ  
 քեզ արժանի աշակերտ լինէր, մանուկ հա-  
 սակում կ'իջնէր ի հող, չէր տեսնիլ արևի  
 լոյսը, չէր շնչիլ ապականւած օդ:

Չեմ կարող նկարագրել սի ծերունի ու-  
 սուցչի, մի այրացած ազնիւ աշակերտի զըր-  
 կախառնութիւններն, ուրախութիւններն, որ  
 երկար տարիներ թէև իրար չըտեսած, մի-  
 մեանց յիշած էին իբրև գորովագութ հայր,  
 ազնւաբարոյ որդի՝ փոխադարձ անխարդախ,  
 մաքուր, սուրբ սիրով:

— Զօրա, — ասում էր սրբազանը, — ես քեզ  
 գտնւի կորցրի և առիւծ եմ գտնում... ուրեմն  
 դժեւ ես նզկարդի հերոսը... Զօրան — Ֆիրատ, եր-  
 կուն էլ շատ սիրելի անուններ են, սիրե-  
 լի են դրանք իմ սրտին, որդեակ, մինն յիշեց-  
 նում է սիրական աշակերտիս, միւսն իմ ապեր-  
 ջանիկ հայրենեաց մշտահոս արտասուքը...



— Ես եմ ինձ ֆիրաւս անւանել, չըմո-  
ռանալու համար նրա ավերում հարստահար-  
ւող, լաց եղող եղբայրներին:

— Այո, որդեակ, արտասուքն է մեր  
անունդը, արտասուքն է ազգայնութեան շըր-  
ջափակ, արտասուքն է մեր եկեղեցւոյ հի-  
մունք շաղախող, որի համար զոհեցինք և՛  
գահ և՛ թագ և՛ անկախութիւն, միայն նւի-  
րական քարինքը պահելու, — մեր կտակարանը  
կախած արաբական արմաւենիներէց՝ լաց  
ենք լինում յիշելով Սիօն, անապատի դուռ-  
արը ծաղրում է մեզ, մեր գերիչներն ստի-  
պում են ասուածային երգերէց ասել, —  
ինձպէսներ, Զօրա ջան, կախած կտակ-  
արանին, աւանդապահեն և պատրաստ բըռ-  
նակախների առաջ իսկ երգել, պահապան են  
ծայրախաչ գմբէթին, թէև բիւր հալածանքի  
ենթակայ:

— Հայր իմ, — շեղեցաւ ֆիրատ ծերու-  
նու աջն համբռնելով, — այսօր ես ինձ մա-  
քուր եմ զգում: մաքուր օդ շնչում...

— Ուրեմն դու պաշտօնապէս ուրացած  
չեմ...

— Աւանդ, ակամայ ուրացած եմ...

Սարսափեցաւ սրբազանը: Նրա արտա-  
սուքը չորացան, կիսաշէջ աչքերը փայլեցին

մի տեսակ չոր կրակով, սառն լըջութեամբ  
իր աթոռը բազմելով.

— Թլփատւած ես, — հարցուց երկիւղով.

— Ինչպէս ասացի, հայր, ակամայ թըլ-  
փատւած եմ, բայց՝ չեմ հետևած նրանց  
վարդապետութեան, մինչև անդամ շատացել  
եմ մի ամուլ կին առնելով, որ նոյնպէս հայի  
աղջիկ է... մասամբ էլ գոհ եմ զաւակ չու-  
նենալուս... նրանք պիտի թլփատւէին...

— Յիշում եմ, — ձեռը ձակատին դնելով  
ասաց արքեպիսկոպոսը, — դու մեր սարաֆ  
Յակոբին տւած էիր մի քսակ ոսկի...

— Այո, բայց՝ պատւիրել էի անունս  
չըտալ:

— Նա միայն ինձ խոստովանած է, միայն  
ես գիտեմ...

— Այդ առթիւ դուք գիտէք, սրբազան...

— Ոչինչ, Զօրա, ես պէտք է գիտենամ  
և անգէտ ձևանամ. արժանի հոգևորականն  
եզիպտական լաբիւրինթոս է, նրա մէջ կոր-  
չում են հազարաւոր գաղտնիքներ...

Մի քանի բոպէ լուռութիւն տիրեց, ծեր  
առաջնորդը գլուխը ըրազկին յենած՝ նայում  
էր Հայթային և մտածում. ֆիրատ տկնկոր,  
լուին ծխում էր չիպուղն և ծխի ալիքով ողո-  
ղում սենեակը:



—Արդեօք, սրբազան, — լռութիւնը խղեց նա, — ծնողներս կենդանի՞ են... քսան տարի է նրանց գրկից կորցելու, ոչ մի տեղեկութիւն չեմ ստացած. նրանց կարօտն այրում է ինձ...

— Մայրդ մեռած է, իսկ հայրդ կուրացած միշտ քեզ համար լալով: Նա թողած է ամեն ինչ, քո կորուստով բանաստեղծ դառած սազ է ածում, Աւրգ — Զեմանի անունով շրջում է ամեն տեղ, նրա տխուր երգերի նիւթն ու ժակարդն է իր Զօրան: Նա նկարագրում է քո սքանչելի գեղեցկութիւնը. յիշում ես, մարդ ամաչում էր ամենագեղ դէմքիդ նայելուց, նա քո վարքը, քո անյուսալի կորուստն է եղեր երգում մեղամաղձոտ տաղերով...

— Ա՛հ, անիծեալ գեղեցկութիւնն ինձ խլեց նրանց գրկից... — այժմ ուր է հայրս, գիտէ՞ք արդեօք նրա մասին...

— Հաստատապէս չըգիտեմ... Բայց՝ դու, քանի որ ինձ չէիր ճանաչում, այսօր ինչո՞ւ եկար առաջնորդարան:

Ֆիրատ մանրամասն պատմեց ինչ որ մենք արդէն գիտենք. առաջնորդն ուշադիր լսեց:

— Դու՝ Զօրան, հետեւել ես ներքին ձայ-

նին, — եղբակացուց նա, — առաջնորդարան գալդ լաւ է քեզ համար...

— Այո՛, սրբազան, հետեւել եմ ներքին ձայնին: Գոհ եմ՝ որ իմ վարժապետիս գտայ, կըլսեմ նրա խորհուրդն իմ անել վիճակի մասին, որ իմ խելքս չէ զօրում մի ելք գտնելու...

— Իմ խորհուրդը, Զօրան — պատասխանեց սրբազանն՝ — առ այժմ արբեցութիւնից հեռի մնալդ է, քանի որ էլիֆ հանրմ սերտ կապած է դուրանին, պէտք է յետ կանգնես խմելուց, որպէս զի ընտանեկան սրբութիւնդ հրապարակաւ չըխայտառակի: Գալով քեզ՝ դու պէտք է ապաշխարես: Այժմ քեզ հետ խօսում եմ ոչ իբրեւ վարժապետդ, այլ՝ իբրեւ հայոց մի մասին առաջնորդը. դու՝ եթէ պահում ես կրօնիդ սկզբունքները, կամ ինչ որ սովորած էիր, պէտք է հրապարակաւ ապաշխարես թլփատւելուդ համար, ինչպէս Վահան Գողթնացի, որ ներէ եկեղեցին:

— Բայց բռնադատեցին ինձ...

— Մահից հեռի սահման կա՞ր, Զօրան. քո միտքը զարգացած էր և դատողութիւնդ հասած իր գազաթնակէտը, ինչո՞ւ չընտանտակեցար և չըդատեցար «անյայտ» վրկաների շարքում... Դու գեռ գիտակցաբար ես



մեղանչել, իսկ Վահանը, որին յիշեցի, անգիտակցաբար, երբ նրանք ապաշխարում են, դու էլ պէտք է ապաշխարես...

— Իրաւի, — մըմռաց Ֆիրատ, — ես անձնասէր եղայ քան ինքնասէր, ես կեանքն ընդունեցի անբիական մահւան տեղ, որի քաղցրութիւնը միայն մեռնողն է զգում...

— Ուրեմն՝ զաւակս, առայժմ պէտք է ծածուկ ապաշխարես, ոտքդ չըկտրես առաջնորդարանից, գաս, գնաս, իմ հրահանգով շարժես, մինչև որ ազատ վայր գտնելով յայտնապէս ապաշխարես, քանի որ դու շատ պէտք ես ազգիդ։ Գալով շառիին, արբեցութիւնից հեռանալու ես, մեր օրէնքն էլ դէմ է արբեցութեան, մինչև՝ որ խոր կերպով մտածենք, քեզ ցոյց տանք ուղին, եթէ ոչ ընտանեկան պատիւդ ձեռքից կ'երթայ, ըստ զուրանի տրամադրութեան ճիւղ-ուլա կըլինիս. դա կըմահացնէ բոլոր վարկդ։

Թ.

Ամուսնալոյծ սիբեիկներ

Մինչ Հայթան հայոց առաջնորդարան գնալով մասամբ սփոփում էր ինքզինք, Զիան զարմանքով էր տեսնում նրա լրջութիւնն՝ ուխտապահութիւնը, ինչպէս յայտ-

նում էին իր լրտեսները։ Նա մտածեց որեւիցէ միջոցաւ ուխտադրուժ անել, արբեցնել, առանց ուղղակի երևելու, բայց՝ ում դիմէր, իր խմբի մէջ չըկային այդպիսիներ, իսկ արբեցողներն արդէն նրա բարեկամներն էին։ Դեռ ես ինքն միջոց չէր գտած, երբ լրտեսներից մինը տուն գալով, — Ձեր վսեմափայլութեան հրամանով, — յայտարարեց, — շըջելով մեծ-վէզիր Ֆիրատ փաշայի ետևից, պատիւ ունիմ այժմ խոնարհաբար յայտարարել, որ նորին վսեմութիւնն այսօր երկրորդ անգամ գնաց Հայոց առաջնորդարան, որպէս գնացած էր երեկ. երեք ժամ մնաց, թէ ի՞նչ անց ու դարձ կայ, այդ չեմ կարող ասել, քանի որ ոչինչ յայտնի չէ, մինչև անգամ առաջնորդի սպասաւորները անգէտ են այդ մասին։ — Դուրս գալուց յետոյ՝ Ապտուլահ փաշայի ծառաներն ընդ առաջ եկան, խնդրեցին իրանց տիրոջ անունով, այժմ նա գտնուում է յիշեալ փաշայի տանը։

— Եւ խմբում են, — ընդհատեց Զիան խորխոր կերպով, — իսկ՝ դու, սիւնքոր, չես կարող ներս մտնել... այս չէ՞ բոլորը...

— Իրաւ է, էֆէնտիմ, — ծոծրակը քորելով պատասխանեց բարեմիտ լրտեսը, —



չեմ կարող ներս մտնել, բայց մի քիչ բան  
կարող եմ լսել իմ եղբորից, որ նոյն Ապ-  
տուլլահի ծառան է...

— Ապա, նորութիւն չըբերիր...

— Նորութիւնն այս է, նրանք՝ չորս  
ընկեր, խմում են:

— Խմում են...

— Այո, խմում են, եղբայրս երգմամբ  
հաւաստեց:

— Եթէ սուտ դուրս գայ...

— Գլուխս այստեղ չէ՞, — ձեռք գլխին  
գնելով, — կարեցէք, դէն գլուխեցէք իբր ան-  
արժան մի դիակ, իսկ եթէ...

— Հասկանալի է, ցած կենդանի, եթէ  
ստույգ եղաւ, խալսթ, այդ չէ՞ քո պահան-  
ջը, քսու:

— Դուք գիտէք, էֆէնտիմ...

— Լաւ, եթէ ես գիտեմ, այդպէս է:  
Գնա, Ազամէթն ինձ մօտ ուղարկիր, իսկ  
ինքդ Ապտուլլահի ապարանքից չըհեռանաս:

Բանսարկուն՝ որ միջահասակ, գոգա-  
ւոր, կանաչ աչքերով, ծաղկատար, անձու-  
նի, քառանկիւնի դէմքով, թիկնեղ, հաստ  
թաթարական՝ կամ մօնղոլական արիւնով  
շաղախւած, մի տեսակ խառնածին էր, խորը  
գլուխ տալով դուրս ելաւ:

— Այս շատ յաջող եղաւ, — ասում էր  
Զիան, — դու իմ ձեռուսն ես, Ֆիրատ, էլ  
չես կարող ինձ տապալել, դու՝ ինքդ պիտի  
տապալիս, ծաղր ու ծանակ լինիս արիւնա-  
քամ ենիչերինների:

Ազամէթ՝ որ մի գեղեցկադէմ, կայտառ  
երիտասարդ էր,

— Ի՞նչ է հրամայում տէրս, — խոր գլուխ  
տալով մրմռաց:

— Գնա, — հրամայեց հին բղբշխը, — ինձ  
մօտ բեր մեծ դատին:

Կէս ժամ յետոյ ներս էր մտնում գու-  
շիկ բերան դատին, ընչացքով բերնին ծուռ  
խոռոչը ծածկած:

— Ձեր սրբութեան կռած ռադրը չը-  
պահեցաւ, — դիմաւորելով նրան ժպտազին  
ասաց Զիան, — Հայթա — Ֆիրատ փաշա այս  
րոպէին խմում է իր անբաժան ընկերների  
հետ:

— Այսօր Աստուծով խելագարւած է և  
դօնաղ Բէօփրուլու օղլու մօտ, որ մտքիցն  
է անցնում սէրասէրմարիս (սպարապետու-  
թիւն) և՛ որ մեծն է, բղբշխութիւն:

— Ա՛հ, ա՛հ — ծիծաղել փորձելով պա-  
տասխանեց դատին, — ուրեմն գոռոզ Ֆիրա-  
տըն ընկնում է, բարբ... շատ գէշ չէ:



—Այժմ ձեր սրբութեան հրաւիրեցի որ  
գնաք, ձեր աչքով տեսնէք, Քէթլէ (հրաման,  
վճիռ) արձակէք, որպէս զի Ֆիրատտ այլեւս  
չըկարողանայ կեղծել և ծածուկ իր հայրե-  
նի կրօնը պաշտել:

—Եթէ չըտեսնենք իսկ, կինը նրան չի  
ընդունիլ, նիփեանը (ամուսնական դաշն, ա-  
պահարզան) վերջանում է:

—Այո, և պէտք է վաղն իսկ հիւլ-ուլա  
անել, այնուհետեւ թողնել, որ գործն իր  
բնական կարգով շարունակւի, որ Ֆիրատտ  
փաշա ինք գայ և վերստին բազմեցնէ ինձ  
աթոռիս:

—Անհոգ եղբր, այդպէս էլ կըլինի:

—Ուրեմն՝ ձեր սրբութիւնն անձամբ  
չըպիտի՞ երթայ:

—Ո՛ւր գնանք, Զիւն, գործն ինքնին  
կըշայանալի:

—Ընկերքը պիտի պահեն, Ֆիրատտ չը-  
խոստովանի, ամուսինն էլ իր սիրած տղա-  
մարդից չըջուկի...

—Գուցէ, բայց ես աւելորդ եմ գըտ-  
նում իմ գնալս:

—Ըստ իս անհրաժեշտ է ձեր գնալն և  
պէտք է գնաք, այս եմ ուզում ես: Կըլսէք,  
պէտք է այս բոպէիս գնաք...

Հայթա — Ֆիրատտ՝ հայոց առաջնորդի  
յորդորով, մի քանի օր յետ մնաց խմելուց,  
ծածկաբար աղօթում էր իբրեւ քրիստոնեայ  
և աշխատում ս. Հաղորդութիւնն ընդունե-  
լու, թէեւ խոստացած չէր սրբազանը: Չոր-  
րորդ օրն՝ երբ դուրս կըգար առաջնորդա-  
րանից, Ապտուլլահ փաշայի ծառան իր տի-  
րոջ կողմից հրաւիրեց նրան:

Հայթան չէր կարող իր բարեկամի հրա-  
ւէրը մերժել. ենթադրելով՝ որ կարող է ան-  
հրաժեշտ գործի համար ուզւած լինել, նրա  
տունը գնաց, ուր արդէն բազմած խմում  
էին իր օղու ընկերները...

—Օհ, Սոճի՛ (ապաշխարող կրօնաւոր)  
Ֆիրատտ, այս ո՛ւր ես, չես երևում, — ձայն  
տուեց խումբը, — լաւ, չես խմում, մենք էլ  
չենք ստիպում, բայց՝ ինչո՞ւ խոյս կրտաս մե-  
զանից, չէ՞ որ մենք քո լաւ ընկերներն ենք...

—Տղայք, սոփութեան բան չըկայ, այն  
անիծած գիշերն՝ որ Շառք արի, ուզում եմ  
պահել, չըխմել, եթէ ոչ ձեռիցս դուրս կը-  
գայ իմ նազելի կինը... ան, եթէ մի ուրիշ  
բան լինէր Շառքի գոհը, կըգրժէի, բայց՝  
ասացէք, կարո՞ղ եմ պաշտելին կորցնել, զո՞ն  
անդը՛ր մի բաժակ մաստիքայի համար, չեմ  
խմում...



— Դու մեր խմբի զարդն ես, Ֆիրատ,  
— դիտեց Տամատ-Մուստաֆա, — առանց քեզ  
մենք օր չունենք, չենք զարթանում:

— Շնորհակալ եմ, կրհասկանամ անկեղծ  
խօսքիդ նշանակութիւնը, բայց ինչպէս դի-  
տել տւի, չեմ կարող այսուհետեւ արբենալ...

— Վահ, — բացականչեց Ապտուլահ, — ի-  
բաւ որ սոֆի է եղել մեր գազանաբարոյ Հայ-  
թան: Լսեցէք, տղաք, շառիթ է արել ծուռ բերան  
դատու և մի շարք շների առաջ... Ծօ — Ֆիրա-  
տին դառնալով, — դու լաւ տղայ ես, քաջ ես,  
ազնիւ ես, սակայն թուրամիտ ես, կամք չունիս:  
Քեզ ո՞վ ասաց այն ծուռ բերանին լսել, մեզ  
քնած թողնել հեռանալ, վայր բերել քո գըլ-  
խին, առանց մեզ հարցնելու շառիթ անել, հի-  
մա էլ, բարեկամների մէջ, աչքը շշին տըն-  
կել. սրտով փափաղիլ, բերնին ջրերը կուլ  
տալով, թէ ռա՛ւք եմ արել... Դէն, Ֆիրատ,  
քո շառիթը մի փարայ չի արժիլ, խմիր մեզ  
հետ, գնա տուն քնիր, ո՞վ պիտի գնայ ի-  
մացնէ թէ Ֆիրատն արբած է, միթէ մե-  
զանից կասկածելու վատութիւնն ունիս...

— Ապտուլահ, սկզբից խօսքերիդ հա-  
մամիտ եմ, բայց՝ չեմ կարող խմել: Ձեզա-  
նից՝ իմ բարեկամներից կասկածե՞լ, կար-  
ծում էք այդպէս, միթէ այդքան ստորա-

նալ կարելի է, ո՞չ... գիտես՝ որ չըպիտի  
լսէ, չըպիտի գիտենայ...

— Ուրեմն Ալլահից ես վախենում, եզա-  
կի՞ր յիմար: Հէնց այն Ալլահից՝ որ ձիաբէյին  
ուղարկելով սրբագործում է իր մարդարէի  
շնութիւնը, որ ցանկացել էր իր ծառայի  
կնոջը, որ և ո՞չ մի սրբութեան քարոզիչ չէր...

— Ո՛չ, այդ էլ չէ, ես վախենում եմ  
էլիֆից:

— Ծօ, քեզ հաւատարիմ չէ՞...

— Վերին աստիճանի հաւատարիմ...

— Ուրեմն էլ ի՞նչ...

— Լսեցէք, բարեկամներ, էլիֆն հաւա-  
տարիմ է ինձ, նա սիրում է ինձ, իր կեան-  
քից աւելի, բայց՝ ո՞չ իր պաշտած Ալլահի  
սուերին չափ: Նա գլուխը կըտայ, չի դա-  
ւաճանիլ օրէնքին, նա իր սիրելոց կըբա-  
ժանւի, անձնատպան կըլինի, չի շեղւի ժե-  
րիէքից: Շատ յարգում է շառիթ: Ուրեմն՝  
ի՞նչ կարող եմ անել, եթէ խմեմ՝ նա այլևս  
իմս չէ, նեմէհրէմ կըլինի, ուրիշի հետ հիւ-  
լուլան անկարելի է, կըմեռնի իբրեւ քաջ և  
առաքինի տիկին, օրինակելի ամուսին. կը-  
մեռնի նոյնպէս ձեր բարեկամը... հէնց դա  
է ինձ սարսափ ազդող, յետ կանգնեցնողը:  
Եթէ ոչ ոք յիմարն է վախենում երեակա-



յական Ալլահից, յիմարական շառթից, ո՞ր յիմարը պիտի ամաչէ դատուց, եթէ նրա մօտ անգիտակցաբար ուխտել է չըխմել: Ինչպէս ասացի՝ ես միմիայն էլիֆից եմ երկնչում...

— Ֆիրատ, անհասկանալի ես դառնում: Ասում ես էլիֆն ինձ սիրում է կաթոգին: Եթէ սիրում է, ինչո՞ւ պիտի դաւաճանէ, ինչո՞ւ պիտի բաժանւի քեզանից: Չըզիտե՞ս, որ սիրելին, սիրականի թերութիւնները չըտեսնելու չափ կոյր է և ստէպ կամաւ կուրանում է: Եթէ անկեղծ է կնոջը սէրը, նա չի դաւաճանիլ: Ենթադրենք թէ, որպէս ասում ես, նա կրօնաւոր է, շառթն իր սիրուց վեր կըդասէ, բարի, նա ի՞նչ գիտէ կամ գիտենալու է՝ եթէ մի կամ երկու գաւաթ խմես քո ընկերներին հետ, քանի որ տասը գաւաթով անգամ մերկացող կենդանի, արբեցող անասուն չես... Օ՛հ անգը, վեր առ այս գաւաթը, լո՛րն կոնծիր, յետոյ կըխօսենք, կըհասկացնենք, անպատճառ մի հնար կըգտանք այդ անիծեալ շառթից քեզ ազատելու: Ա՛հ, քո սրտովդ էր, լօթի՛, այսպէս չէ՞...

Փաշաներն սկսեցին ծաղրել Ֆիրատին, ամաչեցնել, մի տեսակ բռնադատել իրանց հետ խմելու և յաջողեցան: Զուր չանցան

թուլակազմ (հոգեպէս) Ֆիրատի գլխով, բարեկամների խօսքերն ու ծիծաղները: Նա սրտով ցանկանում էր խմել, բայց ուզում էր յանցանքն ուրիշների վրայ նետել, արքենալ, մնալ Ապտուլլահի տանը, չըգնալ այնպէս էլիֆի մօտ...

— Տղայք, — պատասխանեց նա ի վերջոյ, — ես միայն այս ձևով կարող եմ խմել: Կընստեմ ձեզ մօտ, կըխմեմ քանի որ առանձին եմք, կըմերժեմ ձեր խնդիրն՝ երբ մի այլ դէմք ներկայանայ: Մինչև երեկոյ կըմնանք, գիշերն էլ տուն չեմ գնալ... էլիֆին ո՞վ պիտի իմացնէ՝ թէ ես շառթն աւրած եմ...

— Նոր խելքի եկար՝ դէրւիշ — Հայթա, դէ, տեսնենք...

Ֆիրատ դողդողալով բաժակը վերուց և ժպտալով՝

— Խմեմ՝ Մուստաֆա, — հարցուց, — հա, ի՞նչ կ'տես...

— Խմիր, անառակ, չէ ամաչում, դեռ հարցնում է:

— Խմեմ, — ուր կտրեցաւ կապը, կ'անիծեմ տիրու պապը, — ձեր ագնիւ կենաց, սիրելի ընկերներ, անիծած շառթը:

Հայթան 'ի մի ումպ խմեց ու դէն շարունակ բաժակը:



Արդէն բաւական տաքացած էր մէծ-  
լիւն, երբ ներս մտաւ մեծ-դատին ուղեկ-  
ցութեամբ խառնածին Պօղոս-Համտի փա-  
շայի, իւլէմների և պաշտօնականների:

Բոլորն էլ ակնածութեամբ ընդունեցին  
մեծ հոգեւորականին: Իսկոյն վերցւեցաւ մաս-  
տիքան, մատուցւեցաւ ծխախոտ, սուրճ և  
օշարակ,

— Ի՞նչպէս էք, — սովորական հարց ու  
բարեկից յետոյ ասաց զատին Ֆիրատին, —  
կըյուսամ՝ որ յարգանքը պահած էք ձեր  
կռած շառիւթ:

Ֆիրատ չըպատասխանած՝ Տամատ կան-  
խեց նրան.

— Ֆիրատ փաշա կատարում է շառիւթի  
պահանջը, պահում է իբրեւ մահմեդական: Բայց՝  
կընեք ձեր սրբութեան հարցնել, ինչի՞ց,  
ուսի՞ց թելադրւած կատարեցիք այդ ուխտը:

Հատին իբրեւ փարիսական անձնաւո-  
րութիւն, աչքերը գոցած, մտածել էր կեղ-  
ծում, չէր գտնում օրինաւոր պատասխան.

— Հատի էֆէնտի, — ասաց Տամատ-  
Մուստաֆա, — կարծում եմ՝ որ այդ շառ-  
թով ձեր սրբութիւն չիրազործեց կրօնի որ-  
եիցէ տրամադրութիւն, այլ՝ զուտ թշնամու-  
թիւն միմիայն Ֆիրատի դէմ:

— Թշնամութիւն, աչքերը մեծ մեծ բա-  
նալով կմկմաց զատին:

— Այո, թշնամութիւն, դաւաճանութիւն  
իմ ազնիւ ընկերի դէմ. միայն՝ զարմանում  
եմ, գիտենալով՝ որ դուք ոչինչ առիթ չ'ու-  
նէիք ռիսկու... այլ կաշառւած...

— Ո՛հ, քաւ լիցի, — պատասխանեց զա-  
տին, — ես Հայթա — Ֆիրատ փաշայի բարե-  
կամն եմ, ոչ թէ թշնամին...

— Գիտեմ, զատի էֆէնտի, թշնամի չէք,  
բայց՝ գործիք եղաք թշնամու ձեռին, բայց՝  
մենք գիտենք ո՞վ է իսկական թշնամին:

— Բայց՝ ձեր վսեմութիւնը...

— Մեր վսեմութիւնն ամեն ինչ գիտէ,  
— որոտաց միւս կողմից Աստուլլան՝ աչքե-  
րը ծռած զատու վրայ, — մենք գիտենք, որ  
դուք կաշառւած անարգ թշնամուց, օգտուե-  
լով ս. Մարգարէի դրած օրէնքից, ձեռնար-  
կեցիք ամօթալի գործողութեան: Մեր վսե-  
մութիւնն այդ վաղուց գիտենալով, գրեցինք  
մեր աներձագ վեհ. սուլթան Մահմուտ ա-  
ռաջին կայսեր. այսօր կամ վաղը կըգայ  
սայիւն (սուրհանդակ), կըբերէ ֆէրմէն, ձեզ  
և ձեզ կաշառողին կախել կըտամ՝ վեհափառի  
հրամանով, պատահած հացադործի ձեռք, ձեր  
որդիները և ձեր կիները ներկայութեամբ:



—Բաւական է,— յօնքը պռստեց Մուստաֆա, ապա դատուն դառնալով,— և ես միենոյն բանն եմ ասում ձեր սրբութեան, համամիտ եմ բարեկամիս ասածներին: Հաւատացէ՛ք մեր խօսքին, մենք երկուքս էլ փեսայ ենք. կայսեր, մեր խօսքը խօսք է:

Հայթա—Ֆիրատի արիւնն եռաց, նա յուզեցաւ իր բարեկամների խօսքերից, արեւնակալած աչքերով՝

—Ղատի էֆէնտի,—ասաց կրքով,—եթէ շառթը դրժեմ...

—Ձեր ամուսնութիւնը կըքակւի:

—Ուրեմն՝ ժամավաճառ մի լինիք, գնացէ՛ք վսեմաշուք Զիային ասացէ՛ք, աւետեցէ՛ք՝ Ֆիրատը դրժեց շառթին, թող այսօր սրտովս ուրախանայ, պատրաստւի վաղը կախուելու:

—Ստո՛ւմ է,—ձեռով Ֆիրատի բերանը գոցելով ասաց Մուստաֆա,—իրաւ է, մենք խմում էինք, բայց՝ սա ոչ... ձեր սրբութեան դէմ բարկացած լինելով՝ հակառակն է խօսում:

—Դուք էք ասում,—չըժուժեց զատին իր պատիւը շօշափւած տեսնելով և ոտքի ելնելով,—մենք լաւ գիտենք նրա արեւնալը, վկաներ կան, և ինքն էլ, այս պատկառելի

անձերի մօտ խոստովանեցաւ: Ուրեմն՝ էլ հարկ չըկայ գաղելու, արդէն յայտնւած, հռչակւած է եղելութիւնը...

—Կարճ կապիր,—գոռաց Հայթան ձեռը սրին տանելով,—ես արդէն ասացի թէ՛ դըրժել եմ ուխտիս... դնա՛, անելիքդ՝ արա՛:

—Դու ինձ անարգում ես...

—Եթէ խօսքդ երկարես՝ կըսպանեմ, ծն, դուրս ել, քեզ ո՛վ հրաւիրեց այստեղ, դու ի՞նչ գործ ունէիր... դուրս ել, վաղը կըխօսեմ քեզ և քո Զիայի հետ: Ձե՛ս իմանում, հերիք ծամածռես արդէն մի կողմ հակւած մեծ բերանդ, և դուք՝ խո՛ւլ էք, իւլէմէներ, հեռացէ՛ք այստեղից եթէ ոչ...

Ղատին ակնթարթի մէջ ինքզինք փողոցում գտաւ:

Ֆիրատ իր ընկերներով խմեց մինչև կէսգիշեր, ապա թիկնապահների ուղեկցութեամբ տուն գնաց: Որչափ զարմացաւ նա, —այդ չէր սախատեսած,—երբ ընդունարանից կանանոց տանող դուռն ամրապէս փակւած գտաւ:

—Է՛յ, ո՛վ կայ այդտեղ, դուռը բացէ՛ք, —գոռաց Հայթան:



— Նեմէհրէ՛մ \*), պատասխանեց ներսից լալահառաչ մի կանացի ձայն:

— Էլիֆ դ՞ու ես, դուռը բաց արա, աղանեակս:

— Նեմէհրէ՛մ, Ֆիրատ ջան, դու հիմա օտար ես ինձ համար: Դուռն ամրացած է կրկին աղիւերով, դու չես կարող և՛ բռնութեամբ բացանել... անբախտ սիրելիս, դու իմ տան մէջ հիւր ես այս գիշեր, անկողինդ իմ ձեռք պատրաստած եմ ընդունարանում՝ առիւծենուն վրայ: Չեմ մոռացած ընթրիք և մաստիքա դնել այնտեղ, գնա, ննջիր հանգիստ...

Իսկոյն սթափւեցաւ Ֆիրատ, մագերը քստմնեցան, սառնութիւնը գանգից մինչև ոտները սահեց, դողաց բոլոր մարմնով: Գիտակցաբար ըմբռնեց թէ ինչո՞ւմ է հարցը, ձեռով զարկեց իր ճակատին և գլորւեցաւ դրան առաջ հեծեծալով, զղջալով իր անմիտ անխոհեմութեան վրայ: Աչքին առաջ պատկերացաւ զգուշի ապագան, թէ և ահիւ ուղղում

\*) Նշանակում է օտար աչքերից ծածկւած, տղամարդն իրաւունք չունի օտար կնոջ երես տեսնելու... նա (կինը) ծածկւում է քողով և խօսում անհրաժեշտ դէպքում:

էր իր մտքից վանել, հեռացնել: Չըկարողացաւ ինքզինք զսպել: Լացեց:

— Դու լաց ես լինում, սիրական, — լսեցաւ կարեկից ձայնը...

— Էլիֆ, մեռնում եմ... առանց քեզ չեմ ննջում...

— Ինձ կրօնը խլեց քո գրկից, Ֆիրատ ջան, դու յաւէտ տեսնելու չես:

— Էլիֆ, եկ, այստեղ եկ, վերջին անգամ գրկեմ քեզ... վերջին համբոյրը տամ քեզ, յետոյ սուրը ցցեմ իմ դաւաճան կրծքիս մէջ, ո՛հ... Էլիֆ անգուլթ ես դու, անգուլթ և անօրէն...

— Ֆիրատ... չեմ կարող դալ, չեմ կարող համբուրել քեզ: Մեզ անջրպետողը պատ չէ, երկաթէ դուռ չէ, այլ դուրանը, ես այսուհետեւ ոչ ոքի կինը չեմ և լինելու էլ չեմ... ես Հայթա—Ֆիրատ փաշայի այրին եմ, սիրելիս. այրի... այո՛, դեռ օրեր չըտեսած պիտի իջնեմ գերեզման... Ֆիրատ, չըկարծես թէ ես հիւլ-ուլա յանձն կառնեմ, կըմեռնիմ... Քեզ համար չէ ապրում քո նազելի Էլիֆը, նա մեռնում է և չէ տեսնում ինքզինքն օտար տղամարդի գրկին մէջ... նա կըմեռնի իր սիրոյ յիշատակներով յափշտակւած:



— Էլիֆ, մեղք եմ ես, բայց ասում եմ...  
այրեցիր ինձ...

— Ես մեղք չեմ, անօրէն, որ դու դա-  
ւաճանեցիր սիրոյդ, ինչո՞ւ շառի աբիր և  
ինչո՞ւ արբեցար: Եթէ շառի պիտի անէիր,  
արիր, էլ չ'արբենայիր, երբ արբեցար՝ նշա-  
նակում է ինձ չես սիրում, ինձ ասում ես,  
ուզում ես ուրիշն առնել... Ես՝ նորից քեզ  
սիրելով խօսում եմ հետդ, հիւրընկալում եմ  
քեզ իմ տան ընդունարանում, պառկիր  
այդտեղ, առաւօտեան Ալլահը քեզ հետ, մեր  
մէջ վերջացած է ամեն ինչ...

— Ի՞նչպէս թէ վերջացած է...

— Ես չեմ խայտառակւիլ:

— Ես էլ չեմ ցանկանալ:

— Երբ չենք ցանկանում խայտառակու-  
թիւն, վերջացած է: Դուրանի օրէնքով պէտք  
է ես ամուսնանամ ուրիշի հետ, մնամ գոնէ  
մի օր. դու կծկւած իմ մահճակալի տակ  
ունկնդրես խայտառակ տրփանաց բերկրան-  
քը: Խայտառակւելուց յետոյ, դրամ տալով  
լկողին՝ իբր նւէր խնդրես քո կիներ, այն էլ  
եթէ բարեհաճի թողնելու, եթէ ոչ պիտի  
պահէ ըստ օրէնի: Սա է միակ գարշելի մի-  
ջոցը մեր կրկին ամուսնութեան, ուրիշ մի-  
ջոց չըկայ, ամուսնալուծերի մէջ բացւում

է վիհ, նրա յատակն է դուրանն իր բովան-  
դակութիւններով: Արդ՝ սիրելիս, ես յանձն  
չեմ առնում այդ աստիճան զծուծ խայտա-  
ռակութիւն, կըգոհեմ կեանքս, բայց՝ ոչ պա-  
տիւս: Ո՛հ, եթէ. ս. Մարգարէն մի վայրկեան  
կնոջ դերն երևակայէր, գուցէ այդ օրէնքը  
չըգնէր, չէ՞ որ նա, կիներ շփոթում է անա-  
սունների հետ ասելով՝ կիցն իսլամին գոր-  
ծիքն է, իսլամ չէ կիներ... Ի՞նչ եմ երկա-  
րում, դու այս երեկոյ մի պատահական հիւր  
ես: Ննջիր վերջին անգամ՝ ննջիր իմ պատ-  
րաստած անկողնում, առաւօտուն Ալլահը  
հետդ...

— Ի՞նչ ես ասում, Էլիֆ:

— Բոլորն ասացի:

— Ես կըմեռնեմ քեզ հետ...

— Երբ այդպէս է, եթէ քաջ ես, սպա-  
նիր Զիային, որ դաւով քեզ շառի անել  
ուեց, որ այս երեկոյ իսկ յանդգնեցաւ ինձ  
մօտ կնամարդիկ ուղարկելով ուխտադր-  
ժութիւնդ ծանուցանել և իմ ձեռը խնդրել...  
Զիան վերջացնելուց յետոյ, կըգաս՝ կըթա-  
ղես քո պաշտած Էլիֆի մարմինը:

— Էլիֆ, աղերսում եմ, դուռը բաց,  
միասին ապրենք, միասին մեռնենք, ես չեմ  
կարող առանց քեզ մնալ:



— Միթէ ես կապրեմ՝ իմ ողբացեալ սէգ առիւծ, միթէ ես պիտի ննջեմ... Եւ ոչ, Ֆիրատ, իմ ձեռք մեր դազաղը պիտի յարդարեմ, պատանքներ ու ճերմակեղէն կարեմ, եթէ քո սէրը ճշմարիտ է, առաւօտուն Զիան կըսպանես՝ կըգաս տուն: Սպասուհին քեզ ցոյց կըտայ ապարանքին ներքնատան դաղտնի մուտքը, դու այնտեղ յաւիտենից քնով ինձ պառկած կըտեսնես: Կանես գլխիս վերեւի փոքրիկ սրահը, կըթափես նրա սէջ պարունակած կարմիր հեղուկը միւս շին մէջ, որ մաստիքայով լիքն է լինելու, կըխմես, կըհագնես մաքուր ճերմակեղէն ու կը մտնես իմ ծոցը...

Ֆիրատ ոչ մի բառ չէր գտնում պատասխանելու, ծնրաղրած լաց էր լինում, որի հեծեծանքին խառնուում էր քնքուշ էլիֆի տխրանուշ ողբը...

Թող սարիկը ոսկեձեղուն պալատիս մէջ բոյն դնէ,  
Իր գեղեցիկ ձագուկները սիրատուրփիկ մեծացնէ.

Թող պալատիս ամուր պարիսպը ընկնին երկիր,

կործանին,

Կոտրած սիւներ, խարխուլ պատեր մեզ մահարձան

Թող լինին.

Թող զան սիրող ամուսիններ աւերակներ դիտելու,

Կամ հովաքուն պարտիզիս մէջ իրանց սէրը երգելու:

Թող լուսինը արծաթափայլ շրջի կապոյտ երկնքում,

Թող սոխակը ձայն արձակէ քնած վարդի թիւերում...



Ն ո Ր Բ Պ Ե Շ Խ

Մի սիրուն, անամպ, զովագին և ախորժելի առաւօտ էր:

— Ե՛-Օ՛-Ղ՛, Ֆէր—մէն,— վանկերն երկարելով գոռում էր մի խափշիկ ձիաւոր՝ արշաւասոյր քշելով դէպի սէրայ: Ահաբեկ խուժանը բաց էր անում ուղի, լճանում կըրպակներ շառաւ, կամ խոռոչացած անկիւններում: Ահա քիչ յետոյ երևում է և՛ մի ուրիշը, նոյնպէս գոռում է խլացուցիչ ձայնով.

— Ե՛-Օ՛-Ղ՛, Ֆէր—մէն:

Նրա ետևից քսան ու հնգի չափ այրուձի ենիչերիններ համակ զինավառ, ձիերի գլուխները թողած սլանում են առաջ: Կենդանիների ոտնատրոփը, փոշին, պայտերից հոսող կայծերի վտակները միախառնւած՝ մի մրրկալից ամպիկ էին ձևանում, նայողի աչքերը խողովում երկիւղալի վսեմութեամբ:

Նրանց մէջ աչքի էր ընկնում մի հպարտ երիչերու հազարապետ, ճակատին կանաչ բօղով դեղին մագաղաթի քառածալ թերթը կապած, որի բաց մնացած մասում երևում էր կարմիր, ոսկեգօծ մահիկն և օսմանեան թուղրան (դրոշմ):



— Սուլթանից ֆէրմէն եկաւ, — շնչաց  
ամբոխը:

— Տեսնենք այսօր կամ վաղն՝ ո՞ր փա-  
շայի զլուխը կերթայ... Սային նոյն յաղթա-  
կան գնացքով, գոռալով մտաւ սարայ: Իս-  
կոյն պաշտօնականներ, փաշաներ, պէյեր,  
աղաներ խոնւեցան սէրայի բակը. նոյնպէս  
Զիան, երեսի գոյնը նետած, եկաւ, կանգ-  
նեցաւ փաշաների շարքում: Թղթաբեր ենի-  
չերին խորին յարգանք մօտեցաւ Քէօփրիւ-  
լու օղլի Ասպուլլահ փաշային, ծնրադրեց,  
քղանցն համբուրելով՝ ասաց.

— Աշխարհի տէր, թագաւորներից յաղ-  
թական, վեհափառ սուլթան Մահմուտը՝ ձեր  
վսեմութեան շնորհում է սէրասֆէրի աստի-  
ճան և կարգում լիազօր բղեշխ Անաստօլի,  
ձեր իմաստուն կարգադրութեան յանձնում  
45 մեծ. հարիւրաւոր մանր քաղաքներ,  
աւաններ, հազարաւոր գիւղեր, որոց իշխող  
կուսականներն ու իշխանները պիտի ակնա-  
ծութեամբ երկրպագեն ձեզ...

Ասպուլլահ փաշա գոգգողալով քակեց ֆէր-  
մէնն երիչերու ճակատից, երկիւղով համբու-  
րեց թուղթը, դրեց ճակատին: Մինչ նրա թիկ-  
նապահներն՝ ուրախութեամբ արբշխու, քսակ-  
ներով հարստացնում էին թղթաբեր սպային:

— Քառասուն օր է, — պատմում էր ե-  
նիչերին. — բնաւ չեմ հանգստացած, ֆէր-  
մէնը զլխիս ննջում էի անկիւնում կուչ ե-  
կած, վերջապէս. ազատեցայ իմ նւիրական  
բեռից:

— Քաջին խէլէթ տւէք, — հրամայեց Ասպ-  
տուլլահ իր թիկնապահներին դառնալով:

Զիա փաշա կապարի գոյն առած՝ ար-  
ձանացաւ: Բազմութիւնն հետզհետէ լցե-  
ցաւ սարայի բակը, որ մի ընդարձակ հրա-  
պարակ էր, խորին հետաքրքրութեամբ սպա-  
սում էր Ֆէրմէնի կարգացւելուն: Ասպուլ-  
լահ սէրասքէր բարձրացաւ վեր, մտաւ բը-  
ղեշխի սենեակն՝ ասելով իր զինակիրներին.

— Աչքից չըհեռացնէք Զիա փաշան և  
մեծ-դատին:

Ակնթարթի մէջ այդ երկու մեծ ան-  
ձինքն էլ ձերբակալւեցան քաղաքավարի կեր-  
պով: Լուր ուղարկւեցաւ ազգերի հոգեւորա-  
կաններին: Ահա թուրք իթամներ, յոյն եպիս-  
կոպոսն իր կղերականներով, հայ արքեպիս-  
կոպոսն իր վարդապետներով, քահանանե-  
րով, հրէա բաբունին իր խախամներով, իւ-  
րաքանչիւրն իրանց եկեղեցական սպասով,  
գրաւեցին ընդարձակ հրապարակի զանա-  
զան կէտերը: Կատարւեցաւ բարեմաղթու-



թիւն, ապա իւրաքանչիւր կրօնի ներկայացուցիչ հրաւիրւեցաւ նոր բզեշխի ժօտ կանգնելու: Մի գրավարժ ծեր իւլէմ, յարգանօք համբուրելով ստացաւ նոր բզեշխի ձեռից ֆէրմէնը, կարգաց կոկորդային և բարձր ձայնով:

Սուլթանն Ապտուլլահին կարգած էր սէրանքէր և բզեշխ Անատօլի բոլոր վիլայէթներին, նրան արւած էր անսահման կայսերակերպ դառելու իրաւունք:

Ֆէրմէնի ընթերցումից յետոյ, բոլոր մեծամեծները շնորհաւորութեան կրփութային, սովորական յարգանքն ընդունելով դուրս էին գնում յաջորդներին տեղի տալու: Հոսկ ուրեմն ներկայացաւ նախկին բզեշխ Զիա-փաշա, թէև ակամայ, սակայն ստիպւած գոհ ու զւարթ երեւելու, մի դառն ժպիտ ոսկրոտ երեսին՝ շնորհաւորեց Ապտուլլահ Գեօփրիլու օղլու իշխանութիւնը, որից ինքը տարաբախտ ասուպի պէս քիչ փայլելով գլորւած էր:

Վերջապէս՝ սովորական յարգանքից յետոյ պահանջեց հաշիւ. Զիա պարտաւորւած ներկայացուց և ամեն գործ յանձնեց նրան:

— Զիա, — ասաց սէրապէրը ծանր կերպով, — հիմա հերթն իմա է շառթն իրա-

գործելու և ես՝ ըստ օրէնքի պարտաւոր եմ...

— Չեմ ըմբռնում ձեր վսեմութեան միտքը:

— Շատ վեկին է և որոշ, դու՝ դաւադրութեամբ, ծուռ բերան դառին կաշառելով, շառթ անել տւիր վսեմ. Հայթա—Փիրատ փաշային և անաւօթաբար երէկ երեկոյեան կիներ ուղարկելով էլիֆի ձեռք խընդրեցիր: Ստոյգ չէ, կարող ես ուրանալ...

Զիա լուռ էր, չէր համարձակուի դրական կամ ժխտական պատասխան տալու, երկնչում էր վրիժառու մակեդոնացին գրուգուելուց:

— Լուին ստուգել է, Զիա, ես առանց կաշառի շառթ եմ արել քեզ և քո դատուն այսօր կախել տալու, շառթը չըյարգեմ...

— Անպատճառ պիտի յարգես, — ասաց Ֆիրատ դոնից ներս մտնելով, — պէտք է կատարել շառթը, մենք արդէն կամարած ենք, մնում ես դու, իմա Ապտուլլահ:

Գունատած էր Հայթայի գեղանի դէմքը, կապոյտ ծիրով շրջապատւած աչերի աղբիւրակներն և ուռած կոպերը, պարզ նշանակ նրա չըքնելուն, արտասուելով գիշերն ի լոյս տառապելուն: Նրա գէմքի վրայ չըկար ուրախութեան նշոյլ, տրամութեամբ պաշարւած էր նա:



Հայթան շնորհաւորեց իր կուսակցին յաղթանակը, չիպուզն առնելով անդաւ մի անկիւն: Զիա կանգնած էր դողահար: Ապտուլլահ հրամայեց ֆէրաէ—չաւուշին.

— Կանչեցէք մեծ-դատուն:

Շատ չանցաւ, գուշիկ բերան սրբութիւնն էլ ներս մտաւ:

— Ղատի էֆէնտի, — հարցուց բղբշխը, շառօն յարդել պէտք է:

— Անշնշտ, — մրմռաց նա Հայթային նայելով, կարծելով թէ նրա գործին համար է խօսքը, — դուրանի խօսքերը պիտի կատարւին, զանցառուն մահմէդական չէ...

— Շատ լաւ, շառօն եմ արել քեզ կախել տալու, որպէս երէկ ասացի, բայց այս բոպէիս խողի պէս մորթել կըտամ: Եթէ ուղիղը չըխօսես:

— Ի՞նչ չըխօսիմ, — կմկմաց նա, ծուռ բերանն ահիւ մի կողմ շրջելով:

— Ո՞վ թելադրեց քեզ վսեմ. Ֆիրատ փաշային գինով ժամանակ շառօն անել տալ, նրա երջանկութիւնը խաւարել:

Ղատին ահաբեկ Զիային նայեց. կարգալով նոր բղբշխի դէմքին վրայ հաստատութիւն, մրմռաց.

— Ինձ Զիան թելադրեց, մի քսակ էլ

ոսկի տւեց, իբրեւ թէ՛ էլիֆ հանրմն էր ուղարկած...

— Էլիֆ հանրմն էր ուղարկել, — հարցուց Ֆիրատ յօնքը պոստելով.

— Ինձ այդպէս ասաց...

— Ա՛հ, դաւաճան...

— Ստոյգ է, — հարցուց Ապտուլլահ Զիայից, — Էլիֆ հանրմ քեզ փող ուղարկած էր...

— Ո՛չ, — մրմռաց նա ողբագին, ես մեղաւոր եմ... ձեր բարձրութեան օճաղն եմ ընկել (ծայրագոյն աղերս). — Կերկեր ձայնով, լացախառն, ծնրադրած աղերսեց Զիա, — ես մեղաւոր եմ... դաւաճանեցի, վատութիւն արի...

— Գրեցէք դրա խոստովանութիւնը, — հրամայեց խոտասիրտ բղբշխը դատուն դառնալով, — աւելացուցէք և ձեր ցուցմունքն ամենայն հաւատարմութեամբ, կնքեցէք, յետոյ կըլտէք մեր առաջին արդար վճիռը:

Ղատին գրեց: Նախ՝ ամբաստանեալն, յետոյ ինքը կնքեցին:

— Ղաւազներ, — հրամայեց Ապտուլլահ գինալիւրներին, — տարէք սրանց մահապարտները բանտը...

Զիան ու Ղատին ի միասին տարւեցան, խսկոյն ևեթ նրանց ինչն և ստացւածքն յարքունիս գրաւեցան:



— Առաջին դատաստանս է այս, Ֆիրատ ջան, հաւանեցա՞ր:

— Ես այդ արդէն պիտի ինդրէի, սիրելիս...

— Դու գիշերն անքնն ես եղել...

— Այո, էլիֆ նեմէհրէմ պահեց...

— Ա՛ն կըօնամոլութիւն...

— Ինչ հաշոււմ ես հաշւիր, Ապտուլլահ, իմ ընտանեկան երջանկութիւնս մեռած է, գուցէ վաղն էլ ինձ չըտեսնես... այսօր կըյանձնեմ քեզ իմ կտակը...

— Յիմար յիմար ի՛նչ ես խօսում:

— Յիմարաբար չեմ խօսում՝ ընկեր, էլիֆ յանձն չի առնիլ խայտառակել, ես էլ չեմ կամենում. միթէ ինձ պէս խրոխտ, անւանի զինւորականը կընւաստանայ իր սիրական կինը մի սիլնքորի հետ մեկուսացնելու, նրա մահճին տակ կուճ գալու, գրկախառնութիւն, ամեն զագիր խայտառակութիւն լսելու, աչքով տեսնելու չափ իր պատւին շօշափումը...

Մի ժամից աւելի համոզել ջանաց սէրապէրը Ֆիրատին, անօգուտ եղաւ, հաստատ որոշած էր նա ամեն բան: Յետոյ Ապտուլլահ ուզեց լսել թէ ո՞ւր, ե՞րբ, ի՛նչ միջոցաւ վերջ պիտի տայ բարեկամն իր կեանքին:

Անհնարին եղաւ և այդ մասին իմանալ:

— Բայց՝ նախքան հրաժեշտ տալս, Ապտուլլահ, — ասաց Ֆիրատ, — ուզում եմ քեզ յանձնարարել իմ մի բարեկամս, որ սպասում է ներկայանալու կարգին. դա հայոց արքեպիսկոպոսն է, մի շատ ազնիւ, լուրջ և բանազէտ ծերունի...

— Քո բարեկամն իմ բարեկամն է՝ Ֆիրատ ջան, — ծառաներին ձայնելով, — ներս հրաւիրեցէք հայոց գերապատիւ առաջնորդին, թող չըսպասէ նորին սրբութիւնը...

Իսկոյն ներս մտաւ բարձրահասակ ծերունին սև վեղարը մինչև յօնքը վար քաշած, ակնածութեամբ մօտեցաւ բզեշխի քղանցին քէմէլլէն (երկրպագել) անելու:

Ապտուլլահ ընդոտ ոտքի ելաւ, բռնեց նրա ձեռից, իր կշտին նստեցուց, տխուր ժպիտը դէմքին՝ ասաց.

— Բարի է ձեր սրբութեան գալուստը, հայր, ես ինձ չեմ ների, որ դուք երկրպագէք քղանցիս, Ալլահն երկնքում կըբարկանայ, եթէ ձեզ պէս ծերունի բախներ (վարդապետ) երկրպագեն մեզ...

— Ասուած օրհնէ ձեր վսեմութեան արեւը, — քոջնտի Ֆիրատին զննելով՝ թոթովեց



ծերունին, — շնորհակալ եմ ձեր ընծայած բարձր համակրութեան համար...

— Շնորհակալ է մեր կայսրութիւնը ձեր չարքաշ, բարի ազգից։ Իսկ ես ի մասնաւորի պարտք ունիմ այսուհետեւ ձեզ և ձեր ազգը հովանաւորելու ըստ ցանկութեան և անդառնալի յանձնարարութեան իմ վսեմ. բարեկամ Ֆիրատ փաշայի, խնամել ձեզ նրա հայեացքով։

Սրբազանը բերկրութեամբ նայեց իր սանին, զսպւած ժպիտով և գոհունակութեամբ պատասխանեց.

— Աստուածային հովանին ծածկէ երկուքին յաւէտ։

Բղեշխը հրամայեց խիլայէդ կամ խէլէք (վերարկու) տալ հայոց ըայսին։ Սիմէօն սրբազան կանաչ վերարկուով, որ սիայն շէյխերին, դատիներին է յատուկ, կարմիր կօշիկներով, սև մետաքսեղէն, երկու վերշոկ լայնութեամբ ոսկէթել շղարշ պատատած վեղարին շուրջ, ի մեծ գոհունակութիւն իր տառապած, չարչարւած գաւաղներին, օրհնելով իր Զօրայի արևը, վերադարձաւ առաջնորդարան։

Սրբազանն արդէն առանձնանալ էր ուզում, երբ ծանուցւեցաւ Ֆիրատ փաշայի

գալուստը։ Այս անգամ առաջնորդը չըղիմաւորեց նրան, կարծես մի հասարակ մարդ լինէր եկողը, միայն իր փոխանորդին հրամայեց սովորական շուքով ընդունել նրան։ Սրբազանի այս արարքը վերագրում էին այն խոր բարեկամութեան՝ որ փաշան ու նա անուցանում էին իրանց մէջ, վասնորոյ այդ մեծ շնորհ էին համարում։ Մանաւանդ երբ առաջնորդից լսեցին նոր բղեշխի խօսքերը, խէլէթ ընծայելը, խիստ մեծ վարկ ստացաւ Ֆիրատ հայոց մէջ, ժողովրդի սիրելին դարձաւ նա, այս շշուէն անցաւ նրա շարքերով՝ ինչպէս քամին անցնում է անտառի ծառերն օրօրելով։ Շրջան առան պատմութիւններ Ֆիրատի մասին։

— Գիտե՞ս, սանահայր այդ փաշան հայի որդի է։

— Կնքահայր, ասում են հաղորդւում է... — Մեր բարերարն է, աղքատներին այս ձմեռ, սարաֆ Յակոբ աղայի միջոցով, 40,000 դուրուշ նւիրողն է այդ ազնիւ Հայթան։ — Այսպիսի խօսքեր շրջելով հայոց բոլոր խաւերում, ուրախութեամբ էին համակում նահատակ ազգի հոգին։

Սիմէօն սրբազան տեղից իսկ չըշարժւեցաւ Հայթային ներս մտած ժամանակ.



ընդհակառակը Ֆիրատ ակնածութեամբ համբուրեց նրա աջը, որին պատասխանեց բաբունին աննենդ ժպիտով.

— Աստուած պահապան, արժանի որդեակ իմ, շատ դո՛ւ եմ...

— Օրհնեցէ՛ք՝ սրբազան, — պատասխանեց նա հայերէն լեզուով, գուցէ ձեր ս. օրհնութեամբ քաւուում են յանցանքս...

— Տիրոջ օրհնութիւնն անպակաս քո գլխից, Զօրա ջան:

Պէտք է յիշել, որ նրանք միայն էին ինչպէս միշտ, նոյնպէս այսօր, սուրճ և այլն ընդունելուց յետոյ.

— Հայր իմ, — ասաց Ֆիրատ, — այսօր ձեր սրբազնութեան կը յանձնեն երեք արկղ հարստութիւն, մեծագին զարդեր. ոսկէթել աղօթքի գորգեր (սետճիտէ), որ կարող են սուրբ եկեղեցւոյ սեղանները զարդարել: Նոյնպէս 30,000 ոսկի, որ մնում են Յակոբ աղայի մօտ. ահաւասիկ նրա մուրհակն և իմ կողմից գրւած ազդ, որ անյապաղ ձեզ վճարւի:

Հայթիան ծոցից հանեց մի կնքւած ծրար, ուսուցչին տալով ասաց.

— Սակայն՝ խնդրում եմ այսօր չըբանալ այս ծրարը, վաղն աղատ էք կարդալ և ըստ իմ ցանկութեան կարգադրել:

— Առատաձեռն որդեակ, կարօտ ազգիդ անանկներն այսուհետեւ հաց պիտի ունենան:

— Թող ինձ օրհնեն, — հառաչելով պատասխանեց Ֆիրատ, — չեմ կարող խնդիրս վերակրկնել, — մընջեց նա լացաւարած. — չեմ կարող յուսալ՝ որ ինձ արժանացնէք ս. հաղորդութեան իբրեւ օրինաւոր աւանդապահ նահատակ եկեղեցւոյ, չէք շեղուում նրա կանոններից... այո՛, այո, հայր իմ, — «մի արկանէք զմարդարիտս ձեր առաջի խոզանց, զի մի առոտն կոխեսցին»... ես խող եմ, ես անարժան եմ, ես չեմ կարող հարստահարւած եղբայրներիս հետ մասնաւորել սուրբ Մարմնով և Արիւնով Փրկչին, քանի որ դաւաճանած եմ կրօնիս... պատած եմ գլուխս իսլամական ապարօշով, երկչոտութեամբ ծածկած եմ իսկութիւնս...

— Զօրա, — պատասխանեց խղճամիտ օրինապահն ոչ նւազ յուզումով, — ապաշխարանքդ բաւ կը համարէի, եթէ գնայիր օտար երկիր, ապրէիր իբրեւ հայ-քրիստոնեայ: Վարժապետդ կրներէ, ձեռնասուճս, բայց անողոր է եպիսկոպոսն, — «որ ուրացի զիս առաջի մարդկան, ուրայց և ես գնմանէ առաջի հրեշտակաց հօրն իմոյ, որ յերկինս է»: Դու, Զօրա, պարտաւոր ես հրապարա-



կաւ խոստովանել քո դարձը, ոչ թէ ծածուկ... այն, սիրտս ճմլւում է, յուզւում եմ, քեզ համար կըսեմ: Եթէ լսես դու ինձ, կըզնաս ս. Էջմիածին, ազգիս հոգևոր տիրոջ մօտ, կը տանես և իմ նամակը, սըրբազնակատար Հայրապետը կըկարգադրէ և կեդեցոյ օրինաց հիման վրայ:

—Անհնարին է այլևս ս. Էջմիածին երթալ, կեանքիս օրերը հաշւած են արդէն, վաղն էլ ինձ տեսնելու չէք...

Ֆիրատ մանրամասն պատմեց բոլոր եղելութիւնները:

Այլապէսաւ գորովագութ ուսուցիչն իր թշուառ աշակերտի վրայ, նրա ձեռք բռնելով, արտասուելով. — Զօրն, — ասաց, — Զօրն, հեռացիր այդ ցնորական, դիւային որոշմունքից, ոչ, որդեակ իմ, մի մատնիր հոգիդ գեհենին, գուցէ իսլամական քօղի տակ ապրելով, ապաշխարելովդ Աստուծոյ քեզ ներէ, բայց՝ անձնասպանութիւն...

— Հաստատ որոշած է...

— Կորած էիր, սիրելիս, ինչո՞ւ կորած չըմնացիր, ինչո՞ւ աչքիս երևացիր և ինչո՞ւ կըհեռանաս յաւէտ... սիթէ քիչ էին ցաւերս... քո ցաւն էլ պիտի քաշեմ... Աղերսում եմ, զաւակս, հեռացիր այդ հոգեկո-

րուստ խորհրդից, խղճա՛ ձերութեանս, բոսուգը խնայիր տալ քեզ ջերմ սիրող ծերունի ուսուցչիդ:

— Ամեն բան վերջացած է, հայր իմ, ես մեռնում եմ լկտի օրէնքի, մահմէդական զուրանի սրով...

Շատ թախանձեց հոգևոր ծնողն իր ձեռնասունին, լացեց, պաղատեց՝ անհնար եղաւ: Նոյնպէս Ֆիրատ լաց էր լինում: Ի վերջոյ համբուրելով սրբազանի ձեռքը, դուրս ելաւ:

— Ուստա Սիմօն, — ասում էր խոսորդրցի ուստա Կարօն իր արհեստակցին ժպտալով, — հալա հաց կեփիս...

— Էն ի՞նչ տանինք, գոյժեյնիս ի՞նչ...

— Ծօ ախպար, իզանես (այս կողմերը) մայդ (մարդ) մնաց ոնչ, քուլլի թաւրիդ դուռ վազած ունենան, մինձ-սրչույը (պոչուոր, Զիան), մեմալ շնքէյան մինձ-գունտը (զատին) տի կախեն: Բեհ՝ ախպար, գործիդ թո՛ղ, էկու էյթանք էնչաղ սէյր անինք...

Արդարև բազմութիւնը դիմում էր թաւրիդի դուռ, լճանում էր մեծ հրապարակում: Ննիչերի գունդը շրջապատած էր մէյդանը, տապարաւոր հայթաները թեկերը վեր սթթած շրջում էին հպարտ՝ կերպով, որոց մէջ տեղ



ցցւած էր կախաղանը՝ ժողովրդից բարձր բռնած իր մահահոտ ճակատը։ Նրա մօտ կանգնած էր մի հացագործ խոտորջրցի, ձեռները ծոցը դրած, ծուղակն ընկած վայրենի բաղի պէս քովնտի շուրջը նայելով։ Խղճալին ակամայ պիտի կատարէր դահճի ահուկի պաշտօնը, որովհետեւ հացագործ գոլով, մարդու և շան միշտ հաց տալով, ըստ շէրիէթի տրամադրութեան, պիտի արդարանար, եթէ խեղդւողներն յանցաւոր չըլինէին...

Քիչ յետոյ շուկայի ծայրից դուրս եկաւ մի այլանդակ թափոր։ Մի քանի շարք դաւուլ, գոռնա զանազան եղանակներ սուլելով, մի տեսակ դարձելի նւագով դղրդում էին ողջ քաղաքը, նրանց ետեւից տապարակիր հայթաներ, սուսերամերկ ենիչերիններ՝ մահապարտներին շրջապատած, կառափնատեղին էին բերում։ Կապւած էին Զիան և ծուռ բերան սրբութիւնն իրար թե թևի, միշտ գետնին նայելով, գոռնատած, կթոտ քայլերով՝ ակամայ հետևելով դօրքին։

— Դաւաճանութիւն գործողի պատիժն այս է, կանչում էր ձայնեղ մունետիկը, ով որ կրօնի, շառթի անուանով խարդախութիւն գործէ, խոտորջրցի գետուրի ձեռք կը կախուի կամ ստանդարի դանակով խոզի նման կը մորթուի...

Երբ մահապարտները պատժավայրն հասան, ձիով եկաւ Ֆիրատ փաշա։ Նրա գոռնաթափ դէմքի վրայ միայն աչքերը վառուում էին անյագ վրիժառութեան տենչով։ Զիուց վար թռաւ, Զիայի օձիքից քարշ տւեց դէպի կախաղանը՝

— Ես էլ, Զիան, — ասելով, — շառթ եմ արել կրկին քեզ կախել տալու, — դառնալով հացագործ կաթողիկին, որ երկիւղից ձեռներն էր տրորում, — էլ ի՞նչ ես սպասում, վարպետ, կախի՞ր նախ և առաջ այս շունը։

— Վոյման անիմ, Յիսուս Մայիամ, — մըթմըթաց երկչոտ հացագործը՝ յատուկ իր լեզուով, — թէ որ ասանկ էլ թա՛ն, հըրը մինք շատ մարդ կոյսնցնունք...

Հայթա-Ֆիրատ չըկարողացաւ սի դառն ծիծաղ զսպել։

— Կախի՛ր, վարպետ, յետոյ կը կարդամ քո ողբը։

Խոտորջրցին դողդողալով սկսեց մօտենալ Զիային, Ֆիրատ հրելով հանեց նրան աթոռին, յետոյ՝ սապոնած թոկն անցուց վիզը, մի խոր հառաչով նայեց մահապարտի երեսին.

— Հիմա եղա՛ւ, — հարցուց և խոտորջրցուն հրամայեց, — վեր առ աթոռը, թող վերջանայ սրա կեանքը։



Իսկոյն գլորեցաւ աթոռը, Չիա ճօճեց  
օդի մէջ... Յնցւեցաւ նախ սւժգին, ապա  
տարուբերւեցաւ ինքնին հողմավար տերեւի  
պէս սարսուելով: Իսկոյն կապարի գոյն ստա-  
ցաւ նիհար դէմքը, լեցւեցան, անյայտացան  
խորշոմներն ու խոր ակօսները. աչքերը, լե-  
զուն դուրս ընկան, սև արիւնը ժայթքեց  
ոնգերից, աչաց աղբերակներից: Նոյնպէս և  
կախւեցաւ դատին աչքով իր դաւակցին  
մահը տեսնելուց յետոյ:

Իչ-դալէից (միջնաբերդ) արձակւեցաւ  
թնդանօթը, ծանուցանելու երկրին անա-  
ռակների մահը:

Հայթա—Ֆիրատ ձին աշտանակեց ու  
սլացաւ դէպի իր ապարանքը: Ընդունարան  
մտած ժամանակ, կանանոց տանող դրան  
ետեից լսեցաւ էլիֆի տխրագին ձանր:

— Ո՞վ է...

— Ես եմ...

— Այդ դ՞ու ես՝ Ֆիրատ ջան...

— Այո՛, նազելիս, ես եմ: Նրանք վեր-  
ջացան: Հերթը մերն է:

— Այդտեղ, սեղանի վրայ, դրած են  
նախաճաշ, արագ, և այլն, կեր. խմիր, յետոյ՝  
սպասուհուն առաջնորդութեամբ, իջիր ներ-  
քնատուն, ինձ այնտեղ պիտի գտնես...

## ԺԱ.

Մամուսն տուպուս

Դեռ նրանք վերջացուցել չէին իրանց խօ-  
սակցութիւնն՝ երբ ներս մտաւ Ֆիրատի  
թիկնապահներից մինը...

— Էֆէնտիմ, — առաջ նա, — հայոց ա-  
ռաջնորդը ձեր վսեմութեան մօտ է ուղար-  
կել մի կոյր երգիչ...

— Ո՞ւր է, — հարցունց Ֆիրատ այլայլով,  
իր կուրացած հայրն յիշելով, — ներս հրա-  
ւիրէ...

Թիկնապահը դուրս ելաւ, քիչ յետոյ  
ձեռից բռնած ներս բերեց մի կոյր արևոր:  
Նորեկը ծեր էր և երկու աչքով կոյր, հա-  
զուսար ցնցոտիներ, մի ձեռին գաւազան,  
միւսում սազ:

— Ինձ նորին վսեմութեան մօտ տար,  
— խնդրեց կոյրը թիկնապահից, — պիտի եր-  
կրպագեմ...

— Ո՛չ, ծերունի հայր, — առաջ Ֆիրատ  
ինքն ընդ առաջ երթալով, նրա ձեռից բռ-  
նած իր մօտ բերելով, — նստիր ինձ մօտ և  
երգիր, բայց՝ այսօր ես տխուր երգեր եմ  
ուգում:

— Իմ երգերն արդէն տխուր են, վսե-



մաքայլ էֆէնտիմ,—հառաչելով պատասխանեց երգիչը,—նրանց մէջ չըկայ միմիջեւ թեման յենակէտ, ես երգում եմ սուգ, երգում եմ վիշտ ու ցաւ. սո՛հ, ես ողբում եմ կորած որդուս արեւ:

Սարսուեցաւ Ֆիրատ, սարսափով հայեց ծերունու դէմքին, անծանօթ չէր նա...

Կարծես յանկարծ գլխին կայծակ ընկաւ: Սիրտն ուռաւ զահավէժ տրոփով: Ակնապիշ կոյրին էր նայում՝ արտօսելի աչքերը չռած:

—Մեր սրբազան առաջնորդը,—շարունակեց ծերունին,—իր սպասաւորի ուղեկցութեամբ ցաւերի երգչիս ձեռք վսեմութեան մօտն ուղարկեց,—գնահ,—ասաց,—գնահ Աշըգ —Զէմանի, վսեմափայլ Ֆիրատ փաշան պիտի ախորժի քո երգից, զողողջուն մառնեւրդ ճարտար կերպով սահեցնուր լարէ լար, երգիր քո երգը...

—Շնորհակալ եմ,—ատամների միջից պատասխանեց Ֆիրատ և թիկնապահին դառնալով,—դուրս կ'երթաս, ոչ ոքին ներս չես թողնիլ:

Նա խոր գլուխ տալով հեռացաւ, իսկ Հայթան ծերունու ձեռն իր ձեռաց մէջ առնելով, հարցուց.

—Ո՞ր երկրացի ես հայրիկ:

—Կ. Պոլսեցի եմ, էֆէնտիմ...

—Ֆիրատ,—լսեցաւ դրան ետևից: Փաշան մօտ գնաց:

—Ի՞նչ է, էլիֆ ջան,—հարցուց նա:

—Շատ չուշանաս...

—Սպասիր խնդրեմ, այդտեղ կ'աց, լսիր սրա տխուր երգերն, յետոյ կըգնաս՝ երբ որ ես ասեմ...

Ֆիրատ աշխատում էր բռնել, ծածկել իր արտասուքը, յուզւած չ'երևիլ ծերունուն մօտ: Ուստի սկսեց՝ նրան բաժին հանելով նախաճաշից, խօսիլ տարբեր նիւթերի վրայ: Չըմոռացաւ մատախբայով ոգևորել նրան և ինքը խմել սովորական չափից աւելի, նախաճաշել ախորժակով:

Ծերունին զարմանքով ընդունեց այս անակնկալ հիւրասիրութիւնը, ջերմ կերպով օրհնեց երիտասարդ փաշայի արեւ:

Նախաճաշից յետոյ Հայթա—Ֆիրատ խնդրեց ծերունուց սագն ածել ու երգել: Նա նւագում էր հրաշալի կերպով՝ միայն տաճկական մելամաղձոտ, ողբօրօր եղանակներ: Արդարեւ տխուր էին նրա երգերն և ձայնը դուրեկան. Ֆիրատ այլեւ չըգոյցեց բռնավէժ արտասուքը, լաց էր լինում ան-



աղմուկ, որովհետեւ՝ այժմ հաստատապէս ճանաչած էր իր ալեոր և կոյր բանաստեղծ հօրը:

Ծերունին երգով պատմում էր իր Զօրա որդուն կորուստը, կնոջը կաթածահար մեռանելը, իր աչքերի կուրանալն արտասուելուց:

— Ո՛հ, իրաւի տխուր են քո երգերը՝ հայրիկ, — շնչեց Ֆիրատ մի մեծ բաժակ դատարկելով, — ես էլ լաց եղայ...

— Ոչնչով չեմ մխիթարւում, — պատասխանեց ծերունին հառաչելով, — իմ արեւ է խաւարած...

— Լաւ, սրբազանը բան չ'ասաց որդուդ մասին:

— Որդուս մասի՞ն, — գոռաց ծերն ոտքի ելնելով ուժգնապէս, — որդիս ուր է... էֆէնտիմ...

— Որդուդ, Զօրայիդ մասին չըխօսեցա՞ւ՝ հարցնում եմ...

Շանթահարի պէս բերանը բաց, հիացած մնաց երգիչը, սաղն ընկաւ ձեռիցն ու խորտակւեցաւ, բայց նա յափշտակւած զմայլելի բերկրութեան և խոր տրտմութեան զգացմունքներից՝ չըլսեց անդամ իր նւագարանի փշրելը:

— Կենդանի՞ է Զօրաս, հուսկ ուրեմն հարցուց յուզւած:

— Սրբազանը չասաց...

— Ո՛չ, ինձ ոչինչ չասաց...

— Լաւ ուրեմն, ես հիմա քեզ մի նամակ կըրտամ, կըրտանես սրբազանին, նա քեզ կըպատմէ ամեն ինչ...

Ֆիրատի սիրտն ուռած՝ տրոփում էր խիստ ուժգին: Գլխին մէջ կարծես անիւ էր շրջում, սրտին մէջ ատրաշէկ երկաթ ցըցւում, ձեռ ու ոտը դողդողում, կարօտ, կարեկցութիւն, մասնաւոր ուրախութիւն և խորին ցաւեր իրար խառնւում, մի հրեղէն զանգւած կազմում սրտին մէջ: Արիւնը գլուխն էր խփած, փոքրացած էր բոլոր մարմնով: Հոգին անձուկ գտնելով իր մսեղէն սահմանը, պատուել, թռչել, ծերունուն փառել էր ուզում:

— Քո հայրդ է, անիրա՞ւ, — ասում էր մի ներքին ձայն զանգակի պէս զօղանջելով, — համբուրի՛ր աջն և ամեն ինչ յայտնիր.

— Ո՛չ, — մտածում էր եղկելին, — միայն դու քեզ սպանիր, մի խաւարիր դառած հօրդ արեւ... թող չըճանաչէ քեզ, կորուցած է, կորած թող գիտենայ, կամ՝ մահդ լսէ սրբազանից...



Հայթա — Ֆիրատ ինքն իր բախտն էր անխժուժ:

Անցեալը պատկերացած էր աչքին առաջ, աղի լեզի յիշատակներ դարձ առած, կախւած էին գլխի վերեւ, բայց՝ անողորմներկան, Աքիմիթեան երկաթէ ճանկի պէս կորզուած էր մտաւոր ծովից իր անձն՝ իբր անկայան նաւակ, զարնելով ջախջախում մահմէդական օրէնքի պղնձակուռ պարիսպներին, ինք չըկար որդեսէր ծնողի համար: Նա կարող էր այժմ իր մահով հօրը խորովել:

— Ես կեանք չունիմ, — մտածում էր նա, — ինչո՞ւ յուզեմ նրան, ինչո՞ւ անխոհեմութեամբ հարց տւի...

Ծերունին ապշած էր, նա չէր հաւատում լսածին, չէր երեւակայում քսան տարուց ի վեր կորած իր որդին վերստին գրտնել. այդ յանկարծական մեծ աւետիքը իւրեց նրանից ամեն խորհուրդ, ամեն վիշտ, անսահման բերկրանքով լցւած զգաց ինքզինքը... յանկարծ պատկերացաւ սքանչելագեղ նազելի որդին յիշողութեան բոցախուիւ խորերին մէջ, որի ստւերը կորած էր վշտերի հոսանքում, խաւարած էր սիրան իր աչքերին նման:

Չըհամարձակելով հարցեր տալ փաշային, անձնատուր եղաւ ներքին ոսկեզօծ երջանկութեան զգացման, բիւրաւոր նիրհած յոյսերին, որ սկսել էին ոտքի ելնել, ծածանիլ իմացական լայնածաւալ հորիզոնում:

Ֆիրատ երկար չըսպասեց, դողդողալով հանեց թուղթ ու գրիչ, արտասուելով գրեց հետեւեալ երկտող նամակը.

«ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ ԻՄ»

«Գիտեմ, դիմամբ ուղարկած էք ծերունի հօրս ինձ մօտ, որպէս զի յետ կանգնեմ իմ անդառնալի որոշումից. աւանդ, ծերացած, կուրացած որդեսէր հայրս մահւան սեմին վրայ ինձ պատահեցաւ: Չեմ կարող ապրել: Մեռնում եմ, բայց շիրիմս իսկ այստ պիտի մնայ, ինձ չըպիտի թաղեն իմամներ իրանց զգւելի աղօթքներով: Չեր խնամքին եմ յանձնում կուրացած ծերունուն, սփոփեցէք նրան աւետարանական խօսքերով, աւէք իմ փողերից՝ որչափ որ արժան կըվարկանէք: Որովհետեւ մեռնում եմ, չուզեցի նրան ճանաչումն տալ: Դուք իսկը կասէք նրան, կըյորդորէք անշուշտ թողնել թափառական կեանքը, և ապրել այն գուժարով, որ իր գժբախտ որդուց կըհասնի: Կա-



ընդ եմ յուսալ ձեր հաճոյական ազօթքնե-  
րում հոգիս յիշեխերուդ մասին. ներելի չէ՞  
անձնասպան յուսահատին համար պատարա-  
գով ազօթել, որին ակնկալում է երբեմն ձեր  
սրբազնութեան սիրելի աշակերտը...»

Զօրա—Ֆիրաւ

Ի Կարին ՌՃԶԲ Թւին հայոց

Իսկ Փրկչի 1733 Թ. օգոստոսի 20,

—Ահա նամակը, հայրիկ,—ասաց Հայ-  
թան գիրն իր հօրը տալով,—կրտսնիս սրբ-  
բազանին և կըղաղարիս որդիդ որոնելուց։  
Առ, այս էլ Զօրայիդ մատի մեծագին մա-  
տանին է, ան, քեզ լինի, պահիր յաւէտ  
իրբն յիշատակ...

Ֆիրատ նամակին հետ տւեց ծերին իր  
մատի աղամանդ մատանին. ծերունին յա-  
փշտակութեամբ ընդունեց, շրթներին տա-  
րաւ որդուն ձեռը։

—Ես պէտք է քո ձեռն համբուրեմ՝ հայր-  
իկ,—ուժգնապէս ձեռն յետ քաշելով,—իսկ  
դու իմ ճակատը, իմ երեսն իրբն քո որ-  
դուն... Մատանին մատդ զի՛ր, զգոյշ պահիր  
մեծ արժէք ունի։—Սրբազանը քեզ ամեն  
բան կասէ։

Ծերունին մեքենապէս փարեցաւ որ-

դուն պարանոցով, առանց գիտենալու թէ  
իրն է, իր որոնած Զօրան։ Մօտաւոր տե-  
սութեան յոյսը, անհամբերութիւնը կարծես  
խլել էին նրանից արամաբանելու իրաւունքն  
ու կարողութիւնն՝ եթէ ոչ, պիտի հարցնէր՝  
ինչո՞ւ համբուրում ես ձեռս, քեզ մօտ ի՞նչ  
է շինում որդուս մատանին կայն։ Այլայլած,  
դողդողալով, առանց փշրած սաղն ամենելու,  
շիտկեցաւ դէպի դուռը՝ շնորհակալութիւն  
յայտնելն անգամ մոռացած։ Հայթայի թիկ-  
նապահները տարան նրան Սիմէօն սրբազա-  
նի մօտ։

Հայթա—Ֆիրատ մի քանի բոպէ լաց էր  
լինում հեծեծալով։

—Ֆիրատ ջան,—լսեցաւ դրան ետեից  
ձայնը,—այդ ծերն ո՞վ էր։

—Իմ հայրն էր, էլի՛ք, որովհետեւ պի-  
տի ննջենք յաւէտ, չուղեցի խեղճին աւելի  
ցաւ ազգել, ուղարկեցի Հայոց առաջնորդին  
մօտ, որ իմ վարժապետս է, թող նրանից  
լսէ ամեն բան։

—Ուրեմն դուն է՞լ հայ ես,

—Անշնչաւ... Դու մոռացած ես կրօնդ,  
իսկ ես պահում եմ...

—Ո՛հ ճակատագիր, երկուսս էլ հայոր-  
դի՞ ենք... երկուսս էլ քրիստոնէի զաւակներ,



ինչո՞ւ և ես քեզի չափ չըյարգէի այդ կրօ-  
նը, դաստիարակւած չըլինէի նրանով...

— Է՛հ, ես քրիստոնէի վիժուկ եմ, է-  
լի՛՞Ք, ամեն ինչ վերջացած է այժմ... մեզ  
սպասում է անկուշտ մահն իր բերանը բա-  
ցած: Ես պատրաստ եմ արդէն... ննջարան  
չե՞ս գնում...

— Ահա գնում եմ, բայց՝ սպասիր մին-  
չև էնի՛՜Քէն գայ:

Չայնը հեռացաւ, փիրատ պաշարւեցաւ  
սև մտածմունքներով. սարսափում էր նա:  
Նախ՝ կարծում կատակ, երազ, ապա սոս-  
կալի իրականութեան վերահասու լինում:  
Նրա սիրտը նմանում էր ձմրան բքալից օ-  
րերի: Սև ամպեր կախւած, լեռ ու դաշտ  
ծրարած էին մէզով ու սառուցով, հնչում  
էր ցուրտ և կատաղի քամին դառն ծիծաղով  
մահերգ սուլելով: Նա աչքին առաջն էր բե-  
րում իր տխուր կեանքը, չէր գտնում ոչ մի  
զեղեցիկ, զւարթ օր: Մի առ մի քակում  
էր անցեալի շղթան, անմխիթար, քստմնելի,  
ցաւալի անցքեր ներկայացնում, որոց մէջ  
պահպան հրեշտակի պէս կանգնած էր իր  
պաշտած կինը, էլի՛՜Քը...

— Լաւ է մեռնելն ապրելուց, — մրմնջեց  
նա զարհուրած. — կեանք չէր իմը, իսկ այ-

սուհետե՛ւ եթէ ապրէինք, թռչնաւոր օրեր  
պիտի պաշարէին սեզ, չքանար և այդ միակ  
սփոփանքը...

Մի շիշ ևս մաստիքայ պարպեց, սովո-  
րականի եռապատիկը խմեց, բայց մահւան  
ցուրտ արհաւիրքը չէր թողնում կարծես  
գինովնալու:

Քիչ յետոյ երևեցաւ սևեր հագւած է-  
նի՛՜Քէ սպասուհին փակ դրան մէջ և հեծե-  
ծալով յայտնեց իր սերկայութիւնը: Փիրատ  
տեսաւ նրան.

— Երթա՛նք, — հարցուց:

— Այո՛, — նշանացի և խոր հառաչանքով  
հասկացուց նա:

Հայթան ժպտալով հետևեցաւ աղախի-  
նին, բայց դառն էր և բռնազբօսկի այդ  
ժպիտը: Սպասուհին առաջնորդեց նրան գէ-  
պի էլի՛՜Քի մեծ պահարանը: Փիրատ չըզի-  
տէր իր տան գաղտնիքը: Այդ պահարանի  
ետին տախտակամածը մի գաղտնի դուռ էր,  
կողպւած անտեսանելի, ծածուկ փականքով,  
որ միայն գիտցողին էր յայտնի: Սպասու-  
հին հրեց երեացող միակ բևեռի ծայրը գէ-  
պի ներս, բացւեցաւ իսկոյն մի խոր մթու-  
թեամբ ողողուն այրի պէս բան: Մոմի դրժ-  
գոյն լուսով ելան մի քանի սանդուղքներից,



ապա կանգնեցան մի երկաթէ դրան առաջ: Փիրատ յետ հրեց: Մի փառաւոր, լուսաւորւած դահլիճի մէջ գտաւ ինքզինք, որ ողողւած էր անուշահոտ բուրկէնների թրմընցուցիչ բոյրերով:

Մտորելըեայ դահլիճը լուսաւորւած էր երկու հաստ կերտներով, որ մարդաչափ աշտանակների ծայրին ձեռնաչափ բոցեր էին արծակում և լուսաւորում: Փիրատ աչքը շուրջ ածեց, իրանց ննջարանի բոլոր կանկարասին այնտեղ տեսաւ փոխադրւած: Փրոււած էր անկողինը գեղանկար մանճակալին վրայ, ուր պառկած էր էլիֆ:

Սպասունին լալազին համբուրեց իր տիրոջ ձեռն և սահեցաւ մթութեան մէջ փրկուելով:

— Էլիֆէ, — ասաց Փիրատ դողդոջուն ձայնով, — մինչև մահդ կըմնաս պալատում, ամեն ժամանակ բուրկէն և խունկ կըբերես տիրոջդ ու տիրուհուդ:

Երկաթէ դուռը գոցեցաւ դրանից:

Հայթան անդիմադրելի զգացումով մտեցաւ ամուսնին, համբուրեց ճակատը, բայց՝ էլիֆ լուռ էր: Մտածեց ձայնել նրան:

— Ո՛չ, — կանխեց ներքին ձայնը, — թող ննջէ, ինչո՞ւ տեսնես նրա մահը, վեր առ

սրւակը, խմիր և ննջիր սիրելոյդ հետ:

Տիկինն իր ասածին պէս մի սրւակ կարմիր հեղուկ և մի շիշ մաստիքայ դրած էր գլխին վերև՝ փոսկը փոքրիկ եռոտանուն վրայ: Փիրատ սրւակը դատարկեց օղուն մէջ, ստացաւ մի տեսակ բոցափայլ ըմպելի, դրեց շրթունքին, իմի ումպ խմեց...

— Սա դուռ օղի է, — մտածեց նա և արագապէս հանւելով մտաւ անկողին, ձայնեց սիրելուն, հրէց դէս ու դէն, ձայն չրկար, թէև մարմինը տաք էր, բայց զգաց որ դադարած է իր էլիֆի սիրտը տրոփելուց:

Փիրատ համբուրեց նրա շրթունքներից, երկու կաթիլ արտասուք սահեցան աչքերից, թեքերին մէջ առաւ իր չքնաղ հուրի զուխը, մտովի ասաց «Ընկալ փայտութեամբ» իր սիրած Նարեկացու հատւածը:

— Չլինի՞ թէ սա թմրեցուցիչ էր, էլիֆ, ուզում էր իմ սէրը փորձել, հապա ինչո՞ւ ոչ մի ցաւ չեմ զգում... այո՛, նա փորձում է իմ սէրը... սա թմրեցուցիչ նիւթ էր... թմրում եմ... չեմ կարող ոտներս շարժել... անուշ քունը ծանրանում է արտևանունքիս վրայ... փափագում եմ ննջել... և ինչո՞ւ չեմ ննջում: Ո՛ւր է մահը... ո՞ւր է նրա դառ-





նութիւնը... Էհ, սա մահ չէ... մի աննկա-  
րագրելի քաղցր քուն...

Հետզհետէ նւաղում էր նրա շնչառու-  
թեան կանոնաւոր շշուկը. մի քանի րոպէ  
յետոյ տիրեց խոր լռութիւն: Գոցւեցան  
Հայթա—Ֆիրառի աչքերը:

Ճարպեղէն մոմի տոգոյն փայլով երե-  
ւում էին այր ու կին իրար գրկած, ննջած:  
Բայց դանլիճն արդէն ողողւած էր մահւան  
արհաւիրքով:

Միայն մոմերը փայլում էին վազրի  
աչքերի սէս դուրանի զոհերին վերե:





ՀԵՂԻՆԱԿԻ ՏՊԱԳՐՈՒՄԾ ԵՐԿԵՐԸ

Կո

1. Բաղդի մեկ խաղ 4. Պօլիս գինն է 5 ղրշ.
2. Անգգամունին 2 հատոր. իբրև թերթոն  
հրատարակուած.
3. Խան-Միքան, (սպառուած) գինն է . . .
4. Լեօն-կայսր . . . . .
5. Հալթա-Ֆիքուս . . . . .

Պատրաստ են սպագրութեան համար

1. Ֆերիսե 4 հատոր. Տաճկահայերի կեանքից
2. Ծովանեկ 2 հատոր » » »
3. Երանեակ, (սպառմ. վէպ) » » »
4. Շահան-Ջիկիս » » » »
5. Սալիւմ-Սալի » » » »
6. Սասուն նիւթեր նորագ. սպառմ. համար.  
«Մուրճ»-ից » » » »
7. Երգեր, սպառմուածքներ՝ տպագրուած և անտի-

Գինն է 35 ԿՈՊ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0361525



54329